ՍՈՒՐԻԿ ԱՄՄԱՐՅԱՆ

ՀԱՅԿՅԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՀՄ

ԱՌԱՋԻՆ ՀԱՅԿՅԱՆ ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չորրորդ լրամշակում

ԱՐՄԱՎԻՐ – 2013-2014 թթ

ԲՈՎԱՆԴԱԿԱՑԱՆԿ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հայկազունիների արքայատոհմի պատմագրությունը – 3:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հայկյան տոմար: Արքայացանկեր: Վիմաքար արձանագրություններ – 6: Մատենագրություն: Մովսես Խորենացի: «Պատմություն Հայոց» և ոչ միայն…7:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

«Չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության» - 23: Հայկ – 23: Ոչ հայկազունիների 300-ամյա իշխանություն: Հայկյանների իշխանության վերահաստատումը – 23: Հայկյան Արամ - 24: Աուրի տիրակալ Նինոս(ներ) -23: Հայկյան Արա – Արա Գեղեցիկ -23: Համաժամանակյա արքաներ – 25:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Արքայաքական դիվաններ եվ վիմաքարեր: Աբգար թագավորի Եդեսիայի դիվանը: Դիվանների միգրացիան – 25: Արքայական դիվաններ: Դիվանների ոչնցացումը -27:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նախաքրիստոնեական դարաշրջանների հայոց պատմության էջերի ոչնչացումը- 28: Պատմական դեմքերի անունների կրկնություններ: Երբ են խոսել եվ երբ են լռել միջագետքյան աղբյուրները – 31:

ԲԱԺԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Համաժամանակյա ժամանակագրություններ – 37: Տարեգրությունների շարը ըստ Խորենացու -39: Տարեգրությունների լաբիրինթոսում - 40: Համաշխարհային պատմագրություններ – 42: Առաջին հայկյանների և պետական կառույցների ժամանակագրությունները – 47:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Հայկյան Արամի դիվանը – 49: Գիրք առաջինի ամփոփագիրը – 51:

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆԻՆԵՐԻ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատմիչներ Մովսես Խորենացու Հայոց պատմության և Սեբեոսի Պատմության էջերում տեղ գտած **Հայկյան արքայատոհմի նահապետների**[1] ցանկը կռվախնձոր է, մի կողմից մի մեծ խումբ հայ պատմաբանների, մյուս կողմից, հայկական գիտական կենտրոնների միջև: Վիճարկման հիմնական թիրախներն են **Խորենացու** աղբյուր **Մար Աբասը**[2] և նրանից օգտված պատմիչների օգտագործած աղբյուրները, աղբյուրների հեղինակների պատմականությունն ու ճանաչելությունը: Դրա հետ մեկտեղ, դատափետելով Խորենացուն և նրա աղբյուր Մար Աբասին, նաև Հայկազուն արքաների ժամանակագրությունը կազմած **Մ. Չամչյանին**, ինչպես կտեսնեք հետագա շարադրանքից, ուսումնասիրողների մեծ մասը ունեցել է գայթակղություն ստեղծել «սեփական Արամի կամ Արա Գեղեցիկի կերպարները», անգամ կառուցել են Հայկազունի արքայատոհմի ժամանակագրությունը:

Դժվար չէ ենթադրել, որ ժողովրդի ու պատմագետների մեջ այնքան մեծ է Հայկազունի արքայատոհմի ներկայացուցիչներ Արամ և Արա նահապետների նկատմամբ հետաքրքրությունը, որ «Հայկյան Արամի և Արա Գեղեցիկի թեման», եղել է և դեռ երկար տարիներ մնալու է, պատմագիտության կիզակետում: Ինչո՞ւ: Կասկածանքի հիմքը դրել են հայ պատմիչները. Սեբեոսը, ի թիվս այլ Հայկազունի նահապետների, թվարկել է միայն Արամ նահապետի անունը: Խորենացին, ընդհակառակը, պանծացրել է Հայկյան Արամին, Արամին համարելով Հայկից հետո հայոց երկրորդ անվանադիր նախնի:

Հենց Արամ Հայկյանի, **պատմականության և ոչ պատմականության**, հանգամանք է դարձել Խորենացու քննադատների թիրախը. Պատմահորը դատափետողները բերում են «հիմնավորումները», իբրև թե մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 19-18-րդ դարերում, Հայկական լեռնաշխարհում չէր կարող գոյություն ունենալ Արամի նման հզոր թագավոր, կամ թե հայերը չէին կարող ունենալ հեռահար արշավանքներ կատարելու ընդունակ բանակներ[3]:

Զարմանալի մասնագետներ են մեր պատմաբանները՝ կրակի տակ առնելով Խորենացու Հայկյան Արամի պատմագրությունը, որևէ մեկը կասկածի տակ չի առել 1- 4-րդ դարերի հույն պատմիչներին վաղնջական ժամանակների Միջագետի տիրակալների մասին հորինվածքներին, թե ինչպես կարող էին այդ նույն Հայքին հարևան աքքադացիների, Նինոս թագավորի և Շամիրամի բանակները հասնել Հյուսիսային Կովկաս կամ Աֆղանստան[4], բայց հայոց բանակները այդ նույն դարերում ինչո՞ւ չէին կարող, և դրանց շատ դարեր և նույնիսկ հազարամյակ առաջ, պաշտպանել իրենց սահմանները կամ դուրս գալ այդ սահմաններից և ռազմի դաշտում պաշտպանել սեփական երկրի շահերը՝ իրենց ժողովրդի ազատությունն և անկախությունը:

Այս հարցերը մնացել են անպատասխան, և որևէ ուսումնասիրող պատասխան չի տալիս նաև այն հարցադրումներին, թե 3-րդ հազարամյակի վերջերին և 2-րդ հազարամյակի ընթացքում, խուրիները և կուտիները[5], ինչու չէին կարող էին ունենալ պետություն և պետականություն, մանավանդ թագավոր, երբ, ըստ ասուրա-բաբելական արձանագրությունների, խուրիների և կուտիների «կայսրությունը», ուշադրություն դարձրեք՝ «**կայս-**

---

[1] **Ծանոթագրություն**: Տեքստում **կապույտով** ընդգծված են հեղինակի կողմից ընդունել, մնացած գույներով՝ **կասկածել փաստագրումներն ու մեկնաբանությունները:**

[2] **Մար Աբաս Կատինա** կամ **Մար Աբաս Մծուրնացի:**

[3] **Ա. Քոսյան**: **Արամ նահապետը կապադովկիայում:**

[4] **Юстин** (Помпея Трога «Филиппова история»):

[5] **Հայերի** տված ասուրացիների անվանումներ են:

ությունը», հաջողությամբ դիմակայել է «հզոր Ասորեստանին»[6] կամ ասուրա-բաբելական դաշինքի զորքերին, երբ վերջիններս պարբերաբար ավերում էին հյուսիսային հարևանի տարածքները:

Մենք դեռ կանդրադառնանք **ասորաց**[7] Նինոս Ա կամ **Շամշի-Ադադ Ա**[8] արքայի թողած արձանագրությունների հավաստիության հարցին: Միանգամից ասենք, որ դրանցով ստեղծված 2-րդ հազարամյակի 19-18-րդ դարերի պատմագրությունը Նինոս Ա հարստության տիրակալին է «**վավերագրել**», և, իրեն, և, միայն **Շամշի-Ադադ Ա** է ներկայացնել **Միջագետքի** և **Հին Արևելքի «հզոր տիրակալ» արքա**:

-Ինչու և ինչպես է այդպես ստացվել,- հարցին դեռ հինգերորդ դարում պարզորոշ բացատրություն է տվել Խորենացին, գրելով, որ **սնապարծ Նինոսը** սեպագրիր արձանագրություններից ջնջել տվեց Հայկյան Արամի անունը, գրել տալով իր անունը:

Ի տեղի,ասենք նաև, որ Խորենացին սահմանել էր համաժամանակյա պատմական գործիչների ցանկը՝ հրեաների նախահայր **Աբրահամ,** ասորաց հարստության հիմնադիր **Նինոս** Ա (Շամիշ-Ադադ Ա) և **Արամ**[9], և որտեղ պարզորոշ կեղով, այն էլ Նինվեի վավերագրերի հիման վրա, արձանագրված է, որ **Նինոսը ենթակա էր Հայկյան Արամին**, իսկ նրա եկիրը ընկած էր **Հայկական աշխարհակալության լծի տակ**, այսինքն այն ինչ որ գրված է, և գրում են Նինոս Ա կամ Շամշի-Ադադ Ա ասորաց արքայի «պատմագրության» առթիվ, տուրք է տրված սովորական պատմագրության կեղծիքին:

Գաղտնիք բացած չենք լինի, եթե փաստագրենք, թե՛ Հայաստանի և թե՛ համաշխահային պատմագրությունը, գրվել ու գրվում է, հիմք ընդունելով **հնագիտական վավերագրերը**՝ անտեսելով **պատմագրությունը**, ինչպիսին, օրինակ Մովսես Խորենացու հինգերորդ դարում ստեղծած հայոց հիմնարար պատմագրությունն է: Ըստ էության հայկական, այդ թվում 5-րդ դարում Խորենացու գրած պատմագրությունը, բոլոր առումներով, **տանուլ է տվել և տանուլ է տալիս**, հետագա դարերում հայտնաբերված հնագիտական գտածուններին: Անգամ կարևոր չէ, սեպագիր արձանագրությունները կեղծել են, թե ոչ, ինչպես կտեսնենք Նինոս Ա և **խեթերի Անիտա թագավորի** օրինակներով, երբ հայկական միջնադարյան մատենագրությունը իրադարձությունները ներկայացրել են այնպես, ինչպես դրանք եղել են, այն էլ Նինվեի դիվանում պահված վավերագրերի հիման, և ինչն ազնվորեն արձանագրել է ասորի Մար Աբասը՝ Խորենացու հիմնական աղբյուրը:

Արձանագրենք, որ ներկայումս, բացառությամբ հայ պատմիչների պատմագրությանը, չկան 3-2 հազարամյակների հայկազունիների արքայատոհմի գոյությունը վավերագրող սեպագիր արձանագրություն կամ գրավոր մատյաններ: Հնագիտական աղբյուրների բացակակայությունը այն հիմնական դրդապատճառն է, որով առ ոչինչ է համարվել հայկյանների և հայկազունիների տոհմի պատմագրության մասին հայ պատմիչների պատմագրությունը, և դրան հակառակ, կա՛ն նույն հազարամյակների ասսուրական և խեթական սեպագիր արձանագրություններ, որով Հին Արևելքի գլխավոր քաղաքական դեմքեր են համարվում ասորաց արքա **Նինոս Ա՝ Շամշի-Ադադ Ա** և խեթերի արքա Պայապսիս Քաղյանը՝ **Անիտան**, բայց **Արամը և նոր որդի Արա Գեղեցիկը չեն համարվում պատմական անձեր**:

Այս բնագավառում ստեղծվել է պատմագիտության անհամատեղել և անհամապատասխան իրավիճակ, ստացվում է, որ ասուրները և խեթերը 2-րդ հազարամյակում հոգացել են ստեղծել իրենց և իրենց ժողովրդի պատմագրությունը, իսկ նրանց հարևան հայերը (հ(խ)ուրիները)՝ չեն ստեղծել ոչինչ: Արդեն գրել ենք, որ Խորենացին բացատրել է, թե ինչու է ասորաց արձանագրություններից բացակայում **Արամի** անունը. **Նինոսի հրամանով**

---

[6] **Ասորեստան** տեղանունը այստեղ պայմանական անվանում է: Հնում այն հանդես է եկել Նինվեի կամ Աշշուրի տիրակալներ անվանումով, սակայն պարզ և հասկանալի լինելու դրդապատճառով, մենք այստեղ որոշեցինք օգտագործել **Ասորեստան** անվանումը, համապատասխան պատմական գրականությանը:

[7] **Ասորաց երկիր**՝ իմ կողմից ընտրած պայմանական անվանում է, քանզի **իմ հարևան ասորիները** իրենք իրենց կորուսյալ հայրենիքին տալիս են «**Ասորաց երկիր**» անվանումը:

[8] Садаев Д.Ч.**История древней Ассирии**.

[9] **Մ. Խորենացի: ՊՀ:** էջ 75-77:

այրվել և դադարեցրին են Արամի անունը, և Նինոսի հրամայել էր «*գրել միայն այն, ինչ որ իրեն է վերաբերվում*»[10]: Սա ասսուրական աղբյուրների մասով:

Հայ ժողովուրդը զրկվեց իր նախորդ դարաշրջանների լինելիության փաստարկումներից՝ սեպագիր և գրավոր մատյաններից, երբ քրիստոնեության ընդունման տարիներին, ականատեսների վկայությամբ, **այնքան գիրք էին լցրել Տիգրիսի և Եփրատի մեջ,** որ **Եփրատի ջուրը ուրիշ հունով էր գնում, իբրև թե անպիտան պատմություններ՝ «հեթանոսական գիր ու գրականություն էր»**: Մեր քրիստոնեա պատմիչները չեն գրել, իսկ մեր ուսումնասիրող պատմաբանները անտեսում են այն իրողությունը:

Մեր ոչ բարեկամները հաշվի չէի առել այն իրողություն, որ հայերի մեջ կգտնվեն պատմագիր պատմիչներ, որոնք կարող են, այս կամ այն կեպ, վերականգնել բացակա սեպագրերի կամ մատյանների բաց մնացած սպիտակ էջերը՝ այլ ժողովուրդների դիվաններից գտնելով և վերստեղծելով հայ նահապետների, արքաների և պետական միավորումների պատմագրությունը:

Ինչպես չի կարելի հերքել, այնպես էլ չի կարելի հաստատել, այնուամենայնիվ, չի կարելի անտեսել հայ պատմիչների այն վկայությունները, որ Հայաստանի քրիստոնեության ընդունման դարաշրջանում (4-5-րդ դարեր, և մինչև 7-րդ դարը), Հայաստանի ողջ տարածքում **ոչնչացման նպատակով** անուղղակի պատերազմ է ընթացել հայոց վաղնջական ժամանակների դիվանների և արխիվների՝ պատմական վավերագրերը, մատյանները և արձանագրություններ-վիմաքարերը ոչնչացնելու ուղղությամբ:

3-րդից 1-ին հազարամյակների հայոց արքաների և մեհյանների դիվանները և արխիվները անխնա ոչնցացվել են, թե՛ դավանափոխ հայ առաջին քրիստոնեաների, և թե՛ օտար նվաճողներ կողմից (տարվել են այլ երկիր կամ արձանագրվել են իրենց՝ օտար արքաների անուններով): Մեծ Հայքի տարածքում տեղի ունեցած հայ **հեթանոսական կրոնի** և **առաջին մոռելանդ քրիստոնեաներ** միջև տեղի ունեցած **առաջին կրոնական համաշխարհային պատերազմում**[11], Հայ ժողովուրդը զրկվեց իր սեփական, այդ թվում վաղնջական ժամանակների պատմական վավերագրեր[12] ունենալու շնորհից:

3-2 հազարամյակների Հայկազուն արքայատոհմի և առաջին հայկյանների մասին պատմագրության վերականգնման խնդրով, ինչպես կտեսնենք հետագայում, զբաղվել են հայ և օտար մեկ տասյակից ավելի պատմիչներ, սակայն հայ ժողովրդի պատմությունը ստեղծել է **Պատմահայ Խորենացին** և **Սեբեոսը**: Մյուս հայ պատմիչները կրկնում կամ լրացրել են Խորենացուն և Սեբեոսին, մեջբերելով այլ աղբյուրներ ևս:

19-20-րդ դարերում զարգացում և մեծ թափ հավաքեց շումերագիտություն, հայագիտությունը, ասուրագիտությունը, եգիպտագիտությունը, բաբելագիտություն և խեթագիտությունը: Զարմանալի օրինաչափությամբ, բոլորը խոսքները մեկ արած, անուղղակի կերպով, անգամ անունը չտալով, հարվածի սլաքն ուղղեցին նախորդ դարերի հայագիտության ձեռքերումների[13], մանավանդ Խորենացու և Սեբեոսի առաջին հայկյանների՝ Հայկական լեռնաշխարհում ստեղծած Հայքի թագավորության պատմագրության դեմ:

Պայքարի կրակը բորբոքվեց, իբրև-թե «**գիտական հիմքի վրա դրվեց**» սովետա-խորհրդային ստալինյան խեղաթուրված «հայագիտությանը»՝ «կատարելագործման հասցնելով» Խորենացու պատմագրությունը «ի սկզբանե» մերժելու միտումները:

Այնուհանդերձ, եկեք միասին ձեռնարկենք մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների Հին Արևելքի մասին գոյություն ունեցող հայ և օտար պատմագրության «անձնագրավորումը», և ինքներդ կհամոզվեք, որ, առաջին իսկ քննական մոտեցմամբ, ամբողջապես փլզվում է առաջին հայկյանների գոյության մերժողական պատմագրության ամրոցը:

---

[10] **Մ. Խորենացի: Պատմություն Հայոց** (այսուհետ՝ ՀՊ): Էջ՝ 96-97:

[11] **Հովհան Մամիկոնյան** (VII–VIII դարեր), միջնադարյան հայ պատմիչ: «**Տարոնի պատմություն**»:

[12] **Արամ Ավետյան**: **Պատմական արդարություն**::

[13] Մխիթարյան միաբանության հայագ. ուսումնասիրություններ և հայկյանների ժամանակագրություններ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿՅԱՆ ՏՈՄԱՐ: ԱՐՔԱՅԱՅԱՆԿԵՐ: ՎԻՄԱՔԱՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մար Աբասի, Խորենացու, Ագաթանգեղոսի և Սեբեոսի Հայկազունիների արքայացանկի գոյության մասին փաստագրումները հավաստում են, որ անտիկ շրջանում հայերը ունեցել թե իրենց արքաների ցանկը և Հայկազունիների ժամանակագրությունը՝ կազմված Հին հայկական Տոմարի[14] համաձայն:

Թեպետ Խորենացին բողոքում էր «*մեր թագավորների և մյուս նախիների դեպի գիտությունն ունեցած անմտությունը…որ նրանցից ոչ ոք հոգ չտարավ գրի առնելու*»՝ «*…մեր երկրում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ*», սակայն Մար Աբասը և Սեբեոսը փաստագրել են, որ յուրաքանչյուր դարաշրջանում հայոց արքաները կազմվել են հայոց նախնիների արքայացանկ, և այն սեղագրվել էր վիմաքարի[15] վրա, իսկ Տրդատ թագավորը ունեցել է արքայական արխիվներ[16]: Գահակալների նոր ցանկը կազմելիս կամ հուշաքարը նորացնելիս, «հայոց ժամանակի սկիզբը» համարվել է մեկ անխախտ իրադարձություն՝ Հայկի հաղթանակը Բել-Նեվբոթի դեմ. Հայկը հայոց անվանադիր նախնին էր, իսկ հայկական պետության ստեղծող ու հիմնադիր է համարվել Արամ Հայկյան թագավորը, Արան՝ հերոսաբար զոհված հայոց արքան:

Գլխավոր Քրմերի և Հայկազունի նահապետ-թագավորների գահակալման ցանկեր, իրենց հերթին, կազմել են Հայք-Արատտայի քրմերը: Սակայն քրիստոնեա պատմիչները լռել են և **քրմերի արխիվների** մասին չունեն որևէ հիշատակում, քանզի նրանց և քրմերի միջև կար ոխերիմ թշնամությունը: Միամտություն և պատմական անդարդարությունը կլիներ բացառելը, թե հայոց քրմերը չունեին իրենց և հայ արքաների կազմած ցանկերը:

Ագաթանգեղոսի թողած մի հիշեցումից հասկանալի է դառնում, որ հայոց արքայացանկերը չեն ունեցել որոշակի ժամանակագրություն - թվայնացում, փոխարենը նշվել են թագավորման տարիները և դրանք «վկայագրվել և հաստատագրվել են» տվյալ ժամանակաշրջանի հարևան երկրի արքայացանկով[17]:

Թվով 17 հայ պատմիչ - ժամանակագիրները հետ չեն մնացել իրենց հույն և ասորի գործընկերներից՝ կազմելով Ատվածաշնչյան աշխարհստեղծման, ինչպես նաև հայ ժողովրդի պատմագրության սենեական ժամանակագրությունները: Եթե օտարները դրանք սկսել են աշխարարարման Ադամ-Եվայի շրջանից, ապա հայ ժամանակագիրները հայկական - հայկյան ժամանակագրության սկիզբ են համարել մ.թ.ա. 25-րդ դարը՝ Հայկի[18] և Բելի պատերազմի «դարաշրջանը», այսինքն, հայկյան տոմարով՝ Համաշխարհային պատմության ասպարեզում հանդես գալու հանգրվան է ընդունել մ.թ.ա. 25-րդ դարը.

♣ Հայկը, որը մ.թ.ա. 25-րդ դարում հաղթել է Բելին[19]: Միավորել է Լեռաշխարհի ցեղախմբերին, հիմնադրել է Հայք քաղաքական կազմավորումը:

---

[14] **Հին հայկական տոմար,ինտ. Կայք:**

[15] **Սեբեոս**: Պատմություն: Նույն տեղը:

[16] **Է. Դանիելյան**: ԵՊՀ Հայագիտական հետազ. ինս. «Որմիզդ-Արտաշիրը հրամայել է սպասավորների վառել որմիզդական հուրը հին հայոց շաշտամունքային կենտրոնում՝ Բագրևանդի գավառի Բագրավանի տաճարի մեջ: Հնում հայոց նախնիների պատկերով Արմավիրում կանգնեցված և այնտեղից Բագարան, այնուհետև Արտաշատ տեղափոխված արձանները նա հրամայում է փշրել, ինչպես նաև Արտաշես Ա սահմանաքարերի գրությունները փոխել իր անունով»:

[17] **Ջուլիետա Էյնաթյան**: «Պատճէն տոմարի հայոց մեծացը» եվ նրա մի քանի մեկնությունները:

Ս.Ասմարյան: Այն որ մեծ տարբերություններ կան հայկական և հարևան երկրների գահակալ արքաների տարեթվերի միջև, բացատրվում է այն հանգամանքներով, որ քրիստոնեության ընդունումից հետո 200 տարի շարունակ, Հայաստանում օգտագործվել է **ասորական** և **հունական** (Ալեքսանդրյան) տոմարները, և միայն 6-րդ դարում ստեղծվեց «հայոց Մեծ տոմարը կամ հայկական թվարկությունը»:

[18] **Պ. Հերունի**: Հայոց կենսար Հայկը: Նույն տեղը:

[19] **Բել**: Նեբրովթ անունով՝ որպես քաջ և հսկա որսորդ, որը, հռչակվելով Բաբելոնի առաջին թագավոր, ընդարձակել է տիրակալությունը: Բելի կերպարն արտացոլվել է «Հայկ և Բել» հայ դիցաբանական առասպելի մեջ, և հայկական աղբյուրներից է ներմուծվել համաշխահային պատմագրության էջերը:

♣ հայկյան տոմարով է փաստագրվել Ասորեստանի տիրակալ Բելի և Հայկ նահապետ պատերազմը, Հայկի հաղթանակը, նաև Հայկազունիների արքայատոհմի հաստատվել Արարատյան դաշտում:

♣ հայկյան տոմարով է սահմանվել Հայկազունի նահապետների ցանկը:

♣ հայկյան տոմարով է հաստատված, որ մ.թ.ա. 25-րդից մինչև մ.թ.ա. 16-րդ դարը Հայք - Արատտայում իշխում էին Հայկազունի արքայատոհմի սերունդները, ստեղծելով ևս 5 - 7 քաղաքական միավորումներ:

♣ հայկյան տոմարը ընդունում է Խորենացու կողմից Հայքում Արամ Հայկյանի գլխավորած միացյալ հայկական պետության ստեղծման փաստը:

♣ հայկյան տարեգրությունը ընդունում է Խորենացու և Սեբեոսի կողմից հիշատակված և Ագաթանգեղոսի կողմից վավերագրված՝ հայոց առաջին և պարսից թագավորների վիմաքար-հուշաքարի առկայությունը Մծբին քաղաքում, հայոց նահապետների հետևյալ հերթականությամբ, Հայկ, Արմենակ, Արամայիս, Ամասիա, Գեղամ, Հարմա Արամ, Արա Գեղեցիկ[20]:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ:
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ» ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ…

Թռուցիկ հայացք ձգելով հայ-ասսուրական և հայ-խեթական մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 20-17-րդ դարերի քաղաքական իրադարձությունների առթիվ հրապարակի վրա եղած վավերագրերին ու մատենագրություններին, դժվար չէ նկատել.

♣Նինոս-Շամշի-Ադադ Ա արձանագրություն է թողել միայն իր մասին, իրեն քաջագործությունների և «լայնածավալ» նվաճումների մասին, իրեն է համարել ասուրական պետության հիմնադիրը[21], բայց ոչինչ չի գրել Արամի և հայ-ասուրական անհաշտ դիմակայության մասին, չի հիշատակել նաև Անիտայի, ինչպես նաև հայերի և խեթերի գոյություն մասին: Ի դեպ, Շամշի-Ադադ Ա մոտ բացակայում է սեպագրման և իրադարձությունների ժամանակագրությունը և արձանագրության լոսապատճենումը: Այսինքն այն կարելի է վերագրել հինգը Շամշի-Ադադ արքաներից ցանկացած Նինոսի[22], բայց Ասորեստանի պատմագիրները այդ «տրաֆարատային տեքստը»[23] արձանագրել են Շամշի-Ադադ Ա - Նինոս Ա վրա:

Արամի կողմից միջագետքյան երկրներին ընկճելուց հետո, Նինվեն ընկնում է սկզից հայկական, ապա Բաբելոնի արքա Համմուրապի արքայի ազդեցության տակ: Լռում են նաև ասսուրական արձանագրությունները: Այս ընթացքում հզորություն է հավաքում Բաբելոնը՝ անհանգստացնելով Հայքի թագավորությանը:

♣ Անիտայի (Տիտանյան Պայապսիս Քաղյան) սեպագրել է միայն իրեն նվաճումների տարեգրությունը[24], հիշատակություն չունի ասսուրա-խեթական և խեթա-հայկական հակամարտության մասին, բայց ակնհայտ է մի իրողություն՝ Արամի կողմից խեթերի երկիրը նվաճելուց հետո ավելի քան 140 տարի, «լռում են» խեթերի արձանագրությունները:

2-րդ հազարամյակի 20-18-րդ դդ իրադարձությունների տարեգրությունը, Նինվեի արխիվի հիման վրա, մատենագրել են Մար Աբասը և Խորենացին (նաև Սեբեոսը)՝ երբ կենաց ու մահու պայքար էր մղվում առաջին հայկյաններից՝ Հայքի թագավորության արքաներ

---

[20] Սեբեոսը արքայացանկից բերում է հինգը անուն:

[21] Садаев Д.Ч.История древней Ассирии. Шамши-Адад I.

[22] К.Рыжов. Все монархи мира. « Шамши-Адад I, царь Ассирии (Месопотамия), правивший в 1813-1781 гг. ….был вождем одного из аморейских племен - ханейцев. Ему принадлежали также небольшие города.

Тиханович Ю.Н., Козленко А.В. Древний Восток. «…Шамши-Адад I создал обширную державу, которая охватывала территорию от Иранского нагорья до Центральной Сирии. В разгар своего могущества он называл себя шаркиш-шати ("царь множеств")».

[23] Սեպագրի «տրաֆարատային տեքստ»՝ միևնույն ձևաչափ ունեցող, աստվածների արված զոհաբերություններ և նվաճումների իրադարություներ վավերագրող սեպագիր արձանագրություն:

[24] Авдиев В.И. История Древнего Востока. Хеттское государство.

Հայկյան Արամի և Արա Գեղեցիկի և Նինվեի գահը բռնազավթած ամորեացի **Նինոս** արքայի միջև: Հայ պատմիչները ավելի մանրամասը, քան վավերագրել են ասուրական և խեթական արձանագրությունները, ներկայացրել են Հայկյան Արամի բանակների մարա-մեդիական ցեղախմբերի, Նինոսի և Անիտայի՝ Պայապսիս Քաղյան արքայի դեմ մղած պատերազմների մանրամասները, նաև հայ-ասուրական և հայ - խեթական հակամարտության պատճառները, ներկայացնելով նաև հայկական միասնական պետության ձևավորման տարեգրությունը:

Խորենացին միջնադարյան միակ պատմիչն է, որը օգտվելով մի շարք աղբյուրներից, մանավանդ Մար Աբասի Նինվեի դիվանից քաղած տարեգրությունների վավերագրից, և Խորենացուն է հաջողվել ամբողջապես վերականգնել 3-րդ հազարամյակի 25-րդ դարում Բաբելոնի աշտակաշինությունից սկսած Միջագետքի և Հայքի, Հայքի և հարևանների հետ հայկյան նահապետ-արքաների փոխհարաբերությունների պատմագրությունը: Խորենացու մեծությունը կայանում է նրանում, որ նա իր ներկայացրած պատմագրությունը համադրել գոյություն ունեցող աղբյուրների, մանավանդ ս. գրքի հետ. «*Նրան կոչել են հայ Հերեդոտ: Հայերը եթե փոքր-ինչ սնափառություն* ունեն, *իրավունք ունեն այսպես կոչելու նրան. նա արևելյան ազգերի պատմական գրականության մեջ իր հնությամբ առաջիններից մեկն է ս. Գրքից հետո*»[25]: Նրա «Հայոց պատմություն»-ը հայ միջնադարյան միակ պատմագրությունն է, որտեղ Խորենացին օգտագործել է հայտնի և անհայտ պատմագիտական բազմաթիվ գրավոր աղբյուրներ, նաև ժողովրդական բանավոր խոսքը՝ ժողովրդական բանահյուսությանը, ստեղծելով հայ ժողովրդի ամբողջական գիտականորեն փաստագրված պատմություն[26].

♣ Խորենացին սահմանել է համաժամանակագրություն՝ ժամանակակիցներ էին Հայկը և Բելը (Նեվբրովթը[27]), ինչը մեր կազմած ժամանակագրությամբ, համընկնում է 3-րդ հազարամյակի 25-րդ դարին կամ «բուն հայոց պատմության»[28] սկզբնավորմանը:

♣ Համաժամակակիցներ էին եբրայեցի Աբահամը, ամորեացի Նինոսը[29] և Հայկյան Արամը և Արա Գեղեցիկը, ինչը մեր կազմած ժամանակագրությամբ համընկնում է 2-րդ հազարամյակի 20-18-րդ դարերին:

♣ Խորենացին, իրեն բոլոր պակասություններով հանդերձ, ստեղծել է Հայկյան Արամի և նրա ախոյանների՝ Նինվեի (Ասորեստանի), մարա-մեդիական ցեղախմբերի, նաև խեթերի հավակնոտ արքա Անիտայի՝ Պայապսիս Քաղյան դեմ Հայկյան Արամի 58-ամյա պայքարի, մեր համոզմամբ՝ 2-րդ հազարամյակի 19 - 18-րդ դարերի ամբողջական տարեգրությունը. «Աբյուդենոս Ասորեստանի թագավորները կթվարկե Բելեն մինչև Նինոս, որ կգտնվի թե Եվսեբիոսի և թե Խորենացիի մեջ: Սակայն մեր պատմահայրը միևնույն Աբյուդենոսեն կառնե հայերու ալ ցանկը, Հայկեն մինչև Արա գեղեցիկ, որ Եվսեբիոսը չունի: Խորենացին կհավելու թե, «Եվ սա ճշմարիտ է, ոչ ոք չկասկածի, որովհետև այս բաները մեզ պատմում է շատ բաներում վստահելի Աբյուդենոսը»: Եվ հայ ցանկը տալե վերջ կգրե. «Այս

---

[25] **Գուտշնիտ**. Խորենացու արժանահավատությունը:

[26] **Է. Դանիելյան**: Քրիստոնեության հոչակումը պետական կրոն: «Առանց Խորենացու տեղեկությունների մենք՝ հայերս, երբեք չենք գտնի մերօրյա ռազմավարական նշանակություն ունեցող բազմաթիվ հանգուցային հարցերի պատասխանները, օրինակ՝ թե արդյո՞ք հայերը հայոց բարձրավանդակի բնիկնե՞րն են, թե ո՞չ, ե՞րբ և ինչպե՞ս է ստեղծվել հայոց պետությունը, ի՞նչ հզորություն և. միջազգային կշիռ է այն ունեցել…»:

[27] **Մարգսյան, Գ. Խ.** Նույն տեղը: Բել - Նեբրովթը «Աստվածաշնչում Հայկի հայր Թորգոմի ժամանակակիցն է: Աստվածաշնչում Բելը Նեբրովթի հետ ոչ մի կապ չունի: «Բել» աքքադերեն նշանակում է «տեր» և կիրառվել է Միջագետքում որպես Բաբելոնի գլխավոր աստված Մարդուկի մշտական ածականը»:

[28] **Ստ. Մալխասյանց**, «**Մ. Խորենացու «Պատմություն հայոցի» թարգմանության: Ներածություն**: Էջ՝ 14:

[29] **Գ. Մարգսյան**: Նույն տեղը:Անտիկ գրականության մեջ այդ (Շամիրամի (Ամիրամիսի) ամառասպելների գլխավոր ակունքը մ. թ. ա. V դարի հույն հեղինակ, պարսից թագավորի բժիշկ Քտեսիասի երկն է, որը մեզ չի հասել, բայց որի մեզ այստեղ հետաքրքրող մասերը վերապատմել է մ. թ. ա. I դարի հույն հեղինակ Դիոդորոս Սիկիլիացին իր Պատմական գրադարանի» 2-րդ գրքի 4-20 գլուխներում: Մովսես Խորենացին գուցե անմիջականորեն օգտված չինի այդ շարադրանքից, սակայն իր տեղեկությունների մեծ մասը նա քաղել է 4-րդ դարի հեղինակ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնից»:

բանն ասում է Աբյուդենոսը իր առաջին առանձին մանր ազգաբանության մեջ»[30]:

Այսպիսով: Ասորաց արքա Նինոս - **Ճամշի-Ադադ Ա** գրել է միայն իր մասին, խեթերի արքա Անիտան - Պայապսիս Քաղյանը գրել է միայն իր մասին, և միայն Խորենացին է, որ վերականգնել է Հայքի, Նինվեի և խեթերի արքաների և նրանց **կառավարման** ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների ամբողջական **տարեգրությունը**:

Խորենացին փաստագրել է, որ հայոց պատմության **նենգափոխումը**՝ այն է սեպագրերից Արամի անունի ջնջումը, տեղի է ունեցել Նինոս - Ճամշի-Ադադ Ա կողմից՝ 2-րդ հազարամյակի 19-18-րդ դարերում: Ճիշտ է **ոչ հայկազունի** քրեմների մասին Խորենացին և մեր պատմիչներչը չունեն հիշեցումներ, սակայն Հայկյան արքայատոհմի պատմագրության ոչնչացման գործում մեծ դերակատարում են ունեցել հայկյանների ոխերին թշնամի **Արատտայի քրմերը**, ոչինչով հետ չմնալով նինոսներից՝ **մասնակից լինելով** Հայկազունիների պատմական վավերագրերի ոչնչացման գործընթացին:

Հարց է ծագում, թե որտեղից Խորենացուն և Սեբեոսին այս վավերագրերը, եթե չկան կամ չեն պահպանվել հայկական աղբյուրներ: Խորենացին գրում է, որ Մար Աբասը Նինվեում արքունական դիվանի (արխիվը)[31] մատյաններում է գտել է հունարեն լեզվով գրված մի մատյան, *«որն ուներ այսպիսի վերնագիր «Մատյանի սկիզբը»՝ քաղդեերենից թարգմանած հունարեն»*: Հետագայում Խորենացին ճշտում է, գրելով, որ Մար Աբասը (Մատյանից) հավաքագրել է[32] «*միայն մեր ազգի հավաստի պատմության*» էջերը՝ «*անգյալի քաջերի…նաև, ինչպիսի մարդիկ տիրելիս են եղել Հայաստանի վրա*»[33]: Պատմահոր Պատմության առաջին գիրքը Մար Աբասի աղբյուրն է, որը արքունական դիվանից «*հանելով միայն մեր ազգի հավաստի պատմությունը հույն և ասորի գրերով* գրած, բերում է **Մծբին Վաղարշակ թագավորին**»[34]: «*Եթե ստույգ լիներ, ինչ որ Խորենացին պատմում է, այսինքն՝ որ Մար Աբասյան աղբյուրը հանված է Ալեքսանդր Մեծի հրամանով քաղդեերենից հունարեն թարգմանված մի պատմությունից, ապա նա կլիներ ամենահին և ամենապատվական պատմական հիշատակարանը աշխարհի վրա*»[35]:

Այստեղ մեզ անհրաժեշտ է պարզել և պարզաբանել մեկ էական խնդիր. արդյոք Հայաստանում հայ արքաներն ու արքունիքը չեն ունեցել դիվան և արխիվներ, եթե ունեցել են դիվան-արխիվներ, ինչպիսի ճակատագիր են արժանացել դրանք: Հայ ժողովրդի պատմությունը ստեղծելիս, մեր պատմիչները ինչո՞ւ էին հարկադրված ընկնել երկրե-երկիր, ինչո՞ւ էր Վաղարշակ արքան և նրա պատվերով Պատմություն գրող Մար Աբասը ստիպված դիմել հարևան երկրներում պահպանված արխիվների օգնությանը, մանավանդ Նինվեի արքունական դիվանում են փրնտրել հավաստի աղբյուրներ, և ոչ թե հայոց արքաների և հայոց մայրաքաղաքների դիվաններում, արդոք արդարացիորեն է Խորենացին մեղադրել **մեր արքաներին անբանության և ոչինչ չստեղծելու «անիմաստ բարքերը»**, երբ նույն պատմիչները նշում են հայոց արքաների դիվանների գոյության իրողությունը:

Աղբյուրների բազմազանությունը իրավունք է տալիս փաստագրելու, որ, նախ, վերապահումներով պետք է ընդունել Վաղարշակ թագավորի «թղթի»՝ նամակի Խորենացու այն վավերագրած «մտահոգությունը», ըստ որի վաղնջական ժամանակներում հայերը չեն

---

[30] **Հր. Ք. Արմեն, Խորենացին և աղբյուրների ընտրությունը:**

[31] **Վաղարշակ Ա** (ծն. և մահվան թթ. անհայտ), Հայոց ավանդական արքա, Արշակունյաց հարստության հիմնադիրը Հայաստանում:Պատմիչները Վաղարշակին համարում են Պարթևաց Արշակունի թագավոր Արշակ Մեծի կամ Միհրդատ I Մեծի(մ.թ.ա.171-138) եղբայրը:

[32] Ըստ էության **Մար Աբաս** «**Մատյանը**» **վավերագրերի հավաքածու էր**՝ «Մար Աբաս Կատինան այս մատյաններից հանելով միայն մեր ազգի հավաստի պատմությունը հույն և ասորի գրերով բերում է Մծբին Վաղարշակ թագավորին….Վաղարշակը սա ստանալով, (Մատյանը) համարում է առաջինն իր գանձերի մեջ, դնում է արքունական պահեստը մեծ զգուշությամբ և հրամայում է **մի մասը քարի վրա արգանագրել**»: **(Մ. Խորենացի**: ՀՊ: Էջ՝85)

[33] **Մ. Խորենացի**: ՀՊ: Էջ՝ 85:

[34] **Մ. Խորենացի**: ՀՊ: Էջ՝ 85:

[35] **Ստ. Մալխասյանց,** նույն տեղը:

ունեցել գրեր-գրանիշերը, չեն ստեղծվել մատյաններ, չեն ունեցել դիվաններ: Հայ պատմիչների մատենագրությունը հավաստում է, որ Հայքում գոյություն ուներ.

♣ պետական գրագրություններ՝ **սեպագրերը** և գրանիշեր, ստեղծվում էին նահապետի կամ արքաների օրոք տեղի ունեցած կարևոր իրադարձությունների տարեգրություններ:

♣ Խորենացու վավերագրումից պարզ է դառնում, որ Վաղարշակ թագավորը ուներ վավերագրեր պահելու «**պահեստ**»՝ **արխիվ**: Արքայական դիվանի կամ արխիվի գոյությունը հաստատում է Սեբեոսը, հիշատակելով **Տրդատ թագավորի դիվանի**[36] առկայությունը: Մծբինում հայոց նախնիների անուններով արձանագրության վիմաքար կանգնեցնելու առթիվ Խորենացին իր Պատմության առաջին գրքում գրում է, որ **Վաղարշակ** թագավորը «*հրամայում է* (պատմության) *մի մասը քարի վրա արձանագրել*»:

♣ Արքունական և մեհենական **դիվաններ**, որտեղ ստեղծվում էին և պահվում **արքունիքի** և **տաճարների մատյանները**[37]:

♣ Մեծ տարածում ուներ ժողովրդին հասկանալի և ընկալելի լեզվով ստեղծված **բանահյուսություն**, որը Խորենացին ձևակերպել է հետևյալ կերպ.

♣ «…*ավելի հաճախ Արամյան ծերունիները փառիկների նվագակցությամբ ցոցքեր և պարերի երգերում հիշատակում էին այս բոլորը*»[38], այսինք, այն ամենը, ինչ կարել է գտնել և ճշտել գրավոր աղբյուրների էջերից, որոնք չկան գրավոր վավերագրերում:

♣ Արքայի կամ նախարարի կողմից պատմիչներին տրվում էին պատվեր (տվյալ դեպքում Վաղարշակ թագավորի Մար Աբասին տված հանձառությունը, իսկ Սահակ Բագրատունու կողմից՝ Խորենացուն արված հովանավորությունը)՝ հավաքագրվել են արքաների և նախարարների (պետության, ժողովրդի) մասին վավերագրեր:

♣ Հայազգի կամ օտարազգի պատմիչները ստեղծել են **Հայաստանի պատմությունը** /տես՝ ստորև/, իսկ քրմերը՝ գրել են **Քրմական պատմություններ**:

Քանի որ մեր խստաբարո պատմաբանները վերապահումներ ունեն Մար Աբասի առթիվ, այս իսկ պատճառով, այստեղ մենք կմեջբերենք Խորենացու կողմից օգտագործած և համընդհանուր ընդունելի աղբյուր հանդիսացող

♣ **Եվ. Կեսարացու Քրոնիկոնի Ասորեստանի պատմության** աղբյուր **Աբյուդենոսի**[39] հիշատակությամբ՝ «**Հաբեթի սերունդների ցանկը**»:

Իսկ թե ինչու է Խորենացին դիմել Աբյուդենոսի փաստագրումներին, բացահայտում է Խորենացին: Նախ ասենք, որ ճշտելով ս. գրքի «**ճյուղագրությունը**», Խորենացին բողոքում է, որ ս. գրքում «**մեր Հաբեթի սերունդները բոլորովին չկան**, և Հաբեթի[40] սերունդների բացակայող «հերթականությունը» Խորենացին ճշգրտել է իրեն՝ «**շատ բաներում մեզ վստահելի**» Աբյուդենոսի գրած **Ասորեստանի և Քաղդեայի պատմությունից**: Ըստ այդ աղբյուրի Խորենացին վավերագրել է.

Հաբեթը սերում է Գամերին:

Գամերը սերում է Թիրասին:

Թիրասը սերում է **Թորգոմին**[41]:

---

[36] **Սեբեոս**, Պատմություն, էջ՝ 5:

[37] **Ռ. Իշխանյան** Հանրագ. հ.7, էջ 443/4/: «**Արմավիրում եղել են երկու տիպի գրադարաններ**՝ թագավորա-կան, որոնցում պահպանվել են արքունական դիվանի փաստաթղթերը, և տաճարային - մեհենական՝ կրոնա-կան, պատմական և այլ կարգի գրականություն:

[38] **Մ. Խորենացի**: ՀՊ: Նույն տեղը:

[39] **Աբյուդենոս: «**Եվսեբիոսը գրել է**,** Աբյուդենոս գրել է Ասորեստանի պատմությունը և Քաղդեայի պատմությունը: **Եվ. Կեսարացու** աղբյուրներից (հեղինակ) մեկն էր, որից օգտվել է Խորենացին: Ի դեպ Հաբեթի սերունդները դուրս են մնացել Եվ. Կեսարացու նոր հրատարակության, և ինչպես նաև Բլիների ժամանակագրության էջերից»:

[40] **Մ. Խորենացի**: ՀՊ: Էջ՝ 79: Խորենացին **Բերոսյան Սիբիլլայիով** (Սիբիլլյան գուշակությունների գիրք) ճշգրտել է «ամբող աշխարհը բաժանումը իրենց իշխանության մեջ»՝ **Զրվանը, Տիտանը և Հապետոսթենի** միջև. «որ ինձ թվում են **Սեմը, Քամը և Հաբեթը**»;

[41] **Հովիկ Ներսիսյան**: **Ով էր Թորգոմը և ովքեր են Թորգոա տոհմը**: «**Տուն Թորգոա**» հասկացել են Հայաստանը…(Ծննդոց գրքի) լատին թարգմանության մեջ Թրգոմա-ի փոխարեն գրի է առնվել **Թոգ-Արմա**-ն նույն է, քանզի արդեն գիտենք, որ **թոգ** այսինքն **տուն**-ածին-ազն, և **Արմա** նշանակում է **Արևորդի**, ու սա այն անունն է, որ պարսիկները **նի** վերջանծանցով, սկզբից ի վեր մինչև այսօր հայերին են կոչում **Արմա-նի**:

Թորգոմը սերում է **Հայկին**:

*«**Արա Գեղեցիկը** (որդի) **Արամի**, ((Արամ) որդի) **Հարմայի**, (որդի) **Գեղամի**, (որդի) **Ամասիայի**, (որդի) **Արամայիսի**, (որդի) **Արամանյակի**, (որդի) **Հայկի**, որը դուրս եկավ **Բելին** հակառակորդ և միաժամանակ նրա կյանքին վերջ դնող»*[42]:

Հայկազունիները՝ «Հայկից սերված ցեղերը և սերունդներն էին» [43], ըստ Խորենացու՝ Մար Աբասի մատյանի վավերագրման համաձայն՝ **Հայկ** նահապետը, **Հայկի որդիներ**[44]**Արամանյակը**, Խոռը և Մանավազը, կադմոս՝ Արամանյակ որդի:

Հայկը սերում է Արամանյակին: «**Արամանյակը** ամբողջ բազմությունն առնելով»[45] բնակության է հաստատումը **Այրարատ աշխարհում**. «Արամանյակն այս խոր դաշտում բնակվելով՝ շենացնում է մի մասը դաշտի հյուսիսային կողմում և լեռան ստորոտը նույն կողմում. լեռն իր անվան նմանողությամբ կոչում է **Արագած**, իսկ կալվածը՝ **ոտն Արագածո**: Բայց սքանչելի մի բան է ասում պատմագիրը (Մար Աբասը), թե շատ տեղերում ցիրուցան բնակվում էին սակավաթիվ մարդիկ մեր երկրում նախքան մեր բնիկ նախնի Հայկի գալուստը:Արամանյակը տարիներ ապրելուց հետո սերեց **Արամայիսին**, որից հետո էլի բավական տարիներ ապրելով մեռավ: Նրա որդին՝ Արամայիսն իր բնակության համար տուն է շինում գետի ափին մի բլուրի վրա և իր անունով այն կոչում է **Արմավիր**, իսկ գետի անունը իր թոռան՝ Երաստի անունով դնում է Երասխ»[46]:

Արամայիսը սերում է **Ամասիային**:

Ամասիան սերում է **Գեղամին**:

Գեղամը սերում է **Հարմային**:

Հարման սերում է **Արամին**:

Արամը սերում է **Արա Գեղեցիկին**:

Արամը Հայկազունիների **վեցերորդ սերունդն էր՝ Արա Գեղեցիկը** նրա որդին, զոհված երիտասարդ հասակում[47]:

Մար Աբաս Կատինա կամ **Մար Աբաս Մծուրնացի**: Հայաստանի պատմիչ, ազգությամբ ասորի, շարադրել է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները: Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» հիմնական աղբյուրներից մեկն էր: 19- րդ. վերջի և 20-րդ. սկզբի հայագետներ ընդհանրապես չէին ընդունում Մար Աբաս Կատինայի գոյությունը՝ համարելով նրան Մովսես Խորենացու երևակայության արդյունք: Սակայն ժամանակակից ուսումնասիրողները գտնում են, որ **Մար Աբաս Կատինան ապրել և իր երկը գրել է մ.թ. 3 - 4 դարերի սկզբներում**, բացի Մ. Խորենացուց, Մար Աբասի Պատմությունից օգտվել են Սեբեոսը, Անանունը և VI դարի հույն պատմիչ **Պրոկոպիոս Կեսարացին**:

Խորենացու վկայությամբ, Մար Աբասը Նինվեի արքունական դիվանից և Հայաստանի բնակչությունից բանահավաքության միջոցով է քաղել Հայաստանի մասին իր Պատմության վավերագրերը. «գտնում է մի մատյան հունարեն գրված» ու այդ մատյանից հանելով միայն մեր ազգի«հավաստի պատմությունը» հույն և ասորի գրերով «բերում է Մծբին Վաղարշակ թագավորին[48]»:

---

[42] **Մ. Խորենացի**: ՀՊ: Էջ՝ 77:

[43] **Մ. Խորենացի**: ՀՊ: Էջ՝ 90: «Իսկ ինքը, ասում է Մար Աբասը, իր մնացած մարդկանցով և տուն ու տեղով շարժվում է դեպի հյուսիս արևմուտք և գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք, այսինքն՝ թե այստեղ բնակվողները հայեր են Թորգոմի տան սերունդ: Շինում է մի գյուղ, որն իր անունով կոչվում է **Հայկաշեն**: Այստեղ էլ պատմության մեջ հիշվում է, թե այս դաշտի հարավային կողմում, մի երկայնանիստ լեռան մոտ, ապրելիս են եղել առաջուց սակավաթիվ մարդիկ, որոնք կամովին հնազանդվել են դյուցազնին: Այս էլ ճշտում է ասված **անգիր զրույցները**»:

[44] **Մ. Խորենացի**: ՀՊ: Էջ՝ 90:

[45] **Մ. Խորենացի**: ՀՊ: Նույն տեղը:

[46] **Մ. Խորենացի**: ՀՊ: Նույն տեղը:

[47]**Վ.Ա.Հակոբյան**:**Մանրժամանակագրություններ**:13-18դդ: Հատոր 2:

[48] **Հայոց Վաղարշակ թագավոր: ՀԺՊ** ուսումնասիրողները կարծիքովով Հայոց **Արտաշես Ա**-ի և **Տրդատ Ա Արշակունի** արքաների հավաքական կերպար է:

Սեբեոս: Այժմ դիտարկենք, թե այս ամենի կամ «առաջին հայկյանների մասին» ինչ է վավերագրել յոթերրորդ դարի հայ պատմիչ **Սեբեոս** պատմիչը[49]:

Սեբեոսի աշխատությունը մի տեսակ ամբողջական հայոց պատմություն է սկզբից մինչև յոթերորդ դարը: Ի տարբերություն Խորենացուն, Սեբեոսը չի հիշատակել իր աղբյուրները[50], սակայն ավելի մանրամասն է գրել Հայկ և Բելի պատերազմի՝ «սարսափազդու արքայի (Բելի) և **արի մարդու** (Հայկի) մասին վեպը»[51], քան Հայկ ու Բելի պատերազմը առկա է Խորենացու մոտ:

Բերոսոս (քաղդեացի): «Ժամանակակից Մեծն Աղեքսանդրի և ապա Անտրոքոս Սոտերի, որուն նվիրեց իր «**Բաբելոնապատում**» գիրքը: Հատորը երեք մասե կբաղկանար: Ա ստեղծագործութենեն մինչև ջրհեղեղ, Բ ջրհեղեղեն մինչև Նաբոնասար Գ, Նարոնասարեն մինչև Աղեքսանդր և Անտիոքոս: Այս գործեն հատուկտորներ հասած են մեզի Աբյոդենոսեն, Ապոլոտորոս են և Բամազմավեպեն»[52]:

Աբյուդենոս: «Ասորեստանի թագավորները կթվարկե **Բելեն մինչև Նինոս**, որ կգտնվի թե Եվսեբիոսի և թե Խորենացիի մեջ: Սակայն մեր պատմահայրը միևնույն **Աբյուդենոսեն կառնե հայերու ալ ցանկը**, **Հայկեն մինչև Արա գեղեցիկ**, որ Եվսեբիոսը չունի: Խորենացին կհավելու թե, «*Եվ սա ճշմարիտ է, ոչ ոք չկասկածի, որովհետև այս բաները մեր պատմում է շատ բաներում վստահելի Աբյուդենոսը*»: Եվ **հայ** (հայ արքաների. հեղ.) **ցանկը** տալե վերջ կգրե. «*Այս բանն ասում է Աբյուդենոսը իր առաջին առանձին մանր ազգաբանության մեջ, որ վերջերս ոմանք դեն ձգեցին*»[53]:

Ստրաբոն: Ո՞վ էր Ստրաբոնը: Ստրաբոնը համարվում է հույն պատմիչ, աշխարհագրագետ: Թեպետև հայագիտական որոշ շրջանների կողմից այս կարծիքը հիմա հերքվում է՝ Ստրաբոնը համարվում է հունա-սեմական ծագում ունեցող պատմիչ: Այն հարցին, թե ինչու են «գիտական շրջանակները» անտեսել, և չտեսնելու տալիս Խորենացուն, և հենց Ստրաբոնին[54] են համարում «**հայ ժողովրդի էթնոգենեզի**» հիմնական «աղբյուրը», պատասխանը իրեն հանճարեղ լռությամբ տվել է Պատմահայր Խորենացին՝ որևէ անգամ, որևէ առիթով, բացառությամբ աշխարհագրական մի քանի տեղանուններից, չի հիշատակել թե Հերեդոտի և թե Ստրաբոնի անունները:

Դժվար չէ կռահել, որ Խորենացին Ստրաբոնի Հայաստան-Արմենիայի մասին տեղակությունները համարել է ոչ հավաստի տեղեկություններ, և «Հայոց մեծերի ծննդաբանությունը» բաժնում չի հիշատակել Ստրաբոն անունը:

Այսքանից հետո միթե արդարացված է, որ մեր ժողովրդի պատմության կազմավորում ակունքներում, հենց մեր պատմաբանների թեթև ձեռքով, պատեհ-անպատեհ, «հուշարձան է կանգնեցված» Ստրաբոնին, երբ նա Հայաստան-Արմենիայի և հայ ժողովրդի վաղնջական ժամանակների պատմագրության ապատեղեկատվության աղբյուր է:

Ինչևէ, միջազգային պատմագիտական ցանկացած տարբերականում որտեղ փնտրեք **արմեն**, **Արմենիա**, **Հայաստան** անունները, առաջինը կհանդիպեք Ստրաբոն անվան-

---

[49] **Ստ Մալխասյանը** հավասարության նշան է դրել՝ Սեբեոսի և **Անանուն** պատմիչի Պատմության Ա գլխի միջև:

[50] Բացառություն է կազմում Մարաբաս Մծուրնեցի փիլիսոփան՝ Մար Աբաս Կատինան և Ագաթանգեղոսը:

[51] **Սեբեոս**: Պատմություն: էջ՝ 7:

[52] **Հրանտ Ք. Արմեն**: **Խորենացին և աղբյուրներու ընտրությունը:**

[53] **Հրանտ Ք. Արմեն:** Նույն տեղը:

[54] **Ստրաբոն**: Հույն պատմիչ, աշխարհագրագրետ Ստրաբոնն իր «**Աշխարհագրություն**» աշխատությունում, հիմք ընդունելով Հոմերոսի Ոդիսական պոեմի վկայությունը, նշում է, որ արգոնավորդներից մեկը՝ Թեսալիայի Արմենիոն քաղաքից Արմենոսը անցել է Իբերիան ու Աղվանքը, հասել՝ մինչև Կասպից ծով և Արմենիա ու Մեդիա, ապա իր ուղեկիցների հետ հաստատվել է Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններում, բնակեցրել Եկեղիքն ու Սպերը: Հենց Արմենոսն էլ իր անունը թողել է Արմենիային: **Սակայն Առաջավոր Ասիայի խորքերը հույների թափանցելու վերաբերյալ պատմական տեղեկություններ, փաստեր չկան**:

մանը: Ստրաբոնով է սկսվում և Ստրաբոնով է որոշվում հայերի ո՛վ լինելը: Եվ դրա մեջ համոզվելը դժվար չէ, եթե թերթեք հայագիտական տարբերականները, կամ հայերի մասին օտարերկրյա որևէ հրապարակում: Օտարերկրյա գիտական որոշ շրջաններ, համոզված են, թե նա է առաջիններից մեկը գրել հայ ժողովրդի «գոյության» մասին, և Ստաբոնն է սահմանել, թե հայերը «**երբ են բնակություն հաստատել Հայկական լեռնաշխարհում**»:

Ստրաբոնի հիշատակությունները առաջիններից մեկը քննության առարկա դարձրեց Ն. Ադոնցը, մեկ առ մեկ, հերքելով Արմենիայի մասին նրա բոլոր փաստարկումները[55]: Այնուհանդերձ, ցավալի է, որ Ստրաբոնի հորինած «**Արմենոսի Հայաստան կատարած ճանապարհորդության «պատմագրություն է»**» ընդգրկված Արմենիայի մասին բոլոր ընդունելի և չընդունելի գիտական հոդվածներում, որոնց հեղինակները **«Ստրաբոնի Արմենոսին»** են համարում **Արմենիայի հիմնադիրը**:

Այստեղ մեջբերեք մեկ այլ կարծիք ևս, ինչը բացահայտում է Ստրաբոնի Արմենիայի մասին հորինվածքների նպատակները: «Ստրաբոնի գիտական ասպարեզ մտնելու ժամանակաշրջանին հատուկ էր մինչ այդ սկսված հայ-հռոմեական հակամարտությունների սրումը. **Հայաստանը համարվում էր Հռոմի «զորեղ թշնամին» արևելքում**, իսկ Հռոմը՝ **Հայաստանի թշնամին**: Այսինքն, Հայաստանը համաձայն Ստրաբոնի, ներկայանում է որպես թշնամական երկիր: Այդ ժամանակների Հայաստանը ընդգրկում էր, բացի իր բուն բնական տարածքներից, նաև սեմաբնակ զգալի տարածքներ. օրինակ՝ **Ասորիքն** ու **Հրեաստանը**, որոնք իրենք կամովին անցան «բարեպաշտ թագավորի», տարածաշրջանում արքայից արքա հռչակված **Տիգրան Մեծի տիրապետության տակ**: Իսկ թշնամական երկրին, պարզ է, թե ինչ աչքերով Ստրաբոնը կներկայացներ, **պետք է մրոտեր նրան**, աղավաղեր նրա կյանքին վերաբերող իրական փաստերը, այլոց վարք ու բարքերին վերաբերող **չ՛ար**, ո՞չ առաքինի փաստերը պետք է տարածեր (վերադրվագեր) նրա վարք ու բարքի վրա և այլն»[56]: Ստրաբոնը սարքեց իր՝ Անահիտի մեհյանի վերաբերյալ «փաստը», ձեռքի հետ էլ հորինեց **Արմենոսը հույն լինելու վարկածը**: «Ստրաբոնը Հայաստանը ներկայացնելիս առաջնորդվել է նաեւ ասեկոսեներով…իսկ ասեկոսեներով է առաջնորդվում նա, ով դրանում շահագրգռված է: Ստրաբոնը, ինչպես նկատվեց, շահագրգռված էր, քանզի իր երկրին թշնամի երկրի հետ գործ ուներ»[57]:

Տրոգոս Պոմպեոս: «Նրա համար թեսալացի Յասոնի ուղեկից **Արմենոսը Հայաստանի թագավորության հիմնադիրն է…**նրա պատմագրությունը մեզ է հասել **Հուստիանոսի համառատագրությամբ**», և թեպետ **Կերսիլոսին** և **Մեդիոսին** չի հիշատակում, բայց ըստ Ադոնցի, «ինչ պատմում է հայերի մասին, գալիս է այդ պատմիչներից»[58] [59]:

Պարզ է, թե ինչու որպես Հայաստանի մասին հավաստի աղբյուրներ Խորենացին կամ այլ հայ պատմիչ, **որևիցե առիթով չեն հիշատակել Ստրաբոնին** կամ հույն զորավար-պատմիչներ **Կերսիլոսին** և **Մեդիոսին**: Ստրաբոնը և Ա. Մակեդոնացու զորավար-պատմիչներ Կերսիլոսին և Մեդիոսին **որպես Հայաստանի մասին հավաստի աղբյուր դարձան** 19-րդ դարում սկիզբին, երբ ծայր առավ Խորենացու երկիր վրա հարձակումները ընդհանրապես, Խորենացու Հայկյան Արամի վրա մասնավորապես:

Խորենացու երկի վրա խաչակրած արշավանքի ժամանակ հիշեցին, թե Հայաստանի մասին ինչ են հորինել հույն սպաներ **Կերսիլոսին** և **Մեդիոսին**, հույն «մեծ աշխարհագրագետ» **Ստրաբոնին**՝ իր հույն արգանավորդ **Արմենոսի** մասին հորինվածքով: Ստաբոնին կարելի է հանդեպել ամենուր, որ գրվում և խոսվում է արմենենների և հայերի մասին, լինի հայերեն, ռուսերեն, թե մեկ այլ լեզվով պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն,

---

[55] **Ն. Ադոնց**, **Հայաստանի պատմությունը**, էջեր 278, 316, 317, 319-320: «Թեսալական տեսությունը Ալ. Մակեդոնացու ժամանակներից է գալիս…նրա բանակի սպաներ **Կերսիլոսի** և **Մեդիոսի** (սրանք են Ստրաբոնի աղբյուրները», հեղ.) **Արմենիայի մասին հիշատակությունները որևէ հիմք չունեցող պատմություններ են**»:

[56] **Մերգելյ Մանուկյան: Վահագնակաչ: Այսպես ասած «արբազան պոռնկության» մասին**:

[57] **Մերգելյ Մանուկյան:** Նույն տեղը:

[58] **Ն. Ադոնց**, նույն տեղը, էջ 317:

[59] **Գ. Սարգսյան: Մ. Խորենացին և նրա «Հայոց Պատմությունը:**«Մեհենական պատմությունների» գոյության փաստը հաստատում է զարմանալի հազազատությունը…հունա-հռոմեական պատմագիրների, հատկապես Ստրաբոնի հաղորդումների միջև:

երկ, թե ինտերնետ կայքեր: **Խորենացու Հայկյան Արամի** փոխարեն, որևէ մեկի կողմից չճշտված Ստրաբոնի **հունական էպոսի հերոս Արմենոսն է դարձել** Արմենիա պետության **հիմնադիրը**, իսկ Ստրաբոնը վերածվել է հայ ժողովրդի պատմության նախասկիզբը հիշատակող եզակի աղբյուրը:

Ահա թե ինչպես, ընդամենի մի քանի նախադասությամբ Ստրաբոնը ավելի մեծ վնաս է հասցրել հայ ժողովրդին, քան որևէ մեկ այլ պատմիչ, քանի որ նրանով հիմք դրվեց այն մտայնությանը, որ հայերը բնիկ ժողովրդ չեն, Ստրաբոնի, նաև Հերոդոտի, թեթև ձեռքով, հայերը բնիկ ժողովրդից, դարձան Հունաստանից Հայկական լեռնաշխարհ գաղթած եկվորներ, իսկ **ինչը արատավոր պատմագրության օրինակ է**, քանզի հենց Ստաբոնի, նաև Հերոդոտի սահմանած դարաշրջանը՝ մ.թ.ա. 13-12 դդ հիմք ընդունվել հայոց ազը «ի հայտ գալու դարաշրջան»:

Սուրբ Գիրք կամ **Հին Կտակարանի Ծննդոց**[60][61] գլուխները, ինչպես նաև **Հինբրայական** (հրեական) **ավանդությունը**, ինչպես արդեն գրել ենք, գրի է առնվել մ.թ..ա. 1-ին - Ք.հ. 1-ին դարերում **Հովս. Փլավիոսի** «**Հրեական հնախոսություն**» երկում, ուր Հայաստան առաջին անգամ հանդես է եկել հետևյալ ձևով. «**Ուրոսը հաստատեց Հայաստանը**»:

Ես ունեմ այն համոզումը, թե **Ծննդոց գրքում** խոսքը **Արամ նահապետի** որդի **Արա Գեղեցիկի** մասին է, քանի որ **համաշխահային նշանակության տարեգրության** կամ **հրեական ավանդության** էջերում պարզորոշ վավերագրված է, որ **Ուրոսը** (Ուլոսը) համարվել է **Հին Կտակարանի Արամ նահապետի որդին**:

Արդյոք ս. գիրքը հանդիսացել է հայերի կամ հայկազունիների տարեգրության աղբյուր,- հարցի պատասխանը, ինչպես արդեն գրել ենք տվել է Խորենացին: Պատմահայրը ճշտելով բողոքել է, որ ս. գրքի «**ճյուղագրությունը**» մեջ «**մեր Հաբեթի սերունդները բոլորովին չկան**: Հաբեթի սերունդների բացակայող «հերթականությունը» Խորենացին ճշգրտել է իրեն՝ «շատ բաներում մեզ վստահելի» Աբյուդենոսի գրած Ասորեստանի և Քաղդեայի պատմությունից[62]. «Բերոսյան Սիբիլլայիով (Սիբիլլյան գուշակությունների գիրք) ճշգրտել է «ամբող աշխարհը բաժանումը իրենց իշխանության մեջ»՝ Զրվանը, Տիտանը և Հապետոսթենի միջև. «որ ինձ թվում են Սեմը, Քամը և Հաբեթը»:

Այսինքն, Խորենացին չի վստահել ս. գրքի Արամի և նրա որդու հեքիաթին, և որքան էլ ճգնեն ապացուցել, թե Խորենացին չի իմացել Հովս. Փլավիոսի «Հրեական հնախոսություն» երկի մասին, բայց դա այդպես չէ, չէ որ Ֆլավիոսից քաղած նույն պարբերությունը նույնությամբ ընդգրկված էր Ծննդոց գրքի 20- 22-23-ում, որը թարգմանել է Խորենացին: «Ժամանակակից պատմագիտությունը գտնում է, որ Հին Կտակարանի ավանդությունները միտմնավոր մշակման են ենթարկել համապատասխան այն գաղափարական միջավայրին, որը գոյություն է ունեցել Հին Կտակարանի գրառառման ժամանակ (Ք. ա. 1-ին հազարամյակի 2-րդ կես) և նկարագրվող դեպքերից շատ ավելի ուշ» [63]:

Եվսեբիոս Կեսարացի 3-4-րդ դարերի հույն եկեղեցական գործիչ և պատմիչ, «եկեղեցական պատմության» հայր, աստվածաբան[64]: Թե ով էր հույն այս եկեղեցիական պատմիչը բացահայտել է հայագետ **Հրանտ Ք. Արմենը**. «Երբ քրիստոնեությունը սկսավ տարածվիլ և զորանալ Հռոմեական կայսրության մեջ, հեթանոս գրողներ պայքար սկսան անոր դեմ: Եվսեբիոսը, եկեղեցական պատմության հայրը, 4-րդ դարու սկզբին կպատասխանե եկեղեցվո թշնամիներուն, իր հաշվով, **զորավար համարված փաստերով ապացուցանելու քրիստոնյա կրոնի հնությունը**, ավելի հին, քան հեթանոս քննադատներու կրոնը: Եվսեբիոսի «Ավետարանական պատրաստություն» գիրքը տասնհինգ մասերե բաղկացած, ոչ միայն պաշտպանողական է, այլ նաև հարձակողական: Ան կծաղկե հեթանոս առաս-

---

[60] **Աստվածաշունչ: Հին Կտակարան:** Ծննդոց. 20- 22-23:

[61] Ս. գրքով պարթևների ցեղը ևս ծագել է հրեա Աբրահամից… **Մ. Խորենացի**: ՀՊ: Էջ՝ 203:

[62] **Մ. Խորենացի**: ՀՊ: Էջ՝ 76-77:

[63] **Հ.Ս. Մարտիրոսյան**:«**Ավանդական պատմագրության տվյալները և հիքսոսները**»;

[64] **Եվսեբիոս Կեսարացի:** «**Քրոնիկոն**» բնագիրը հայտնաբերվել է հայերեն (գրաբար):

պելները որպես այլանդակ և սնոտի բաներ, և կիակաճառե անոնց այլաբանական մեկնաբանություն տվողներուն: Ան վճռականորեն կհավաստե, թե հեթանոս կրոնական գաղափարներու աղբյուր ծառայող նշանավոր փիլիսոփաներեն և օրինսդիրներեն…», հանգելով այն եզրահանգմանը, որ Եվսեբիոսը քաղվածներ է արել «որպես **կռվան զանազան հեղինակներից**», որպեսզի հիմնավորեր «**հրեաներու հնությունը**: Քրիստոնյա տեսաբաններ կշարունակեն պայքարը: Փաստերու փնտրտուքը զիրենք կմղե հին պատմական գործեր ուսումնասիրելու (ինքնին օգտակար զբաղում: Եթե պայքար չըլլար, պիտի չկարդային): **Խորենացին ալ իր գրքի Ա մասին մեջ կօգտվի այս կարգի հեղինակներեն**, որոնք հիշված են Եվսեբիոսեն, օրինակ, Բեռոսոս, Աբյուդենոս, Բազմավեպ, Կենփաղիոն: Մեր կողմն այս չորսին հիշատակումը դիտումնավոր է, քանզի մեզի կթելադրե հետևյալ հարցումը, **արդյոք պատմահայրը այս չորս հեղինակները կարդացա՞ծ էր**, եթե ոչ պարզապես Եվսեբիոսին կարձագանքեր: Մենք համաձայն չենք վերոհիշյալ հեղինակներու ըսածին: Խորենացին կարդացած էր սույն չորս պատմագիրները, ինչպես և կարդացած այն բազմաթիվ աղբյուրները, որոնց անունները կուուա և որոնցմե քանիներուն համար ալ քննադատական խոսք ունի»[65]: «Թե ինչու Խորենացին աղբյուրներից մի մասը հիշատակում է, մյուս մասը ո՛չ դժվար է ճիշտ և սպառիչ պատասխան տալ: Խոսք չի կարող լինել այն մասին, թե նա կամենում է թաքցնել իր օգտագործած աղբյուրները: Կորյունի, **Եվսեբիոսի** ժամանակագրությունը, Փիլոնին, **Դիադորոսին** հիշելը միայն պատիվ կարող էր բերել Պատմությանը»[66]:

Բայց ես համաձայն չեմ Ստ. Մալխասյանի հետ, թե **Եվսեբիոս Կեսարացուն** և թե **Դիադորին** Խորենացու կողմից հշատակելը, ի ցույց կդներ Խորենացու մեծությունը:

Իմ կարծիքով Խորենացին պարզապես չի վստահել **Եվսեբիոս Կեսարացուն,** այդ պատճառով էլ Պատմահայրը **չի տվել նրա անունը**:

Դիոդորոս Սիկիլիացի: Անտիկ շրջանի ազգությամբ հույն պատմիչ, 40 գրքից բաղկացած «**Պատմական գրադարան**» աշխատության հեղինակ: Թեպետ այս հեղինակի համարում են Խորենացու հայոց պատմության հին շրջանի հեղինակներից մեկը, սակայն պատմաբանները մերժում են այն պնդումները, թե Խորենացին ձեռքի տակ չունի Դիոդորի գիրքը[67]: Մենք այս պատմիչի հետ անհրաժեշտ գտանք «պարզել մեր հաշիվները» այնքանով, որքանով, նրան տեղեկություններով է վիճարկվել և վիճարկվում **Հայկյան Արամի** և **Արա Գեղեցիկի** պատմականության հարցը: Հիմա քննարկենք, թե ինչ պատմական տեղեկություններ կան **Դիոդորի** և նրա հիմնական աղբյուր Կտեսիասի մասին:

Ըստ էության, Դիոդորը որպես վավերագրող, և նրա Հայաստանի մասին վկայված աղբյուրները, ասսուրական կամ պարսկական դիվանները չեն: Հայ պատմաբան-թարգմանիչները գրելով Դիոդորի կենսագրականը «զլանում են» փաստագրել, որ Դիոդորի Հայաստանի մասին պատմագրության էջերի աղբյուրը, ոչ այլ ոք է, քանի մ.թ.ա. 4-5-րդ դարերի հույն պատմիչ Կտեսիաս Կնիդացին, որը Պարսկաստանում եղել է արքունի (թագուհու) բժիշկը[68]: Նրանց երկերի ուսումնասիրողները միահամառու կերպով պնդում են, որ Կտեսիաս և Դիոդոր պատմիչների «վաստակի արդյունքում», իրար է միախառնվել Ասորեստանի **հինգը** Նինոսների և **երեք** Սեմմուրամատ - Շամիրամի պատմագրությունը, իսկ արաբ թագավորը դարձել է հայոց արքա Բարգանես[69], աղավաղելով տարբեր դարաշրջանների իրադարձությունները: Դիոդորի «*այս պատմության մեջ ոչ մի բառ չկա, որ կարելի լինել վերագրել Նինոսին* (խոսքը Խորենացու Նինոսի՝ Շամշ-Ադադ Ա մասին է) *կամ*

---

[65] **Հրանտ Ք. Արմեն**:Նույն տեղը:

[66] **Ստ. Մալխասյան**: Մ. Խորենացու ՀՊ: Առաջաբան: Էջ՝ 17:

[67] **Մ. Խորենացի**: նույն տեղը: էջ՝ 239:

[68] **Կտեսիաս Կնիդացի:** մ.թ.ա. V - IV դդ. հույն պատմիչ, բժիշկ: Ապրել է Պարսկաստանում, եղել արքունի բժիշկ:: Ժամանակակից պատմագիտությունը նրան համարում է պակաս արժանահավատ, քան ժամանակակից մյուս հույն պատմիչներին:

[69] **Ն. Ադոնց**: ՀՊ: Էջ՝ 327: «Կտեսիասի հորինածը հիմնված չէ՞ր արդոք 5-րդ դարի վերջում պարսկական պալատում… նրա լսածների վրա». **Ն. Ադոնց**: կարծում էր արաբական զորավարի կամ արքայի անուն է: Բարգանես անունով հայ արքա գոյություն չի ունեցել»:

Ասորեստանի որևէ թագավորի: ***Նվաճումների ցուցակը արտացոլում է հնդինակի*** (Կտեսիաս, իսկ Կտեսիասից՝ Դիոդորի, հեղ.) ***երևակայությունը***. (Նինոսի նվաճումների) *ցուցակը ուրվագծում է Աքեմենյանների, և ոչ մի դեպքում Ասորեստանի, պետության ընդարձակումը: Ասուրական զորքերը երբեք չեն հասել Փոքր Ասիայի ծովափ, ոչ էլ Տանաիսի ափերը և ոչ էլ Հնդկաստանի սահմանները….****Կտեսիասի հնդինակությունը այնքան խոցուկ է****, որ նրա նման համեմատությունը՝ Ուրարտուի տրակալներին՝* (Կտեսիասը համամատել է ուրարտական վասելների տիրակալների հետ, հեղ.) *դարձնում է ցնորական*»[70]:

И. В.Пьянков. *Ктесий как историк. Ктесии уже в древности сложилось* ***плохое мнение****… В сохранившихся фрагментах* ***«Истории Персии»*** *Ктесий однажды прямо ссылается на рассказ* ***Парисатиды***[71]. Այսինքն, Պարսկաստանի թագուհու պատմություններն են դարձել Կտեսիասի, իսկ Կտեսիասի «**վավերագրերն են անցել**» Դիոդորի պատմագրության էջերը, չունենալով որևէ պատմա-վավերագրական հիմքեր:

Բարդածանը (Բար-Դայծան, ծնվել է 154 թ. Եդեսիայում, մահացել 68 տարեկան հասակում): «Մեհենական պատմությունները» գրել է **հայերեն**: «Խորենացու ցուցմամբ, որպես «մեհենական պատմությունների» սկզբնագրի լեզու բացառվում են հունարենը, ասորերենը, և հաստատվում է, ըստ երևույթին, **հայերենը**: Նման անսովոր դրույթում իրականում աներևակայելի բան չկա, եթե գրավոր հայերենի օգտագործման ոլորտը նախամենսրոպլան շրջանում սահմանափակված համարենք միմիայն մեհյաններով ու քրմության միջավայրով: Որ **հայերենով գրելու փորձեր ընդհանրապես արվել են նախամենսրոպլան շրջանում**, դրա ապացույցն են, օրինակ, այսպես կոչված «Դանիելյան նշանագրերի» մասին մեջ հասած տեղեկությունները»[72]:

Անանիա Շիրակացի: Եվսեբիոս Կեսարացու աշխատության հիման վրա **Անանիա Շիրակացին** շարադրել է աշխարհի արարչագործությունից մինչև Ք.հ. 685 թ տիեզերական պատմությունը, նաև հին հրեաների, պարսից թագավորների և Հռոմի ու Բյուզանդիայի կայսրերի ժամանակագրությունը և տիրակալների տարիները, սակայն առանց թվականների: Տառացի ընդօրինակել է **Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնը**[73]:

Մխիթար Այրիվանցուն[74]: Հայ իրականության մեջ, այն էլ համաշխարհային պատմության լույսի տակ, **Հայկազունիների արքայատոհմի ժամանակագրության** կազմելու առաջին փորձը իրականացրել է հայ միջնադարյան պատմիչը Այրիվանցին: Նա Հայքի թվով 59 «**հայ իշխանների**» համարել է Հայկազունիներ: Ուշադրություն դարձեք տարբերությանը՝ «**Հայկազունի իշխաններ**», բայց ոչ նահապետներ կամ արքաներ, ինչիսին նրանց ներկայացրել են Խորենացին կամ Սեբեոսը: Այրիվանցին չի նշել նրանց կառավարման տարիները, թվականները և դարաշրջանները, և ընդհակառակը, ի տարբերություն իր նախորդների, թվարկել է «**Հայկի եղբայրներին**», որոնց անվանել է Վրաց իշխաններ[75]:

Ղևոնդ Ալիշան[76]:19-րդ դարում Խորենացու և նրա Հայոց պատմության վրա խաչակրած արշավանք սկսվեց Միջագետքի, Արևելքի և Հունաստանի պատմությանը «գիտակ պատմաբանների և հնագետների» կողմից: Դրանց թվում քիչ չէին նաև հայ պատմաբաններն ու հայագետները: Առաջիններից մեկը, որ հանդես եկավ Խորենացու պաշտ-

---

[70] **Ն. Ադոնց**: ՀՊ: Էջ՝ 327:

[71] **И. В.Пьянков**. **Ктесий как историк.**

[72] **Գ, Սարգսյան**:**Նախամենսրոպլան շրջանի պատմագրությունը**:

[73] **Ա. Տեր-Ղևոնդյան**: **Թվականությամբ ժամակագրությունը հայ պատմագրության մեջ**:

[74] **Մխիթար Այրիվանցին**: **Նոր պատմություն** կամ **Հայաստանի պատմությունը** և **Ժամանակագրության պատմություն** (ռուս. հրատ. 1869 թ):

[75] **Նույն տեղը՝** **Князья Грузинские**.Гайк и семь братьев его: Картлос, Бардос, Мовкан, Лекан, Герос, Ковкас, Егрис; Мцхита, Уплос, Абритон, Азон; при нем был Александр.

[76] **Ղևոնդ Ալիշան**: Նրա գրչին են պատկանում հայոց պատմության, հնագիտության, աշխարհագրության վերաբերյալ բազմաթիվ ստվարածավալ աշխատություններ:

պանությամբ, Մխիթարյասն միաբանության հայագետ և պատմաբան Ղևոնդ Ալիշանն էր (1820- 1901 թթ): Նրա գրչին է պատկանում նաև «Հայկյան տոմարագիտության» հաշվարկը, ըստ որի «Հայկի շրջանի»[77] մեկնարկը նշանավորվել է Ք. ա. 2492 թվականից՝ Հայկի կողմից Բելի-Նեբրովթի դեմ Հայկի տարած հաղթանակով:

♣Հաղթական տարվա սկիզբն էր Նավասարդի 1-ը (օգոստոսի 11): Եկեղեցին եկեղեցական օրացույցում մշտապես նշում է տարիները ըստ «Հայկի շրջանի»[78] [79]:

♣ ըստ Ալիշանի, Հայկ նահապետը ծնվել էր մ.թ.ա. 2544 թ., մահացել է 2444թ:

♣ Հայկի 6-րդ սերունդ Արամ Արի, մոտ՝ մ.թ.ա. 2364-2306:

Միքայել Չամչյան: Մխիթարյան միաբանության հայագետ և պատմաբան Միքայել Չամչյանը 1784 թվականին Վենետիկում հրատարակեց իր «Պատմութուն հայոց» աշխատության առաջին հատորը, որտեղ հեղինակը շարադրել էր Հայ ժողովուրդի պատմությունը «**սկսած հնթանոսական անգիր ժամանակներից մինչև 18-րդ դարի կեսերը**». ««Պատմութիւն հայոցի», ինչպես նաև նրա հեղինակի մեծ արժանիքներից մեկը պետք է համարել պատմական Հայաստանում տեղի ունեցած դեպքերի և իրադարձությունների ժամանակագրական հաջորդականության ճշտումը: Նյութի մանրակրկիտ քննությունից արվող ժամանակագրական բնույթի, եզրահանգումների, դրանք հին հունական, լատինական, հռոմեական համապատասխան բնույթի աղբյուրների հետ բաղդատելու հետևանքով կատարվող ճշտումներով, Չամչյանը կարողացել է ստեղծել ժամանակագրական ճշտված ու որոշակի համակարգ, հայ ժողովրդի ամբողջ հազար չորս հարյուր տարվա համար, որն իր թերություններով հանդերձ, այսօր էլ գիտական շրջանառության մեջ է մնում»[80]:

Միքայել Չամչյանը իրականացրեց Հայաստանի հին շրջանի **պատմության տարեգրության թվագրման ամբողջացման առաջին փորձը**՝ պարբերացրել է հայոց պատմությունը, առաջադրել է պատմության ըմբռնման նոր սկզբունքներ[81]: «Նոր դարերում **հայ պատմագրության հիմնադիր** Մ. Չամչյանը հաշվում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից.

♣ հայ ժողովրդի նախահայր Հայկ նահապետը[82] ըստ Չամչյանի Բելի դեմ ապստամբել է 2853 թ. (5198 - 2853 = 2345 մ.թ.ա.)»[83]:

Սակայն բազմաթիվ ու միայն իրեն հայտնի մեթոդով հաշվարկելով Հայազունիներ թագավորման դարաշրջանը, Մ. Չամչյանը սահմանել է՝

♣ Հայկազունիներ մ.թ.ա. 2107 – 331՝ մինչ քրիստոնեության ընդունումը Հայաստանում, ընդ որում Հայկի տարեթվերը համարել է մ.թ.ա. 2107-2026 թվականները, ինչը սխալ է, քանզի այն համընկնում է Տիգրան Հայկազունու սպարապետության տարիներին: Չամչյանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ **մ.թ.ա 25- 22-րդ դարերում** Հայք-Արատտայի կառավարման ղեկը, ավելի քան 300 տարի, անցել ոչ Հայկազուն քրմերի ձեռքը, իրողությունը, որը վավերագրվել են աքքադական աղբյուրները:

---

[77] Հայկա Ա և Ք շրջաններ: Ղ. Ալիշանի կողմից հաշվարկված մ. թ. ա. 2492 -ից մինչեւ մ. թ. ա. 1032 թ և 1032թ-ից մինչեւ մ. թ. 428թ. ընկած 1460 տարի տևողությամբ երկու ժամանակաշրջանները:

Նորօրյա ուսումնասիրողները Հայոց թվականները հաշվում են այն հասցնելով անգամ «9000 տ. ա.»:

[78] **Է. Լ. Դանիելյան**, Հայկի հաղթանակի 4500-ամյակը. «..հիմնվել է հայոց բուն թվականի «Հայկի շրջանի» («Հայկայ շրջանի») պարբերականության վրա:

[79] **Ս. Ասմարյան**: Մենք ունենք Ալիշանի Հայկազունիների դարաշրջանի անբողջական ժամանակագրությանը ներկայացնելու աղբյուրների պակաս: Դրդապատճառները ավելի քան հասկանալ են՝ հայկական պաշտոնական պատմագրությունը դեռևս տառապում է 19-րդ դարում Խորենացու երկը օտար լեզուներով թարգմանած և Խորենացուն դատափետողների և հայ ու օտար ուրարտագետների ազդեցության տակ:

[80] **Քալանթարյան, կայք:** Միքայել Չամչյան:

[81] **Միքայել Չամչյան**: «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ Տեառն 1784»:

[82] **Հայկ Նահապետ**: Ժամանակակից գիտնականների մի մասը հրաժարվում է դիտարկել Հայկին որպես զուտ առասպելական անձ և հակված է ներկայացնել նրան որպես հայոց հերթական թագավոր:

[83] **Ա. Տեր-Ղևոնդյան,** նույն տեղը:

Ինքս պաշտպանում եմ Չամչյանի ժամանակագրությունը, մեկ բացառությամբ՝ **Հայկի ժամանագրություն ճիշտ է հաշվարկել Ալիշանը**: Մ. Չամչյանի ժամանակագրությունը մեջ ամողջապես ընդունել են Արմենակից սկսած ժամանակագրությունը՝

♣ **Արմենակ** որդի (2026-1980)[84]: **Արամայիս** որդի (1980-1940): **Ամասիա** որդի (1940-1908): **Գեղամ** որդի (1908-1858): **Միսակ** որդի: **Հարմա** որդի (1858-1827): **Արամ** որդի (1827-1769): **Արա Գեղեցիկ** որդի (1769-1743):

Պարիս Հերունի: «**Հայոց Հայկ կենարը**» աշխատության էջերում Հայկի և Հայկազունիների ժամանակագրությանը կազմել է նաև **Պարիս Հերունին**[85] [86]: Վերապահումներով ընդունելով Հերունու շատ «փաստարկներ», սակայն, որպես ուսումնասիրող, իմ պատքը համարեցի մեջբերել նաև գիտնականի կատարած ժամանակագրությունները:

Ըստ Պ. Հերունու **Հայկ** (ծնվ. մ.թ.ա. 2544 թ. մահ. 2444 թ): **Մասնակցություն Բաբելոնի աշտարակաշինությունը՝** մթա 2526-2495 թթ: Արամանյակ ծնվեց Բաբելոնում՝ **մթա 2526 թ**: Երբ աշտարակի մեծ մասը կառուցված էր, **Հայկի ու տեղի զորավար Բելի միջև** կոնֆլիկտ ծագեց և աշտարակի շինարարությունը դադարեց: Հայկն իր մերձավորների հետ վերադարձավ Հայաստան: Թոռան՝ **Կադմոսի** համար հիմնադրեց ամրոց-պալատը, **այսինքն Վանի հիմնադիրը Հայկն էր**, թերևս **Արամանյակը**: Արամանյակ (**մթա 2526-2426** թթ:) : Հայկի թոռը Արամանյակի որդի Կադմոսը՝ ծնվ մթա 2508 թ(**մթա 2509-2409**), Վանի իշխան է դարձել 2494 թվից, երբ 15 տարեկան էր:

Այսպիսով, **Հայկ** (մթա **2544 թ. մահ. 2444** թ)[87]:

Բել /Նեբրովթ[88]- ապրել է մթա 2559-2492 թթ[89]:

Հայկ ու Բելի պատերազմը (ճակատամարտը) տեղի է ունեցել **մթա 2492 թ.**[90]:

Հայկը հրամայել է ամեն տարի տոնել այդ հաղթանակի օրը և սահմանել է նոր տոմար: Հայ ժողովուրդն աստվածացրել է **կենար Հայկին**: Հայ հին աստղագետները Հայկի անունով են անվանել ամենապայծառ համաստեղություններից մեկը՝ այժմյան **Օրիոն**:

Ս. Գլինկան[91]: **1832 թ** գրել է Հայ ժողովրդի կազմավորման պատմությունը վաղնջական ժամանակներից մինչև ռուսական կայսրության մեջ մտնելը՝ ամբողջապես հիմնված հայկական աղբյուրների («Армянские источники») հիման վրա:.Թեպետ հայ պաշտոնական պատմագրությունը չի ընդունում մ.թ.ա. 3 - 2-րդ հազարամյակներում Հայկյան նահապետ - առաջնորդների «գոյությունը», և նրանց Բաբելոնի, Նինվեի, և խեթերի առաջին թագավորների հետ համաժամանակյա գործունեությունը, այնուհանդերձ, Հայկի և Արամի մղած պատերազմները, նաև տված ճակատամարտերի թվականները առկա են Ս. Գլինկայի գրքում: Հեղինակը գերդասությունը տալիս է Խորենացու «**Великая Арме-**

---

[84] **Մ. Հակոբյան**: նույն տեղը: Արմենակը իրականում ոչ թե անմիջապես Հայկի, այլ Հայկից սերած **Տիգրանի որդի էր**: … Հայկից հետո… Արատտան շարունակել են կառավարել քրմերը, իսկ Հայկազունիները պահպանել են բանակի ռազմական ղեկավարությունը:

[85] **Պարիս Հերունի,** . **Հայոց կենար Հայկը:**

[87] **Մ. Այրիվանցի.** Ժամանակագրության պատմություն (ռուս.):**Князья Грузинские.**Гайк и семь братьев его: Картлос, Бардос, Мовкан, Лекан, Герос, Ковкас, Егрис; Мцхита, Уплос, Абритон, Азон; при нем был Александр.

[88] **Մ.Հակոբյանը** գտնում է թե խոսքը Արևելքի տիրակալ Մեսիլիմի մասին է;

[89] **Մ. Հակոբյան**: մ.թ.ա. մոտ 2500 - ուղ. 2492;

[90] Հեղինակը հաստատել է **Ղ. Ալիշանի** հաշվարկը:

[91] **Ս. Գլինկան**: Նիկոլայ ցարի պատվերով 1832 թ գրել է **Հայ ժողովրդի կազմավորման պատմությունը վաղնջական ժամանակներից մինչև ռուսական կայսրության մեջ մտնելը՝** Պատմությունը հիմնված հայկական և հայագիտական աղբյուրների՝ «Армянские источники»՝ Խորենացու, Սեբեոսի,Ալիշանի, Չամչյանի, նաև արևմտաեվրոպական գիտնականների ուսումնասիրությունների հիման վրա: Ի.Ստալինի ցուցումով արգելվել է գրքի տարածումը: Ստեղծվեց մի նոր պետության՝ Ուրարտուի պատմությունը, հիմնվեց ուրարտագիտության ճյուղը՝ վաղ հայկական պետականությունների պատմագրությունը ստորադասվեց Ուրարտուի պատմությանը, ընդ որում, Ուրարտուն կտրվեց հայկական արմատներից, լավագույն դեպքում նրա մշակույթի «ժառանգորդներ» հայտարավեցին հայերը, վրացիները և ազգերիներ:

ния»[92] և հայ պատմիչներին մատենագրական պատմագրությանը, ի տեղի մեջբերելով Ղ. Ալիշանի և Մ. Չամչյանի Հայկազունիների դարաշրջանի ժամանակագրությունները: Հայկական աղբյուրներից բացի, Ս. Գլինկան օգտագործել է հայ-մեդիական, հայ-ասսուրական և հայ-խեթական հակամարտությունների առթիվ եղած հույն պատմիչների և 18-19-րդ դարերի Հին Արևելքի հայտնի հնագիտական ուսումնասիրություններ:

Իր բոլոր թերություններով հանդերձ (հեղինակը կրկնել է Կտեսիասի և Դիադորի՝ Նինոս, Արամ և Բարզանես հույն պատմիչների ոչ հավաստի տեղեկությունները), ռուս պամաբանի երկում, այն էլ ընդգծված կերպով, առկա է հետաքրքիր մի երևույթ. ռուս պատմագրողի համակրանքի **Հայկի և Բելի պատերազմում՝ Հայկի կողմն է, իսկ Արամ - Նինոս և Արա Գեղեցիկ – Շամիրամ հակամարտություն մեջ**, հեղինակը մեծարել էլ **հայերի առաջնորդ հայկյան Արամին և Արա Գեղեցիկին**: Հայկազունի թագավորներին Գլինկան ներկայացրել է որպես **արդար, ազնիվ** և **արդարամիտ, նաև հայրենասեր** և **ուժեղ զորավարները**, իսկ Բելը, Նինոսը և Շամիրամը՝ բռնակալ, խորամանկ և դավադիր տրակալներ են:

Ս. Գլինկայի ուսումնասիրության էջերում արտացոլված է պարսկական և թուրքական լծի տակ ընկած **Մեծ Արմենիայի** Նահանգների, գավառների, քաղաքների և բնակավայրերի մասին հանրագիտարանային տեղեկությունները, ինչը Հայաստանը նվաճել ձգտող ռուսական կայսրության համար ուներ ռազմավարական, իսկ հայերիս համար՝ ճանաչողական նշանակություն, քանզի Ս. Գլինկայի գիրքը թե՛ մեր ժողովրդի վաղնջական ժամանակներից մինչև 19-րդ դարը պատմական տեսություն է, և թե՛ 18-19-րդ դարերի Հայաստանի Տեղանունների Բառարան:


ОБОЗРѢНІЕ
ИСТОРІИ
АРМЯНСКАГО
НАРОДА
ОТЪ НАЧАЛА БЫТІЯ ЕГО ДО
ВОЗРОЖДЕНІЯ ОБЛАСТИ АРМЯНСКОЙ
ВЪ РОССІЙСКОЙ ИМПЕРІИ.

СОЧИНЕНІЕ СЕРГѢЯ ГЛИНКИ.

ЧАСТЬ ПЕРВАЯ.

60

порабощали порубежныхъ ея жителей. Другіе предполагаютъ, что вторженіе Мидянъ произошло подъ начальствомъ Некеря *Медеса*, и что Арамъ въ продолженіи двухъ лѣтъ, неусыпно занимаясь средствами къ изгнанію Мидянъ, собралъ войско, не только сильное числомъ, но и устройствомъ, напалъ на угнѣтителей, поразилъ ихъ, изгналъ и плѣнилъ полководца ихъ Некеря Медеса. Темная налегаетъ тѣнь на славу избавителя Арменіи, если онъ съ узникомъ своимъ поступилъ съ тою жестокостію, о которой упоминаетъ Варламъ *Вагановъ*.

Война съ Ассиріянами. Ассирія, первоначальное гнѣздо Азіятскаго деспотизма. 1820 л. до Р. Х.

Ассирія простиралась между Тигромъ и Ефратомъ до малой Азіи, Арменіи, Мидіи, Персіи, Пустой Аравіи и Сиріи. Впрочемъ трудно съ точностію опредѣлить предѣлы державы Ассирійской, постепенно поглощавшей области и народы. Обыкновенно полагаютъ ихъ между *Тигромъ* и *Ефратомъ*, тамъ, гдѣ сіи двѣ рѣки начинаютъ сближаться, выходя изъ *Месопотаміи*, не подалеку отъ впаденія своего въ заливъ *Персидскій*. Многочисленныя войска,

Մեր Հակոբյան: **Հայկազունիներ** (մ.թ.ա. 3000-1561), **Մոռացված մի արքայատոհմ**[93]: Հեղինակը ամբողջացել է հայ մատենագրության, հույն պատմիչների, նաև Հին Արևելքի, այդ թվում Միջագետքի և Եգիպտոսի մասին եղած պատմագիտական և հնագիտական նյութերը, ամբողջապես վերականգնելով Մ. Խորենացու «Հայոց մեծերի ծննդաբանությունը» բաժնի հայկազունի նահապետների ռազմական արշավանքների տարեգ-

[92] **Вели́кая Арме́ния** (арм. Մեծ Հայք [mets hajkʰ], др.-греч. Μεγάλη Ἀρμενία, лат. Armenia Magna, пехл. Buzurg Armenā, груз. დიდი სომხეთი, реже используется название Большая **Армения**)

[93] **Մեր Հակոբյան**: **Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք** (**Հայկազունիներ**): Գիրք Առաջինի (մ.թ.ա. 3000-1561), **Մոռացված մի արքայատոհմ** (ինտերնետ տարբերակ):

րությունը, դրանք համադրել մեդիա-մարական, Ասորեստանի, խ(հ)եթական աղբյուրագիտության հետ:

Հայագիտության բնագավում նշանակալի վաստակը պետք է համարել, իմ կարծիքով, հեղինակի կողմից «Հայկազունիներ և ոչ հայկազուններներ» պատմական ժամանակաշրջանի իրադարձությունների ճշգրտումը, և հստակեցում: Պատճառա-հետևանքային հիմնավորմամբ և շումերա-աքքադական աղբյուրների հիման վրա, հեղինակը պարզեցրել, և առեղծվածից՝ պատմական հիմքի վրա է դրել Հայկ նահապետի մահից հետո, հայկազունիների պարտությունը Արատտայի քրմերին, երբ Հայկի ժառանգները չկարողացան պահել իշխանությունը՝ երկրի ղեկավարումը անցել էր ոչ հայկազունի քրմերին (Խորենացու կամ նրա աղբյուրները, նաև «Հայկյան ժամանակագրությունը» հաշվարկած Ալիշանն և Չամչյանը, չէին տիրապետում այս ամենի մասին հաղորդող աքքադական աղբյուրներին[94], այդ իսկ պատճառով, նրանց մոտ բացակայում է **ոչ հայկյանիների** պատմագրությունը):

Արատտայի **ոչ հայկազունի** քրմերը Հայկական լեռնաշխարհի վրա իշխել են ավելի քան 300 տարի՝ **մ.թ.ա. 3-հազարամյակի 2411 թվականից մինչև մ.թ.ա. 2107 թվականը**: Ամենայն հավանականությամբ քրմերը հաստատել էին քրմապետական կարգեր և վերականգնել էին երկրի Արատտա անվանումը: Հայկազունները, այնուամենայնիվ, պահպանեցին բանակի հրամանատարությունը:

Այդ տարիները նշանավորվեցին Արատտայի կողմից Հին Արևելքի վրա մոտ 100 տարի տևած հայկական գերիշխանություն հաստատման իրողությամբ:

Այնուհետև, հեղինակը աքքադական, **ասուրա-բաբելական** պատմագրության ուսումնասիրությունների (նաև 20-րդ դարում արված հնագիտական հայտնագործությունների լույսի ներքո) հիման վրա, ներկայացրել է ոչ հայկազունիների քրմերի մղած պայքարը աքքադական տիրակալներ Սարգոն Աքադացու և Նարամ-Սուենի նկրտումների դեմ, ընդորում, հաստատում է հայկազունիներից Տիգրան Հայկյանի[95] հայկական բանակի հրամանատար լինելու **աքքադական աղբյուրների հաղորդումը**, ըստ որի հեղաշրջման միջոցով Արատտայում կրկին իշխանությունն անցնում է **Հայկազունի արքայատոհմին**: Հեղինակը հիմնավորել է հայկազունիների դեպի Այրարատ աշխարհ տեղաշարժի դրդապատճառները՝ պայմանավորված ասսորա-բաբելական և մարա-մեդիական ագրեսիայով: Շարադրել է Հայկյան նահապետներից Արմենակի տոհմակիցների տեղաշարժը դեպի հյուսիս-արևելք. 2-րդ հազարամյակի 20-րդ դարում Արամայիսի կողմից Արմավիրի հիմնադրման իրողությունը, մանրամասը պարզաբանել է Արամ Մեծի կողմից ագրեսիվ հարևանների նկրտումների դեմ՝ Հայկական լեռնաշխարհը կլանելու ախորժակի փակումը՝ երեք-չորս ճակատամարտերում Հայկյան Արամը ջախջախում է մարա-մեդիական ցեղախմբերի, ասորաց Նինոսի, խեթ Քաաղյանի բանակները և Հին Արևելքի վրա Արամ Մեծի կողմից հաստատվում է կենդարից ավել տևած հայկական աշխահակալություն:

Հեղինակը, ըստ իս, պատմագիտական հիմնավորումներ է տվել Արա Գեղեցիկ օրոք հայ-ասուրական և հայ-բաբելական հակամարտությանը, որի արդյունքում զոհվեց հայոց երիտասարդ արքան: Հայքի թագավորությունը ստիպված էր միայնակ դիմակայելու ասուրա- բաբելական դաշինքի՝ Սեմմիրամաթ-Շամիրամի գլխավորած բանակներին[96]: Այրարատ աշխարհ ներխուժելու օրերին, ռազմի դաշտում, զենքը ձեռքին զոհվեց հայոց երիտասարդ արքա Հայկյան Արան…

Դժվար է գնահատել կամ գերագնահատել Հայկ նահապետի, ոչ հայկազունիների և «առաջին հայկյանների», մանավանդ Արամ Մեծի, Արա Գեղեցիկի և Անուշավան Սոսանվերի պատմագրության առթիվ Մ. Հակոբյանի կատարած աշխատանքը: Ընդհանուր առմամբ հավատարիմ մնալով Խորենացու տեքստին, հեղինակին հաջողվել է, պարզել և հստակեցնել, հարստացնելով Խորենացու Պատմության «Հայոց մեծերի ծննդաբանության» առաջին հայկազունիների պատմագրությունը, իսկ պակաս ցանկերը և ժամանակագրությունները լրացվել են աղբյուրագիտական նոր տվյալներով:

---

[94] Տես՝ Մոռացված մի արքայատոհմ և Հայ ժողովրդի առաջնորդները:

[95] **Տիգրան Հայկյանը** անունը բացակայում է Խորենացու և Սեբեոսի հայկյանների արքայացանկում:

Հեղինակը փաստա-վավերագրական պատմագրություն, նաև միջագետքի սեպագիր արձանագրությունների տվյալները իրար համադրելու և հակադրելու միջոցով, ստեղծել է **մ.թ.ա. 3- 2-րդ հազարամյակների** պատմական դեմքերի և անձերի պատմագրություն, իսկ **ոչ հայկազունիներ** առթիվ պակաս էջերը, լրացրել է **այլ աղբյուրներից**: Հեղինակը հայագիտության և միջագետքյան աղբյուրներով ճշտել, ճշգրտել և հաստատել է **ոչ հայկազունիներ և հայկազունիների**՝ Խորենացու առաջին հայկազունիների գահակալման առթիվ Ղ. Ալիշանի և Մ. Չամչյանի կողմից կազմած ժամանակագրությունը, մղած պատերազմների տարեթվերը, ճակատամարտերի տեղերի, իրադարձությունները և դրանց մասնակիցների դերակատարումը, և համապատասխանությունն ու անհամապատասխանությունը Հայքի և Նինվեի, նաև խեթական աղբյուրներին:

Համլետ Ս. Մարտիրոսյան: Հայկական ժայռապատկերների, հայ և օտարերկրյա գրային և հնագիտական ձեռքբերումների միջոցով, հիմնավորել է հայկյանների առաջնորդ=հիքսոսների կողմից Մանաթոն պատմիչի հիշատակած հիքսոսների արշավանքներից մեկ հազարամյակ առաջ, դեռ 3-րդ հազարամյակում Ար-ամեն-ազդու=«Արմենն զորավար» **Արմենի** գլխավորությամբ Նեղոսի գետաբերանում ստեղծած Եգիպտոսի հայկական թագավորությունը հիմնադրումը: Գրքի «Ավանդական պատմագրության տվյալները և հիքսոսները» բաժնում, Հայկական մատենագրության և սեպագրերի փաստագրումների հիման վրա, հեղինակը վերականգնել է **Հայքի**, **Ասորեստանի** և **խեթական** թագավորությունների միջև **2-րդ հազարամյակի 19-18-րդ դարերի** քաղաքական իրավիճակը, երբ երեք պետությունների միջև բռնկվեց դեպի Միջերկրական ծովի արևելյան ափերը և դեպի Եգիպտոս տանող՝ համաշխահային առևտրական ուղիների և ճանապահների հակամարտությունը. «*Եգիպտոսում հիքսոսների տիրապետության ժամանակաշրջանը համընկնում է **Արամից** մինչև **Արքակ** ընկած ժամանակահատվածին: Հետևաբար կարող ենք փաստել, որ հայոց **Արամը թագավորել է** Առաջավոր Ասիայում կատարված ամենաբուռն պատմական գործընթացների ժամանակ. Ք.ա. 1813 թ Աշշուրը գրավում է և իր բռնատիրությունն է ստեղծում ամորեացի **Շամշի Ադադ Ա**-ն, Ք. Ա. 1792 թ (ըստ միջին ժամանակագրության) Բաբելոնին տիրում է ամորեացի **Համմուրապին**, Եգիպտոսում փարավոնների 12-րդ դինաստիայի անկումից հետո Ք.ա. 1785 թ սկսվում է 13 և 14 զուգահետ դինաստիաների տիրապետությունը, որի ժամանակ Եգիպտոսում հայտնվում են հիքսոսները*»[97]:

Հարևանների հետ հակամարտությունը հաղթանակներ բերեց Հայկյան Արամի գլխավորած Հայքի թագավորությունը: **Նինվեի Նինոս** և **խեթերի Պայապիս Քառայան** հակառակորդների դեմ Արամի տարած հաղթանակների հետևանքով, Առաջավոր Ասիայում ստեղծվեց քաղաքական նոր իրավիճակը. Միջերկրականի հարավ-արևելյան ափերը հասած հայկական բանակներ իրականացնել արշավանք Եգիպտոս: Եգիպտոս կատարած արշավանքը իրականացրեցին հիքսոս-առաջնորդները, ինչը պատմագիտության մեջ հայտնի է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 18-րդ դարում Եգիպտոսի վրա հիքսոսների կողմից Եգիպտոսի նվաճումը: Հեղինակը չի բացառել, որ Եգիպտոս կատարած արշավանքը կատարվել էր Հայկյան Արամի գլխավորությամբ. «Արամի զորական ուժի ճնշման տակ անցնում է Եփրատը և վերադառնում Սիրիական տափաստան, Պաղեստին և ապա, ամենայն հավանականությամբ, ներխուժում իշխանական ճգնաժամի մեջ գտնվող և թուլացած Եգիպտոս»[98]:

Հեղինակը Մովսես Խորենացու մատենագրության, Մանեթոնի և հայագիտական մի շարք ուսումնասիրությունների պատճառա-հետևանքային և համամատական քննությամբ՝ պատմագիտական փաստարկումներով է վերականգնել հայ = հիքոսների կողմից Եգիպտոսի նվաճման իրողության սպիտակ էջերը:

---

[97] **Համլետ Ս. Մարտիրոսյան**: «**Հայոց հնագույն պատմության էջեր**»: «Ավանդական պատմագրության տվյալները և հիքսոսները»: Էջ՝ 221

[98] **Համլետ Ս. Մարտիրոսյան**: Նույն տեղը: Էջ՝ 231:

Հայկական աղբյուրներ կամ «Армянские источники»[99]. Պատմա-հնագիտական տերմին է: Ներկայումս օտարները, ուղղակի, թե անուղղակի հղումներով, հայկական աղբյուրներով են ճշգրտվում Հին Արևելքի երկրների պատմությունը և պատմական ժամանակագրությունները: Այսինքն, հայ միջնադարյան պատմիչների նկատմամբ 19-20-րդ դդ եղած բացասական և քննադատական վերաբերունքից, պատմագիտությունն ընդհանրապես, հայագիտությունը մասնավորապես, անցում է կատարվել դրական միտմանը:

Ինտերնետ կապը հասանելի է ամենուր, և համաշխարհային պատմության ուսումնասիրությունները ձեռազատել է 19-20-րդ դարերի պատմագիտական և հնագիտական կարծատիպերից և կապանքներից: Ներկայումս Հին Արևելքի, Միջագետքի և «Անատոլիայի»[100] հնագիտական ձեռքբերումների պատմաշինարարությունը կամ ժամանակագրությունների կազմումը, անհնարին է հաստատել, առանց դրանք համադրելու հայկական մատենագիտական աղբյուրների հետ, մանավանդ հինգերդ դարի այնպիսի մեծության պատմագիրության հետ, ինչպիսին Մովսես Խորենացու Պատմությունն է:

Այն հարցին, թե ինչո՞ւ հենց «Հայկական աղբյուրներով», գաղտնիք բացած չենք լինի փաստագրել, որ մ.թ.ա. 3-2 հազարամյակների միջագետքյան և մ.թ. ա. 2-րդ հազարամյակ խեթական արձանագրությունները վավերագրել են միայն իրենց առաջնորդների, եղած ու չեղած նվաճումները: Ըստ էության դրանք **միևնույն տրաֆարետներն են**՝ տարբեր սեպագրով և միայն փոխած են գործող անձերի և տեղանունների ցանկերը: Հայկական աղբյուրների հետ համադրող պատմաբանները **մեծ կասկածանք ունեն** ասորաց և խեթերի տիրակալների **ազնվության և «փաստագրումների»** վրա: Խորենացու և հայ պատմիչների մեղքը չէ, որ **Հին Արևելքի հնագիտությանը և սեպագրության** հետ **մրցավազքում**, միջնադարյան հայ պատմագրությունը տանուլ էր տվել, անհարկի դուրս մղվելով համաշխարհային պատմագրության էջերից:

Այսինքն, հնագետների այն պնդումները, թե **պատմագիտության հիմքը հնագիտություն է**՝ փլզվել է Նինոսի և Անիտայի, նաև հետագա ասուրական պարծենկոտ տիրակալների **պատմաշինության** կեղծիքով: Մի շարք չեզոք և ազնիվ պատմաբաններ և հնագետներ շարադրելով Հին Արևելքի պատմությունը, այլևս «անվիճելի չեն» համարում ասուրական, բաբելական, խեթական, եգիպտական սեպագիր արձանագրությունները, հունական պատմիչների երկերը և ս. գիրքը: Ճիշտ է, օտար պատմաբանները իրենց տարեգրություններ ստեղծելիս ազնիվ չեն՝ չեն տալիս **Խորենացու** կամ **Չամչյանի** անունները, սակայն ակնհայտ է, որ նրանք իրեն պատմագրության ճշգտում են «**Армянские источники**» - հայկական աղբյուրներով՝ լրացնելով **մ.թ.ա. 3-րդ և 2-րդ հազարամյակներում** հայ-ասուրական, հայ-բաբելական և հայ-խեթական հակամարտությունների սպիտակ էջերը, հաստատելով Առաջավոր Ասիայում երեք պետությունների իրար դեմ մղված պատերազմների վավերականությունը: Ըստ այդն,Հին Արևելքի պատմագրությունը ուսումնասիրող և ոչ մի պատմաբան, չի կարող պնդել, թե գոյություն ունի Խորենացու պատմագրությանը համահավասար Ասորեստանի, խեթերի թագավորության կամ Հայկական լեռնաշխարհին հարևան երկների 3-1-ին հազարամյակների ամբողջական պատմագրություն:



Արմավիր: «Հայկի և Բելի պատերազմը» բերելեֆ մշակույթի տան սրահում:

[99] «Армянские источники». Ներկայումս օտարների կողմից օգտագործվող պատմա-հնագիտական տերմին՝ որոշելու Հին Արևելքի տիրակալների և պատմության Ժամանակագրությունները:

[100] Արևմտյան Հայաստանի հայկական մշակության արժեքները, այդ թվում Վանի (Ուրարտու) թագավորության հնագիտական գտածոները, ներկայացվում է «Անատոլիական մշակույթ»-ի անվան տակ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

«ՉԿԱ ՍՏՈՒՅԳ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ»

Ի տարբերություն ժամանակագրությունից զուրկ պարծենկոտ և հավակնոտ հին արևելյան տիրակալների արձանագրությունների, Խորենացին մեր պատմիչներից առաջինն էր, որ սահմանեց, թե «…չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության»[101], սահմանելով առաջին հայկյանների և նրան ժամանակակից ասուրական և խեթական տիրակալների համաժամանակագրությունը: Ներկայումս հայկական աղբյուրների («Армянские источники») հիման վրա (ըստ Ղ. Ալիշանի) «Հին հայկյան տոմարը» սկսվում է Թորգոմ նահապետի որդի Հայկից՝ 3-րդ հազարամյակի 25-րդ դարից (Հին հայկական տոմարը՝ **4428 թվականից**):

Խորենացին ստույգ կերպով սահմանել է,

ՀԱՅԿ

☼ Հայկի ժամանակակիցը Բելն էր՝ Հին Արևելքի տրակալը[102]:

♣ Ըստ Ալիշանի՝ 3-րդ հազարամյակի 25-րդ դար՝ տարածաշրջանների համար մղվող պատերազմներ Նոյի ծոռների և կոռների միջև: Բելի սպանությամբ, Հայկը վերջ է դրել Հին Արևելքի միահեծան տիրապետությանը:

Հայկական լեռնաշխարհի տիրակալ - **կայրս**[103] է դառնում Թորգոմի որդի Հայկը:

♣Հայկ: Ըստ Ղ. Ալիշանի՝ մ.թ.ա.2492-2411: Ըստ Խորենացու «մեր երկիրը մեր նախնի Հայկի անունով կոչվել էՀայք»[104]:

ՈՂ ՀԱՅԿԱԶՈՒՆԻՆԵՐԻ 300-ԱՄՅԱ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայկի մահից հետո Հայքում իշխանությունը անցնում է Արատտայի քրմերին[105]:

♣ Ըստ աքքադական աղբյուրների՝ **3-րդ հազարամյակի 25-րդ դարի 40-ական** թվականներից մինչ **մ.թ.ա. 22-րդ դարի** առաջին հայուրամյակ՝ Արատտայի քրմապետություն՝ մ.թ.ա. 2411-2109:

♣ Հայկազունիները պահպանում են Արատտայի բանակի հրամանատարությունը:

ՀԱՅԿՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ

2-րդ հազարամյակի 22-րդ դար:

♣ Ըստ աքքադական աղբյուրների Տիգրան Հայկյանը վերականգնում է հայկյանների քաղաքական իշխանությունը[106]:

♣ Հայկյան արքայատոհմի տեղաշարժը դեպի հյուսիս-արևելք և նրանց հաստատվելը Այրարատ աշխարհում[107]:

---

[101] **Մ. Խորենացի**, ՀՊ: Էջ՝ 217:

[102] **Բել:** Աստվածաշնչում Բելը հիշատակված է Քամյան Քուշի որդի Նեբրովթ անունով՝ որպես քաջ և հսկա որսորդ: Հռչակվել է Բաբելոնի առաջին թագավոր, ընդարձակել է տիրակալությունը: Բել-Նեբրովթի պաշտամունքը Բաբելոն է ներմուծվել Եթովպիայից: Մովսես Խորենացին նույնպես Բել-Նեբրովթին անվանում է բնիկ եթովպացի:

[103] **Պ. Հերունի**: Հայոց կենսար Հայկը: Ըստ Աստվածաշնչի, **հայոց կենսար** Թորգոմը՝ **Հայկի** հայրը, Նոյյան որդի Հաբեթից հետո երրորդն էր:

[104] **Մ. Խորենացի**, ՀՊ: Էջ՝ 89:

[105] **Մ. Հակոբյան**: Մոռացված մի արքայատոհմ: Աքքադական աղբյուրներ:

[106] **Մ. Հակոբյան**: Մոռացված մի արքայատոհմ: Նույն տեղը:

☼ Մ. թ.ա, 1980 թվական: Հայկյան Արամայիսը հիմնադրում է Արամայիրը[108]:
♣ Արմավիրը Հայքի մայրաքաղաք:

ՀԱՅԿՅԱՆ ԱՐԱՄ

☼ **Ըստ Խորենացու Հայկյան արքայատոհմի վեցերորդ ներկայացուցիչն էր:**
♣ Հայկյան Արամը ապրել և գործել է ըստ Մ. Չամչյանի 2-րդ հազարամյակի 19-18-րդ դարերում:
♣ Արատտայի վերանվանումը՝ Հ Ա Յ Ք:
♣ Մ.թ.ա. 1827 թվական: Արատտան հռչակում է Հայքի թագավորության:
☼ **Մ.թ.ա.** 1827- 1769: Արամը՝ Հայքի թագավոր:

ԱՇՇՈՒՐԻ ՏԻՐԱԿԱԼ ՆԻՆՈՍ(ՆԵՐ)

♣ Աշուրի տիրակալ էր Բարշամը:
♣ **Ըստ Խորենացու Արամի ժամանակակից ասորաց արքան էր Նինոս Ա**[109], ըստ Ասորեստանի պատմության արքայացանկի՝ Ճամշի Ադադ Ա:
♣Իշմե- Դագանը[110]: Ճամշի Ադադ Ա փոխարինող արքան էր: Խորենացին **նույնացել է երկու նինոսներին**՝ Ճամշի Ադադ Ա և Իշմե- Դագանին:
Սեմմիրամաթ[111] – Ճամիրամ: Իշմե- Դագանի առաջին տիկինը, թագուհի:

ՀԱՅԿՅԱՆ ԱՐԱ – ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ

♣Արա Գեղեցիկ, փոխարինել է Հայկյան Արամին: Ըստ Չամչյանի՝ Արա Գեղեցիկ, կառավարել է 2-րդ հազարամյակի 18-րդ դարի 60-40-ականն թթ (մ.թ.ա 1769-1743):

Ըստ Խորենացու Արա Գեղեցիկի ժամանակակիցն էր Նինվեի տիրակալ Նինոսը կամ **Ճամշի Ադադ Ա** : Ըստ **Ասորեստանի պատմության** արքայացանկի, Ճամշի Ադադ Ա մահացել էր մ.թ.ա. 1781 թվին , երբ դեռ Արամ Մեծը կենդանի էր: Նինոսին հաջորդել էր որդին՝ Աշուրի նոր տիրակալ Իշմե- Դագանը[112]:

♣ Իշմե- Դագանը՝ մ.թ.ա. 1781-1757: Արա Գեղեցիկի ժամանակակից արքա:

Սեմմիրամաթ-Ճամիրամը (Իշմե- Դագանը) կինը[113]: Արա Գեղեցիկի օրոք Աշուրի թագուհի, Հայկյան Արայի դեմ արշավանք նախաձեռնող թագուհին:

♣ Բաբելոնի տիրակալ Համմուրապին:

---

[107] **Գ. Խ. Սարգսյան:** Մովսես Խորենացու- «Հայոց պատմությունը» և սեպագիր աղբյուրները:

[108] **Մխիթար Այրիվանցի** «Ժամանակագրական պատմություն» (ռուսերեն):

[109] Նինոսը՝ Խորենացու տված անունն է՝ Պատմահայրը նույնացնում էր Ասորեստանի արքաներ Ճամշի-Ադադ Ա և Իշմե-Դագանին:

[110] Տես՝ **Ասորեստանի պատմություն** (Ասորեստանյան արքաների արքայացանկ):

[111] **Семирамида** либо ***Семирамис,Шамирам, Шаммурамат*** (др.греч. Σεμίῥαμις, арам. ܫܡܝܪܡܬ; арм. Ճամիրամ) **в аккадской** и древнеармянской мифологиях легендарная царица Ассирии, супруга легендарного царя Нина, убившая его хитростью и завладевшая властью. Историческим прообразом Семирамиды является ассирийская царица **Шаммурамат** (812—803 гг. до н. э.), известная фактически лишь тем, что правила единолично, что является чрезвычайно редким явлением в странах Древнего Востока. В образ Шамирам-Семирамиды вплелись также черты некоторых богинь, в частности - месопотамской богини любви Иштар (Истар). С именем Семирамиды традиционно связывают висячие сады Семирамиды, одно из семи чудес света.

Շուշանիկ Վ. Շիլեյկո: Ճամիրամի անունը, ինչպես նաև «Ճամիրամի կախովի այգիներ» բառակապակցությունը հանդես են եկել **2-րդ հազարամյակում**: Սխալ էին Դիոդորն ու իր «աղբյուր» Քտեսիասը, Ճամիրամ Ա խառնելով մ.թ.ա. 8-րդ դարի տղամարդու հագուստի տակ «Ծպտված Ճամիրամի» հետ:

[112] **Ճամշի Ադադ Ա** և **Իշմե- Դագանը** Խորենացու մոտ հանդես են եկել մեկ Նինոս անվան տակ:

[113] Ասորեստանի պատմության 2-րդ հազարամյակի 50 – 43 = 1714 արքայացանկում բացակայում է **Սեմմիրամաթ-Ճամիրամը** անունը:

Шаммурамат. О Шамирам-Семирамиде в древности существовало множество мифов и легенд, часть которых дошла до нас в трудах греческих авторов **Ктесия, Диодора** и др.

ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԱՐՔԱՆԵՐ

Ներկայիս հնագիտական ուսումնասիրություններով և պատմագրությամբ է ճշգրտված, որ հինգերորդ դարում Խորենացին ճիշմարիտ էր վավերագրել **հայկական, ասուրական և խեթական թագավորությանների** և **նրանց արքաների համաժամանակյա կառավարումը**, միայն մի տարբերությամբ, Խորենացին հարևանների արքաներին տվել է Հայաստանում ընդունված անուններով:

Ըստ Խորենացու **ազգաբանական շարի** (համաժամանակյան գործիչները).

☼ հայոց **Արամ:**

((ըստ **Չամչյանի** ժամանակագրությամբ՝ **մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1827-1769 թթ**),

☼Նինվեի (**Աշուր -** Ասորեստանի) տիրակալներ **Բարշամը:**

(**Էրիշում** 2-րդը՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1818-1813 թթ: Խորենացու մոտ **Արշամ - Բ/վ/ար-շամն** է):

☼ **Նինոսը** (**Շամշի-Ադադ Ա:**

(ըստ **Ասորեստանի պատմության**՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1813-1781 թթ)):

Խեթերի **թագավոր Անիտան** (**Պայապիս Քաղյան**, ըստ **խեթական պատմության** մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1810-1790 թթ)):

Եբրեայեցի (առաջին հրեա) **Աբրահամ** :

Ըստ **Գրիգորյան օրացույցի**՝ ծնված մ.թ.ա. **1812** թ.:

Համաձայն Եվ. Կեսարացու կողմից վերականգնած ժամանակագրությանը՝ Աբրահամը Շամիրամի ժամանակակիցն էր, այսինք, Աբրահամը ծնվել է 19-րդ դարի վերջերին կամ 18-րդ դարի սկզբում[114]:

Հետևություն: Մեր կարծիքով մ.թ.ա. 19-18-րդ դարերը լիովին համընկնում են Մ. Խորենացու հիշատակած «**ազգաբանությունների շարը**»՝ **Աբրահամ**, **Նինոս** և **Արամ**, միայն մեկ դիտողությամբ, որ հերթականությունը խախտված է, պետք է լիներ Արամ, Աբրահամ[115] և Նինոս:

☼ **Արա Գեղեցիկ -** մ.թ.ա. 2-րդ հազ-ի **1769-1743** (ըստ Չամչյանի):

☼ **Իշմե- Դագանը -** մ.թ.ա. 2-րդ հազ-ի **1781-1757** (ըստ Ա-նի արքայացանկի):

Սեմմիրամաթ – **Շամիրամ** (**Շամիրամ**ի փոխարեն Նինվեի արքայացանկում նշված է **Մուտ-Աշկուր** անունը, ինչը չի համապատասխանում նաև Աստվածաշնչյան մի քանի տարեգրություններին, որտեղ Ասորեստանի արքա է նշված **Արին**:

☼ **Համմուրապին** մ.թ.ա. 2-րդ հազ-ի **1792-1750** (ըստ Բ-նի արքայացանկի):

Որպես պատմիչ-պատմաբան, Խորենացին **փաստագրել է** հայ մեդիա-մարական ցեղախմբերի, հայ ասուրական և հայ-խեթական համարտության և նրանց միջև սանձազերծված պատերազմների պատճառա-հետևանքային կապը, անուն առ անուն թվարկում է համաժամանակյա գործող անձեր վարքը, պատերազմական գործողությունների հերթականությունն ու տեղը, հայ-մեդիա- մարական ցեղախմբերի, հայ-ասուրական, հայ-խեթական հակամարտության ելքը և արդյունքները՝ ամբողջացնելով մի ամբողջ դարաշրջանի՝ 2-րդ հազարամյակի 19-18-րդ դդ պատմական իրադարձությունների տարեգրությունը, երբ ասուրական և խեթական **աղբյուրները վավերագրել** են միայն իրենց արքաների «**լայնածավալ նվաճումների տարեգրությունները**», ինչը պատմաշինության բացասական դրսևորում է, և ինքնին, ոչ հավաստի «պատմագրության» օրինակ:

---

[114] **Հրեական ավանդական ժամանակագրություն**: Աբրահամ, **ծնվել է 1900 թվականին**, Խառան է տեղափոխվել 1825 թվականին:

[115] **Ծանոթություն**: Խնդիր չենք ունեցել վիճարկելու այլ ազգեր, այդ թվում Աբրահամի **պատմական անձ**, **ոչ պատմական անձ** լինելու հարցը: Ինքս Խորենացու վերանշյալ **շարը** ընդունում եմ այնպես ինչպես կա, ունենալով այդ շարի հերթականությունը ճշտելու խնդիր:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐՔԱՅԱՔԱԿԱՆ ԴԻՎԱՆՆԵՐ ԵՎ ՎԻՄԱՔԱՐԵՐ:
ԱԲԳԱՐ ԹԱԳԱՎՈՐԻ ԵԴԵՍԻԱՅԻ ԴԻՎԱՆԸ

ԴԻՎԱՆՆԵՐԻ ՄԻԳՐԱՑԱՆ

Մար Աբասի Պատմության ավարտի վերջում Խորենացին, հղում անելով Ափրիկանոսի ժամանակագիրներ **Հովսեպոս** և **Հյուպոլիտան** հույներին , գրում է, թե (հայոց արքունական) դիվանները «*ամբողջապես փոխադրեց ինչ-որ Եդեսիայի, այսինքն՝* ***Ուռհայի դիվանում*** *գրվածքներ կային մեր թագավորների մասին: Այս մատյաններն անտեղ փոխադրված էին* ***Մծբինից*** *և* ***Պոնտոսի Սինոպից*** *մեհենական պատմություններից: Թող ոչ ոք չկասկածի, որովհետև մենք ինքներս մեր աչքով տեսանք այն* ***դիվանը***» *կամ «Եվ մերձավոր վկա ու երաշխավոր թող լինի Եվ. Կեսարացու եկեղեցական գիրքը, որը մեր երևելի ուսուցիչ Մաշտոցը թարգմանել տվեց հայերեն…(նրա) առաջին դպրության 13-րդ գլխում*[116] *(կգտնեք՝ կա վկայություն, հեղ.), թե* ***Եդեսիայի դիվանում*** *եղել են մեր առաջին թագավորների բոլոր գործերը մինչև Աբգար և Աբգարից հետո մինչը Երվանդ»*[117]*:*

Խորենացին վավերագրելով արքունիքի դիվանների գոյության իրողությունը, հիշատակում է **Աբգար թագավորի դիվանի գոյության մասին**, գրելով, որ Աբգարը որոշեց հռոմեական կայսրության զորքերի արշավանքներից պաշտպանվելու համար «*Եփրատի (գետի) անցքի վրա*» կառուցել նոր քաղաք՝ Եդեսիան, (Մծբինից) նոր քաղաք տեղափոխելով ամեն ինչ.«*…նույնպես և մեհյանների վարժարանի մատյանները և առահասարակ թագավորների դիվանները*»[118], անգամ «***հռոմացիների***» Եդեսիայի դիվանը և դիվանային գործի՝ ասորերն և հունարեն լեզվով **դպրոց հիմնեց**: Խորենացին անուղղակի կերպով պատասխան է տվել այն հարցադրմանը, թե ինչու հայոց մայրաքաղաքներում չեն պահպանվել արքունական դիվաններ, որ «*հռոմացիները Հայաստանից, Միջագետքից և Ասորեստանից Եդեսիա քաղաքում են ժողովում բոլոր դիվանները, և հիմնում են երկու դպրոց, մեկը տեղական ասորական և մյուսը հունական: Այնտեղ են փոխադրվում*

♣*հարկերի դիվանը,*

♣*նաև մեհենական դիվանը, որը գտնվում էր պոնտացիների Սինոպ քաղաքում*»[119], սակայն չի գրել, թե հայկական դիվանները ինչպես էին հասել Սինոպ:

Պամահայրը հիշատակել է երեք անձերի անուններ, որոնք փորձ են արել գրել պատմությունը, սակայն իր համակրանքը Խորենացին տածել է Բարդածանի հանդեպ, որը «*Անի ամրոցում կարդում էր* ***մեհենական պատմություններ****, որոնց մեջ նաև թագավորների գործեր*»[120], ավելին, նրան համարել է պատմաբան՝ «**պատմագիր**»:

Այսպիսով, Խորենացի և Սեբեոս պատմիչները փաստագրել են հայոց թագավորների անուններով վիմաքարերի, դիվանի և քրմական մեհենական մատյաններ ունենալու իրողությունը, նաև, որ Հայաստանից և շրջակա երկրներից հայկական դիվանները հավաքագրելու և Եդեսիա տեղափոխելու և Եդեսիայում հանգրվանելու փաստը:

Խորենացին Մար Աբասի Պատմության ավարտին ուղղակի հիշեցում ունի, որ «Աբգար և Աբգարից հետո մինչը Երվանդ» հայկական դիվանների ճակատագիրը որոշողներ դարձան Հայաստանի արմտյան գավառները տիրած **հռոմեացիները**.

Մծբինից և **Պոնտոսի Սինոպից դիվանները** հավաքագրել են նախ **Ուռհայի**, ապա **տեղափոխել Եդեսիա:**

---

[116] **Եվ. Կեսարացու** երկի և նրա ժանանակագրությունը կազմող Բլերի եկում ոչ մի խոսք չկա հայ արքաների մասին, կամ դրանք դուրս են թողված գրքից:

[117] **Մ. Խորենացի**, ՊՀ, էջ՝ 142:

[118] **Մ. Խորենացի**, ՊՀ, էջ՝ 159

[119] **Մ. Խորենացի**, ՊՀ, էջ՝ 174:

[120] **Մ. Խորենացի**, ՊՀ, էջ՝ 201:

ԱՐՔԱՅԱԿԱՆ ԴԻՎԱՆՆԵՐ: ԴԻՎԱՆՆԵՐԻ ՈՂՆՅԱՅՈՒՄԸ

Որպես աղբյուր ընդունելով Մար Աբասի Նինվեի դիվանից քաղված մատյանի Պատմությունը, Խորենացին և Մեբեռոսը վավերագրել են Մծբինիում հայ և պարթև[121] առաջին թագավորների անուններով վիմաքարի, ինչպես նաև

☼ հայոց թագավորների դիվանի, նաև մեհենական մատյանների գոյության իրողությունը:

☼ Հայ ժողովրդի պատմություն էջերից գիտենք, որ իր դարաշրջանի նաև հայոց արմատների սկզբնավորման պատմություն գրելու պատվեր է տվել նաև Տիգրան Մեծը, անգամ Արտավազդ Բ է շարունակել գրել արքա հոր ժամանակաշրջանի պատմությունը, և մեզ հայտնի չէ Արտավազդ Բ գրած Հայաստանի պատմության ճակատագիրը:

Դժվար չէ եզրակացնել, որ, ինչ ծագում էլ ունենային հայոց թագավորները, կամ թե քրմերը ինչպիսի հակասությունների կամ հակամարտության մեջ լինեին հայոց արքունիքի հետ, մեծ տեղ են տվել իրենց նախորդների և իրենց ժամանակի դիվաներ և արխիվներին ունենալու խնդրին, վարել են դիվան, ունեցել են գրադարաններ, արքինիքներում գրվել է պատմություններ[122], իսկ մեհյաններում ստեղծել են մատյաններ, և անձամբ են հետևել դիվանների գործի վարմանը:

Վավերագիր-աղբյուրների համադրումից մեկ անգամ ևս փաստագրենք, որ Մեծ Հայքի թագավորությունում եղել են

☼ թագավորների (նահապետների) անուններով վիմաքար(եր)՝

☼ Հայքի և հարևան երկրի (ների) թագավորների անուններով (համաժամանակյա կառավարման) վիմաքար(եր)՝ արձանագրություններ:

☼ Հայոց Աշխարհների տերերի դիվան՝ արքունի դիվան-դիվանատուն:

☼ Հայոց թագավորների պատվերով **գրվել են թե Հայաստանի և թե իրենց ժանանակաշրջանի պատմությունը**:

Մեր քրիստոնեա պատմիչները անտեսել են փաստագրել՝ Հայոց Աշխարհների տերերը և նախարարները ունեցե՞լ, թե՞ չեն ունեցել սեփական դվաններ:

☼Ամենայն հավա-նականությամբ նրանք ունեցել են սեփական դիվաններ, բայց դրանք համարվել են թագավորական դիվանի անբաժան մասը:

☼ Հայաստանում իր ուրուն տեղն ու դերն է ունեցել Քրմա-հոգևոր իշխանության տերե-րի՝ քրմերի կողմից ստեղծված մեհենական դիվանը:

☼ Նախ Արատտայի, ապա հայոց քրմերը արձանագրվել են, ինչպես հոգևոր կյան-քին առնչվող, այնպես էլ երկրում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, նաև «**թագավորի գործերը**»:

Հայոց արքաների անունների և նրանց և հարևան երկների արքաների համաժամա-նակյա կառավարման ցանկը, պահպանվել է վավերագիր վիմաքարերի արձանագրություն-ների ձևով, ինչը փաստագրել են թե Խորենացին և թե Մեբեռոսը՝ Մար Աբասի Պատմության ստեղծման հանգամանքներով: Նմանատիպ վավերագրեր են պահպանվել նաև այլ երկրների դիվաններում, նաև օտար լեզվով ստեղծած գրականության էջերում, որտեղից էլ Մար Աբասը քաղել է Հայաստանի մասին պատմագրության վավերագրերը:

Արմավիր մայրաքաղաքի ավերակները

[121] Ամենայն հավանականությամբ՝ ասորի թագավորների անունները: Եթե իսկապես հայ նահապետների և թագավորների կողքին գրված էր պարսիկ արքաների անունները, չպետք բացառել, որ Մեբեռոսի նկարագրած հուշասյունը, այն էլ հունարեն լեզվով, նախկինի կրկնօրինակն էր, ստեղծված ավելի ուշ ժամանակներում:

[122] **Գ. Սարգսյան**:Նախամեսրոպյան շրջանի պատմագրությունը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻ ՈՂՆՉԱՅՈՒՄԸ

Ասորեստանում, նաև հարևան երկրի թագավորների վիմաքարերի և սեպագրերի վրա եղած արձանագրության գոյության մասին, և դրանք ոչնչացնելու իրողությունն անուղղակի ձևով վավերագրել է Մ. Խորենացին, հիշատակելով Նինոսի հրամանը՝ այրել (երևի՝ **ջնջել**) և դադարեցնել **Արամի մասին** եղած ամեն ինչ: Իսկ ահա հարազատ երկրի քրմերի և մոռելանդ քրիստոնեաների կողմից հակառակորդ արքաների կամ թագավորական տոհմի պատմական վավերագրերի ոչնչացնան առթիվ՝ մեր պատմիչները, բացառությամբ Ագաթանգեղոսից, լռում են:

Թե ինչ ճակատագրին են արժանացել Հայոց վաղնջական ժամանակների արխիվները անուղղակի կերպով բացահայտում է նաև Սեբեոսը իր Պատմության սկզբում, երբ պատմիչը գրում է, Մարաբասի փիլիսոփայի և **Մծբին քաղաքի գտածոյի**՝ «**հայ ու պարսիկ արքաների ցանկի**» արձանագրության մասին: «Նայելով *փիլիսոփա Մարաբաս Մծուրնացու մատյանը, որը (նա) դրոշմած գտավ արձանի վրա Մծբին քաղաքում Սանատրուկ արքայի* ***ապարանքում արքունական տաճարի դռան հանդեպ՝ ծածկված արքունական նստավայրի ավերակների մեջ***[123]*: Քանզի այդ տաճարարի սյուները պարսից արքան պահանջեց «տանել»* (պարսից) *արքունիք*[124]*, և սյուների պատճառով ավերակները բացվելով՝ այստեղ հանդիպեցին այն արձանագրությանը՝ **վեմի վրա**՝ պարթևաց և **հայոց հինգը թագավորների** տարիներն ու օրերը հունարեն դպրությամբ դրոշմած…*» [125]:

Խորենացին հայոց արքաների ցանկով հուշակոթողի կանգնեցումը վերագրել է Վաղարշակ թագավորին. Վաղարշակի խնդրանքով, «*Մար Աբաս Կատինան, (Արշակ Մեծ արքունական դիվանի) մատյանից հանելով միայն մեր ազգի հավաստի պատմությունը* ***հույն և ասորի գրերով***՝ *բերում է* ***Մծբին***՝ *Վաղարշակ թագավորին: Վաղարշակը «մատյան-արխիվը) համարել է* ***առաջինն իր գանձերի մեջ***՝ *հրամայում է մեծ զգուշությամբ պահել արքունիքում և մի մասը նրանցից* ***արձանի վրա դրոշմել***»[126]:

Սեբեոսի մոտ «*Մարաբա փիլիսոփա Մծուրնեցու մատյանի*»[127] տեղեկությունները առված էին ոչ թե Նինվեի դիվանից (ինչպես գրել է Խորենացին), այլ Ագաթանգեղոսից՝ արքունի դիվանից: Թեպետև Խորենացին բողոքում էր մեր թագավորների կողմից գրավոր աղբյուրներ չստեղծելու բարքերից՝ «*երբ ոչ ոք այսպիսի բաների հոգ չեր տանում*», այնուհանդերձ, Խորենացին Ք.հ. 2-րդ դարում **Մծբինը** հայոց գահանիստ դարձրած **Վաղարշակ** հայոց թագավորին է վերագրել մեր ազգի «*հավաստի պատմություն*» ունենալու մտահոգությունը. «*թե ովքե՞ր արդյոք և ինչպիսի՞ մարդիկ տիրելիս են եղել Հայաստանի… Որովհետև այստեղ (Հայքում)* ***ոչ հայտնի կարգեր են եղել և ոչ մեհենական պաշտամունք****, և այս երկրի գլխավորներից* ***ոչ առաջինն է հայտնի և ոչ վերջինը***»[128]:

Խորենացին իր հետագա պատմումով հերքում է իր իսկ մեղադրանքը[129], շարադրելով նախնիների պատմությունը նաև հայկական աղբյուրներով. «*իրականություն են նաև «**Մեհենական պատմությունները**»: Դրանց երկու մասերից առաջինի հեղինակն է եղել, ըստ Խորենացու, Դարանաղյաց Անիի Արամազդի տաճարի **Օլյումպ** (Օլիմպիոս) քուրմը, անձնավորություն, որը մեզ այլ աղբյուրներից ծանոթ չէ, իսկ երկրորդ մասի ասորի հայտնի*

---

[123] Քրիստոնեաների կողմից կործանած Մծբինի հեթանոսական տաճարը:

[124] Հայկյական հեթանոսական տաճարների կործանմանը համընթաց տեղի ունեցել ճարտարապետական կոթողների թալան:

[125] **Սեբեոս**: **Պատմություն հայոց** (ռուսեր.): Հետևում է հայ նահապետների անունների թվարկումը՝ **Հայկից** մինչև **Արա Գեղեցիկ:**

[126] **Մ. Խորենացի** , ՀՊ էջ՝ 85:

[127] **Ըստ Սեբեոս:** Նույն տեղը:

[128] **Մ. Խորենացի** , ՀՊ էջ՝ 83:

[129] **Ս.Ասմարյան**: Մի քանի տեղ Խորենացին հիշատակում է, թե օտարի նվաճողները փշրեցին մի դեպքում արձանագրությունը, մյուս դեպքում՝ արձանները (էջ՝ 140):

գրող Բարդածանը (մ. թ. II—III դարեր), որը Հայաստան այցելելիս լրացրել է «Մեհենական պատմությունները»[130]: Խորենացին իր պատմությունը շարադրելիս օգտվել է Հին Արևելքի պատմիչների Հայաստանի և նրա նահապետների և արքաների մասին հիշատակած երկերից՝ նրանց մատյաններից է ճշգրտել ս. գրքից և Եվս. Կեսարացու Քրոնիկոնի **Հաբեթի սերունդների բացակայող** «հերթականությունը», նաև «**շատ բաներում մեզ վստահելի**» **Աբյուդենոսի** գրած **Ասորեստանի և Քաղդեայի պատմությունից**, «Բերոսյան Սիբիլլայիով (Սիբիլլյան գուշակությունների գիրք), և վերջապես Մար Աբասի Պատմությունից, որի վավերագրերը քաղված էին Նինվեի դիվանից, և որտեղ, որոշակի թիվ են կազմել նաև հայկական աղբյուրները և դիվանները:

Արմավիրում գտնված էլամական, արամեերեն, ուրարտական և հունական դարաշրջանների սեպագրերը հաստատում են, որ Հայք-Արատտայում, Հին Արևելքում և Միջագետքում հին հայերը արխիվներ են ստեղծել հայտնի բոլոր լեզուներով, ստեղծելով բազմալեզու սեպագրիր արձանագրություններ և մատյաններ (գտնվել են այրված վիճակում):

Երկու պատմիչների մեջբերումներից հստակ է դառնում, որ Մծբինում, կանգնեցվել էր (Խորենացի) կամ գտնվել էր (Սեբեոս) **հայոց** և **պարսից արքայացանկը**: Սեբեոսի հղումներից կարելի է եզրակացնել, թե դրանք ստեղծվել էին Տրդատ արքայի արքայացանկի հիման վրա, և որ **Արտաշատում Տրդատը ուներ արքայական դիվան** (արխիվ) **և մատյաններ**: Ըստ Սեբեոսի, Մծբինի վիմաքարի վրա արձանագրողը Ագաթանգեղոսն էր.«*Ես Ագաթանգեղոս գրիչս, Տրդատ քաջի հրամանով արքունի դիվանից առնելով, իմ ձեռքով գրեցի այս արձանի վրա հայոց առաջին թագավորների տարիները*»[131]:

Եթե չկային հայոց անցյալի պատմության դիվանների մատյաններ և սեպագրեր, ինչպես Խորենացին էր բողոքում՝ Տրդատի արքունի ի՞նչ դիվանի մասին է հղում կատարել Սեբեոսը: Անշուշտ դիվան եղել է, բայց այլ հարց է, թե դրանք Խորենացու հայոց պատմություն գրելու պահանջներին բավարարո՞ւմ էին, թե՞ ոչ:

Իսկ թե ինչ եղան հայոց արքունի դիվանները, նաև արքաների անուններով և «տարիներով» վիմաքարերը, բացահայտել է Ագաթանգեղոսը, որը իր պատմության էջերում փաստագրել է, որ արքունի և մեհյանների դիվանները և գրադարանների մատյանները, մագաղաթները և վիմաքարերը ոչնչացվել են չորրորդ դարի առաջին քրիստոնեա քարոզիչները, որոնք Հայաստանում քրիստոնությունը տարածեցին հրով ու սրով: Պակասը լրացրել են օտար նվաճողները[132]: Նպատակը մեկն էր, ոչնչացնել Հայկական լեռնաշխարհում ապրող հայ ժողովրդի պատմության ամեն տեսակի վավերագրեր, ժողովրդի հիշողությունից ջնջել նրա հերոսական պատմության էջերը. «*Սաս. Պարսկաստանի տիրապետության անիշխանության օրոք, **Որմիզդ-Արտաշիրը Բագրևանդի Բագավան տաճարի մեջ, հրամայել էր փշրել Հնում հայոց նախնիների պատկերով Արմավիրում կանգնեցված և այդտեղից Բագարան, այնուհետև Արտաշատից տեղափոխված արձանները**, իսկ Արտաշեսի Ա սահմանաքարարեի գրությունները՝ փոխել իր անունով*»[133]:

Հայ ժողովրդի անցյալի պատմագրությանը հասցվեց անդառնալի վնաս, առաջին քրիստոնեա քարոզիչները Ք.հ. 4-5-րդ դարերում Մեծ Հայքի տարածում ոչնչացրեցին այն ամենը, ինչը կարող էին ոչնչացնել, այն ամեն ինչ, ինչը հիշեցնում էր հայոց հեթանոս թագավորներին և քրմերին՝ հայոց նախիների ստեղծած երեքիազարամյան կոթողային պալատներն ու տաճարները, մեհյանները, արձանագրությունները և մատյանները[134], հայոց

---

[130] **Գ. Խ. Սարգսյան**: Մովսես Խորենացին եվ նրա Հայոց պատմությունը:

[131] **Ըստ Սեբեոս**, նույն տեղը:

[132] **Մ. Խորենացի** , ՀՊ էջ՝ 272: Մեհրուժանը «Ի՞նչ գիրք որ գտնում էր, այրում էր և հրամայում էր հունարեն գրագիտություն չսովորել»:

[133] **Է. Դանիելյան**: նույն տեղը:

[134] **Ագաթանգեղոս:** Ագաթանգեղոսի աշխատությունը ընդգրկում է III դ. և IV դ. սկզբի դեպքերը՝ Հայոց Տրդատ Գ Մեծ թագավորի գահակալության վերջին տարիները: Գրքի երրորդ՝ **«Հայաստան աշխարհիս փրկության դարձը»** մասում Ագաթանգեղոսը հանգամանորեն **պատմում է հին հայկական,հեթանոսական տաճարների ու աստվածների անդրիների կործանման, քրմերի կալվածքների ու հարստությունների բռնագրավման**, հայ վերնախավի ու ժողովրդի մկրտության, եկեղեցիների ու վկայարանների հիմնադրման, քրիստոնեության հաստատման, հոգևորականների կարգման և այլ իրադարձությունների մասին:

արքաների անունով, ինպիսին Սանատրուկի պալատի առջևի հեթանոսական տաճարի վիմաքարն էր, թագավորների անուններով հուշաքարերը, իսկ գրավոր մատյանները կամ ոչնչացվել կամ դարձել են հրո ճարակ[135], հայ ժողովրդի և նրա արքաները պատմագրությանը փոխարինելու եկավ, և առաջին պլան մղվեց, ս. գիքը և հրեաների նախնիների պատմագրությունը:

Ագաթանգեղոսը գրել է «**հայոց դարձի**» և 4-5րդ դարերի առաջին մոռելանդ քրիստոնեաների քանդարարության և հայոց մշակույթի, այդ թվում դիվանների և մատյանների ոչնչացման պատմագրությունը, եղել է քանդարարության վկան, հավանական է նաև մասնակիցը: Իսկ Խորենացին և Սեբեոսը , բազմիցս հիշատակելով հայոց աշխարհում տեղի ունեցած «բնաջնումները», անգամ Արմավիրում՝ Արտաշիրի կողմից Վաղարշակի օրոք շինած արձանների փշրելու պատմությունը[136], ոչ մի խոսք չեն գրել այդ քանդարար իրադարձությունների մասին: Անշուշտ, տարօրինակ է, բայց պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ Ագաթանգեղեոսը հայոց արքայի դպիր-քարտուղարն էր, իր երկը գրել էր հունարեն, իսկ հունարենը լեզու ոչ բոլորին էր հասու: Այլ էր Խորենացու և Սեբեոսի կարգավիճակը. Մովսես Խորենացին և Սեբեսը Հայ Առաքելական Եկեղեցու համոզված հավատացյալներ էին, բայց դա, նրանց երկերը բազմիցս արտագրվել և վերաարտագրվել են քրիստոնեա գրիչների կողմից, և հայտնի չէ պատմիչների բնագրի իրական իմաստը:

Ինչևէ, էականը մեր պատմիչների կողմից հայոց **արքաների ցանկով հուշաքարի** իրողության փաստագրումն է՝ Հայկից մինչև Արա Գեղեցիկ անվանացանկով: Սակայն պատմիչները չեն փաստագրել, թե ինչ ճակատագրի են արժանացել Վաղարշակի կամ Սեբեոսի հիշատակած Սանատրուկ արքայի պալատի մոտակայքի ավերակներից գտնված **Մծբին քաղաքի սեպագիր վիմաքարը**՝ կործանե՞լ են քրիստոնության ընդունման տարիների կործանարարության հետևանքով, թե՞ հուշաքարը, հայկական տաճարի այուների հետ միասին, տեղափոխվել էր Պարսկաստան: Այսինքն, վիմաքարը նաև Մատյանները, որպես անգնահատելի գանձ, մի երկրի արխիվները «բռնագաղթել է» և պարտված երկրից «միգրացվել են» հաղթող երկիր: Մթ.ա. 2-1 հազարամյակներում, մի երկրի երկրների արխիվը, դարձել է թշնամու հարստության անբաժանելի մասը:

Այսպիսով, այն հարցադրմանը, թե արդյո՞ք եղել են հայոց նահապետների, հայոց քրմերի, և հայոց թագավորների Գրադարաններ և Արխիվներ,- հայ պատմիչները տվել են դրական պատասխան.

♣ մ.թ.ա. 25-րդ դարից ՝ Հայկ նահապետի կառավարման օրերից սկսած մինչև մ. թ. 4-րդ դարը՝ քրիստոնության մուտքը և մինչ Մեծ Հայքի անկախության կորուստը, հայոց արքունիքների և մեհյաններին կից ստեղծվել են դիվաններ՝ արխիվներ և վարել են Գրադարանները.

♣«*Մեծ Հայքի արխիվները ստեղծվել ու պահպանվել են Արմաշվիր մայրաքաղաքի մեհյանների*[137]*, տաճարների և արքունիքի Արխիվներում և Գրադարաններում»:* Այսինքն, մ.թ.ա. 1980 թ սկսած մինչև մ.թ.ա. 168 թ. Արմավիր մայրաքաղաքն է հանդիսացել արխիվային կենտրոնը[138]:

---

[135] **Ադամ քահանա Մակարյան**. **Քրիստոնեության իսկությունը**: «Կռապաշտական տաճարների կործանման ժամանակ **Տրդատի հետ շրջում էր նաև Սուրբ Գրիգոր Լուսավորիչը**: Գրիգոր Լուսավորչի անձնապես և անմիջական մասնակցությունը տաճարների կործանմանը, ըստ պատմիչի, եղել է միայն մեկ անգամ, ուղեկցվել հրաշքով: Արտաշատում Անահիտ դիցուհու տաճարի դների դիմադրության ժամանակ Սուրբ Գրիգորը բարձր պահել է խաչը, որի զորությունից տաճարը քանդվել է…**Եվ մենք այսօր էլ պետք է շնորհակալ լիննենք Սուրբ Գրիգոր Լուսավորչից**, որ Հայաստանը դիտելով իբրև հոգևոր դաշտ՝ **այնտեղից արմատախիլ արեց թույնը** և հաստատեց կյանք տվող եկեղեցիներ»:

Ս. Ասմարյան: Ինչպես տեսնում եք, այսօր էլ հայ հոգևորականները հայոց հեթանոսական կրոնը և մշակույթը ԹՈՒՅՆ են համարում, փառաբանելով այն կործանող իրենց առաջնորդին:

[136] **Մ. Խորենացի** , ՀՊ էջ՝212:

[137] **Բաբկեն Առաքելյան**, Հանրագ. հատ. 7, էջ՝444:

[138] Հնագետները **Արմավիր հնավայրում** են հայտնաբերվել 6 – 4 և 4 - 2 հազարամյակների քարանձավներ, տոտեմական ժառայապատկերներ, «հարևան» երկրներին «վերագրվող» սեպագրեր, Վանի Արարատյան թագավորության (ուրարտական՝ թվով 15), Երվանդունիների և Արտաշես Ա հունատառ և արամեերեն բազմաթիվ արձանագրությունները:

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՄՔԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

ԵՐԲ ԵՆ ԽՈՄԵԼ
ԵՎ ԵՐԲ ԵՆ ԼՌԵԼ ՄԻՋԱԳԵՏՔՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Պատմահայր Խորենացին կազմելով «*դժվարագույն և տաժանագյուտ ժամանակագրությունը*», սահմանել է, որ «*որքան էլ որևէ մեկը կամենա հետազոտել ըստ դարերի մանավանդ որ ս. գիրքը յուրայիններին զատելով իբրև իր սեփական ազգ՝ մյուսներից լքեց*» «*Նոյի երեք որդիների ծննդաբանության հավասար է գալիս մինչը Աբրահամ, Նինոս և Արամ, ինչպես որ հավաստի գտանք հին պատմությունների մեջ, որոնք ըստ մեզ կատարելապես ճշմարիտ են*»[139]:

Ակնհայտ է, որ որպես ազնիվ պատմաբան, Խորենացին պատմագրության հետ միասին սահմանել է նաև Արամ նահապետի՝ հարևան երկրների արքաների գործունության համաժամանակյա՝ հրեաների նախահայր Աբրահամի, ասորաց հարստության հիմնադիր Նինոս Ա (Շամիշ-Ադադ Ա) և Հայկյան Արամ նահապետների ժամանակաշրջանը: Թվում է, թե այստեղ որևէ բարդություն չկա, ինչով կարելի էր կասկածի կրկի տակ առնել Խորենացու Հայկյան Արամ պատմագրությունը: Սակայն, հայ ժողովրդի պատմությունն ուսումնասիրող հայագիտական կենտրոնների գիտնականները, Խորենացուն «Հայոց մեծերի ծննդաբանությունը»[140] չեն համարում Արմենիայի անտիկ շրջանի հավաստի «պատմագրությունը»: Փոխարենը, հայ ժողովրդի պատմության վաղնջական ժամանակների հիմնական աղբյուրներ է ընդունում Արմենիայի մասին Հերեդոտի, Ստրաբոնի հիշատակումները, իսկ հայ-ասսուրական հակամարտության պատմագիրներ են համարվում Դիոդորոս Սիկիլիացին («Պատմական գրադարանը») և Դիոդորի «աղբյուր» Քտեսիասի՝ Արմենիայի պատմության մասին տեղեկատվությունը[141]:

Առավել կասկածելի է Քտեսիասի աղբյուրը: Թող որ որևէ մեկը չզարմանա այս իրողության վրա, բայց սա փա՛ստ է. նրա Արմենիայի մասին աղբյուրը պարսկական կամ ասորական արխիվները չեն[142], այլ, այն ինչ «փաստագրել է» հույն պատմիչը, գրի է առել հիմնականում լսելով Հայք-Արմենիայի հարևան երկրի թագուհու բանավոր պատմությունները: Քտեսիասի «պատմագրությունը» նույնությամբ հայտնվել է Դիոդորի, իսկ Դիոդորից՝ մ.թ.ա. և Ք. հ. կազմած համաշխարհային, այդ թվում քրիստոնեական պատմագրության, իսկ այնտեղից՝ հայ պատմիչների երկերում:

Արդոք այս ամենը չի՞ ստեղծել պատմագրության խառնաշփոթ: Իհարկե, առկա է ակնհայտ քաոս, երբ փորձենք հույն պատմիչների պատմագրությանը հավելել նաև մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 25-17-րդ դարերի միջագետքա-խեթական արձանագրությունները: Փորձեք դրանք դնել իրար կողքի և ինքներդ կհամոզվեք, որ սեպագրերը ստեղծված է նույն սեպագրող վարպետի ձեռքով՝ տրաֆարետավորված է մի դեպում Շամշի-Նինոսի, մյուս դեպքում խեթերի Անիտա՝ Պայիս Քաղյանի արքայի հաղթարշավը՝ նույն ուղղություններով, ընդ որում, պատադիր կարգով իրենց և միայն իրենց, և միա՛յն իրենց առաջնորդներին են վավերագրել հաղթող կողմ, իսկ, ահա, պարտվող կողմ է ներկայացված հայերը՝ խուրիներին և կուտիներին, երբ անգամ սեպագրերի տողատակերին կարելի է կարդալ, որ «հզոր» Ասորեստանի դարպասներ էին թակում ասորաց աշխարհից հյուսիս գտնվող երկների ցեղախմբերը՝ նույն խուրիներն և կուտիները: Վերջիններս հասել էին մինչև Նինվե և

---

[139] **Մ. Խորենացի:** ՊՀ: Էջ՝ 75:

[140] **Մ. Խորենացի:** ՊՀ: Գիրք առաջինի տիտղասաթերթը:

[141] **Ս. Ասմարյան**: Ճիշտ կլիներ ասել՝ ապատեղեկատվությունը: Թե ինչու «ապատեղեկատվությունը»՝ պետք չէ շատ խորաթափանց չլիներ հասկանալու համար, թե որն էր հույն, նաև հրեա պատմիչների միտումներին, երբ հույ պատմիչները Հայկական լեռնաշխարհում ապրող հայերին՝ հունացել են, իսկ հրեա պատմիչները իրենց հերթին սեմացրել են մեր Արամ նահապետին: Արմենիայի մասին հիշատակություն կա հրեա պատմիչ **Հովսեպոս Փլավիոսի պատմագրության** էջերում, և այն, հիմնականում Արամ նահապետի և նրա որդիների մասին պատմագրությունն է, որոնցի մասին մենք գրելու դեռ առիթ կունենանք:

[142] Ի տարբերություն հայ հետազոտող պատմաբանների, ռուս պատմաբանները, կասկածանքի տակ են առել **Քտեսիաս**ին որպես «աղբյուրի», հեղինակին որակելով որպես ոչ հավաստի հեղինակ:

Բաբելոն (ինչը վավերագրել է նաև Խորենացին), բայց, արի ու տես, նինոսաստեղծ սեպագրերում, Նինվեյի մատույցներին հասած հայկական ցեղախմբերը, ըստ սեպագրման տրաֆարետի, «ոչ պետություն են ունեցել, և ոչ էր ցեղային առաջնորդներ», այսինքն, բացակայում է առաջնորդ(ներ)ի մասին որևէ հիշեցում:

Փաստագրենք, որ Հին Արևելքի պատմագրության և ժամանակագրությունների իսկական քաոսը տեղծվել էր մինչև Խորենացին և Սեբեոսը: Հայոց պատմությունը գրելիս, ամենայն հավանականությամբ, նման քաոսի են հանդիպել նաև մեր պատմիչները, տեսնելով, թե Հայք-Արմենիա և Ասորեստան հակամարտության հարցում հույն պատմիչները ինչպիսի շիլաշփոթի մեկ կաթսայի մեջ են խառնել 2-րդ հազարամյակի մ.թ.ա. 19/18-րդ դարի ասորիների ձեռնարկած անհաջող արշավանքը՝ դրանք շփոթելով հազար տարի՝ 1-ին հազարամյակի հայերի Նինվեի վրա կատարած հաղթական արշավանքների հետ:

Այնուհանդեմ, սեպագրող վարպետները և նրան պատվիրատուները անուղղակի կերպով «ինքնախոստովանանք են արել» արձանագրելով, որ թե՛ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 19-18-րդ դարի և թե՛ մ. թ. ա. 1-ին հազարամյակի 9-րդ դարում հայ - ասորական հակամարտության հաղթող կողմը՝ հայերն էին (ինչ անուն էլ որ **նրանց** տալիս էին), քանի որ **հայերն էին թակում Նինվեի դարպասները, և ոչ թե հակառակը**:

Հույն պատմիչները, առանց քննադատական վերլուծության, ցանկացած դարաշրջանի մասին վավերագրելիս՝ պատերազմի ելքը ներկայացրել են **պարսկական արքունիքի քիմքին հարմար շարադրանքով՝ տրաֆարետով**, որպես պարտվող կողմ ներկայացնելով Արմենիայի արքաներին: Այսինքն, հույն պատմիչների «փաստագրումները», օգտակարի փոխարեն, «միաձուլել են» տարբեր դարաշրջանների հայ ժողովրդի վաղնջական ժամանակների պատմագրությունը՝ պարտվող ասորական կողմին, Քտեսիասը դարձրել էր հաղթող կողմ, հաղթող հայկական կողմին, Քտեսիասը վերածվել էին պարտվող ազգի:

Հայկազունի նահապետների և արքաների պատմական անձեր չլինելու հաջորդ «փաստարկումը», որքան էլ զարմանալի է, Շամիրամն ու «**Շամիրամի ժամանակաշրջանի**» իրադարձություններն են: Մենք դեռ կանդրադառնանք Քտեսիաս – Դիոդոր պատմիչների «Շամիրամի պատմականությունը» [143] [144] հարցին: Այստեղ միայն փաստագրենք, որ հույն պատմիչներն էին որ **Սամմիրամաթ** - Շամիրամին ասորաց շարքային թագուհուց՝ վերածեցին պատմական կերպարի: Հույներից էլ Շամիրամի կերպարը անցել է Հին Կտակարան, իսկ այստեղից էլ բազմել է համաշխարհային պատմագրության էջերում: Հույն պատմիչները բաց են թողել ընդամենը մի փոքր նրբություն՝ **հաշվի չեն առել, որ տարբեր դարաշրջաններում Ասորեստանում են եղել Սամմիրամաթ - Շամիրամ անունով մի քանի թագուհիներ**: Եվ մի էական խնդիր ևս.

♣ Արա Գեղեցիկի կառավարման ժամանակաշրջանում, Շամիրամ թագուհին արդյոք եղե՞լ է Հայք-Արատտայում, և էականը.

♣ արդոք Շամիրա՞մն է հիմնադրել Վանը:

Շումերագետների մի մասը գտնում է, որ **Սամուրամաթ** անունը, ինչպես նաև «**Շամիամի կախովի այգիներ**»[145] բառակապակցությունը հանդես են եկել 2-րդ հազարամյակում, իսկ այն անտիկ գրականություն է մուտք գործել առաջին հազարամյակում, և

---

[143] **Ն.Ադոնց**: **Նորածին Հայաստան**: Դիոդորը այս պատմությունը գրի էր առել **Կտեսիասից**, որը իր հերթին այս պատմությունները լսել էր պարսիկներից: Ն.Ադոնց Արմենիայի մասին **Կտեսիաս** պատմագրությունը համարում էր **հիմք չունեցող**՝ հեղինակի **երևակայության արդյունքը**:

[144] Հունական առասպելներում նա համարվել է սիրո և պտղաբերության աստվածուհի **Դերկետոյի** դուստրը

[145] **Վ. Կ. Շիլեյկո**: Շումերագետները թե Նինվեի և թե Բաբելոնի «Կախովի այգիները» վերագրել են Շամշի Ադադի Ա տիկնոջը՝ **Սեմմուրամաթին**: Ներկայիս պատմագիտական հրապարակումները հերքում են Նինվեում նման այգու գոյություն, գտնելով, թե կար մեկ՝ Ասորեստանի Բաբելոն քաղաքի «Կախովի այգիներ», և որ Բաբելոնի «Կախովի այգիների» ըստ Ասորեստանի պատմության կառուցել է Շամիրամը՝ 7 դ:

«**Բաբելոնի պատմությունը**» միանգամայն ժխտում է Շամիրամի կողմից ինչ-որ բան կառուցելու պնդումները, փաստագրելով, որ Բաբելոնի «**Կախովի այգիները**» իր մարիացի կնոջ պատվին կառուցել է Նաբագոդոնոսոր II մ.թ.ա. 6-րդ դարում (փլվել է ջրհեղեղներից): **Ստեֆանի Դալլին** հանգել է այն եզրակացության, որ **այգիներ են եղել** նաև Նինվեում՝ Բաբելոնից 300 մղոն հեռու:

սխալ էին Դիոդորն ու իր «աղբյուր» Քտեսիասը, որոնք 2-րդ հազարամյակում գործած Սամմուրամաթին խառնել են մ.թ.ա. 9-րդ դարի «Ծպտված Շամիրամի» [146] հետ:

Հնագիտական պեղումներով և գտնված սեպագրերի վերծանումով հիմնավորվել է, որ Աքքադն և Էբլան Արմանում երկրի հետ փոխհարաբերվել են մ.թ.ա. 23-րդ դարում: Դեռ մ. թ. ա. 23 դդ դարի **Նարամ-Սինի** արձանագրությունում առկա է Սամ-մի>ռա-մա-ատի անվան նախատիպը, և որ Շամիրամ անունն են ունեցել առնվազը **չորս Շամիրամներ**[147]:

Ակնհայտ էր երկու հարևան երկրների, ինչպիսին Հայքն ու Ասորեստանն էին (նաև՝ Քանանը), պատմական անձերի անունների և իրադարձությունների կրկնությունները: Արմանում տեղանունը և **Արամ անունը**, նաև **արմենները ժողովուրդը**, առկա են, և դրանք դժվար չէ գտնել, Հին Աշխարհի մ.թ.ա. 3-րդ հազարամյակի աքքադական և -2-րդ հազարամյակի խեթական, շումերական, էլամական և եգիպտական սեպագիր արձանագրություններում, նաև Ք. ա. և Ք. հ. առաջին հազարամյակի հին հրեաների[148] և հին հունական պատմագիտության էջերում և վավերագրերում:

Եթե Նինոս և Շամիրամ անունները հույն պատմիչներից է անցել հայ պատմիչների էջերը[149], ապա այնպիսի մեծության հանրահայտ պատմական անձիք, ինչպիսին Հայկյան Արամի և նրա որդի Արայի անուններ էին, Հին Արևելքի և Միջագետքի արքունիքների արխիվներ և մատյաններեր է անցել Հայք - Արատտայից պատերազմական ավար վերցված և Հայքից Միջագետք ընկած, հայկական արխիվների միջոցով, հայ - ասորաց, հայ – խեթական և հայ-պարսկական հակամարտությունը վավերագրերից, Հայք - Արատտայի հետ հարևան ժողովուրդների ռազմական և տնտեսական սերտ շփումների արդյունքում:

Այժմ քննարկենք, թե որն էր Հայկյան Արամի և Արա Գեղեցիկի պատմական անձեր չլինելու հաջորդ «փաստարկումը», այս անգամ «պեղելով» ս. գրքի՝ Աստվածաշնչի էջերը: Միանգամից ասենք, որ այն դերակատարում, ինչն Արամ թագավորը դարերով ուներ մի ամբողջ ժողովրդի կազմավորման և կայացման գործում, չէր կարող իր հաստատուն տեղը չգտներ Հին Կտակարանի էջերում: Հին Կտակարանի հրեա հեղինակները բազմիցս «սրբագրել և վերախմբագրել են» քրիստոնեաների ս. գրքը, և այն ինչ մենք տեսնում են Հին Կտակարանում, և ինչը վավերագրել է Խորենացին, ս. գրքով առաջին հրեա Աբրահամը ժամանակագրությունը… առաջ է ընկած Արամից:

Դա բավական չէ, Արամը, որի որդին «*տիրեց Արմենիան*», Հին Կտակարանով սեմացված անձ - նահապետ էր: Այն հարցադրմանը, թե ինչ նպատակով են Արամի հետ այսպես դաժան վարվել, դժվար չէ կռահելը՝ անհրաժեշտ էր «աշխարհարարման» անձնագիր - Հին Կտակարանով Արամին իջեցնել հայերի կողմից Արամին աստվածացնելու պատվանդանից, **խլել նրանից հայկական ծագումը** և **նրան չհամարել պատմական անձ**: Բայց ինչպես հրեա, այնպես էլ հույն պատմիչները, չէին կարող համաշխարհային պատմագրության հենասյուներից մեկին, ինչպիսին Արմենիայի տիրակալ Արամ Հայկյանի էր,

---

[146] «**Ծպտվել էր**» տղամարդու հագուստով:

[147] **Ս. Ասմարյան**: Ինքս համաձայն չեմ այն պնդումների հետ, թե Շամիրամի գլխավորած ասուրաբաբելական բանակը «**Արային գներելու**» նպատակով էր Այրարատ «հասել»: Եթե հեռամուտ լիներնք Խորենացու տեքստի մանրամասներին, նաև այս ամենի առթիվ՝ ասուրական արձանագրությունների բացակայությանը (իրենց թագուհու խայտառակ վարքը նրանք երբևէ չէին սեպագրի), ապա պետք է փաստագրել հետևյալը. Նինվե-Արմավիր դեսպանությունների այցերը և բանակցությունները երկու երկրների տիրակալների միջև դարձել էին պարբերաբար, ինչը փաստագրել է Խորենացին: Հայկական սահմանապահ բանակները Շամիրամի անձամբ Արմավիր ուղևորվելը կարող էին դիտել որպես հերթական պատվիրակության կամ դեսպանության **այց**: Եվ քանի որ այս անգամ այցելողը արդեն Նինվեի թագուհին էր, թագուհին պետք է ուներ, մեծ և զինված թիկնազոր: Այսինք, Արմավիր՝ Արայի մոտ ուղևորվող Շամիրամը, Արմավիր՝ Արային անձամբ համոզելու էր եկել **սեփական զինված թիկնազորով**, բայց **ոչ բանակով**, քանի որ **թշնամու բանակով** Շամիրամը երբեք չէր կարող առանց խոչընդոտի և առանց հայկական սահմանապահ բանակի դիմադրության անցել հայ-ասուրական սահմանը:

[148] **Աստվածաշունչ**: Հին Կտակարան: Բեյրութ: 1990:

[149] Սխալվել են մեր հին պատմիչները Վանի հիմնադրումը կապելով Շամիրամի անվան հետ: Հայկաշենի և Վանի Արարատյան թագավորության քաղաքական կենտրոն Վան - Տուրշպայի հնագիտական պեղումներով է հաստատվել, որ Վան բնակավայրը հիմնադրվել է երրորդ հազարամյակում, Հայկաշենը՝ Հայկ նահապետի և նրա ժառանգների կողմից, իսկ Տուպան՝ Սարդուրի Ա կողմից, և Շամիրամը որ Վանի հիմնադրման գործում դերակատարում չի ունեցել Վանի:

թողնել պատմագրության լուսանցքում. Հին Կտակարանի, Ծննդոց 22: 23-ում կարդում ենք, որ իբրև-թե Աբրահամի պատմածով, իր եղբայր Նոքովրից և Մեղքա մորից ծնվեցին «*Հուսը և անոր եղբայրը Բոզը ու Արամի հայրը Կ(Ք)ամուէլը*»[150]: Թեկուզ այս ձևով, բայց (այլ կերպ էլ չէր կարող լինել), պետք էր Արամի անունը ինչ-որ ձևով հիշատակվել, քանզի Արամը Հին Արևելքում մեծ ճանաչում և հռչակ ունեցող պատմական անձ էր, և Աստվածաշնչով ամրագրվեց նրա աստվածաշնչյան կերպարը, սակայն Արամին տրվել է աննշան տեղ և դեր, սակայն, ի՞նչ որ կարող էին անել Ասվածաշնչյան տարեգիրները՝ իրականացրել են հաջողությամբ՝ **մեկ հարվածով Արամը սեմացվել է**:

Այսինքն, Հին Կտակարանով Արամը կտրվել է հայկական միջավայրից և պատմականությունից: Սա դեռ բակական չէր, ըստ Հին Կտակարանի **սեմիտ Արամի որդի Էրոսը**, այսինքն **Արա Գեղեցիկը**՝ «**տիրեց Արմենիան**»:

Իհարկե, Արամ և Արա Հայկյանների հարցում, Խորենացին չի վստահել նշված աղբյուրներին և Հին Կտակարանի «սեմիտական Արամի» հորինվածքներին[151]: Անգամ հարկ չի համարել ս. գրքի հետ վիճարկել Արամի լինելիության հարցը՝ Խորենացին Արամին համարել է Հաբեթ - Թորգոմից սերված Հայկազունի հայոց նահապետ: Վերջ դրելով այդ չփաստարկված հորինվածքին[152]:

Այս ամենն ակնհայտ կերպով ցույց է տալիս, որ Հայկական լեռնաշխարհի հետ սերտ կապեր և շփումներ ունեցող երկրների արխիվներում և մատյաններում, մանավանդ սեմիտական ծագում ունեցող ժողովրդների պատմական իրադարձությունների էջերում, որոշակի թարմացումներով և փոփոխություններով, **պատմական դեմքերի անունները կրկնվել են,** այդ թվում անտիկ աշխարհի այնպիսի նշանավոր արքաներ, ինչպիսին էին **Արամն** ու նրա որդի **Արա - Էրոսը, ասորաց Նինոսը** և **թագուհի Շամիրամը**:

Անընդունել և հակագիտական է **միֆ** կամ **խնդրագրում համարել**, թե մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 19-18-րդ դարի գործող անձերը չէին կարող կրկնվել 1100 -1200 տարի հետո որպես Արամ, Արա, Նինոս, Բարզանես[153] կամ Շամիրամ:

Խոսելով պատմական անձերի անունների կրկնության մասին, պետք է ուշադրություն դարձնել, որ Դիոդոր[154] - Քտեսիաս[155] և Եվսեբիոս Կեսարացու տեքստերի համեմատականներից և «**Ասորեստանի պատմության**» էջից[156] ակնհայտ է, որ Ասորեստանը չի ունեցել **Շամշի-Ադադի**[157] անունով արքաների **պակաս**: **Շամշի- Ադադ I** (մ.թ.ա. 1813-1781) թագավորել է Արամ Հայկյան թագավորի օրոք (մ.թ.ա. 1827-1769) և նա է եղել Հայկյան Արամ թագավորի ախոյան Նինվեի[158] տիրակալ **Նինոսը**: Իսկ **Նինոս**կինը Շամիրամը բոլորովին էլ Խորենացու և Քտեսիաս-Դիոդորոի[159] ներկայացրած Շամիրամը չէ, այլ Նինոս

---

[150] **Հին Կտակարան**, Ծննդոց 22: 23: Աստվածաշունչը **մեր Արամին «համարել» Սեմի Արփաքսադի ծոռը:**

[151] Այնուամենայնիվ, պետք է շնորհակալ լինենք, որ Հին Կտակարանի հեղինակներին, քանզի համաշխարհային պատմագիտության և ժամանակագրությունների էջերում իրենց հաստատուն տեղն ունեն մեր նահապետներից **Հաբեթը**, **Թորգոմը**, **Արամն** (թեկուզ սեմական ծագմամբ), նաև **Արամը՝ իր չորսը որդիներով**, որից **Էրոս - Արա** որդին «տիրեց Արմենիան»:

[152] **Գ. Սարգսյան**: **Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրներ**: Էջ՝ 35:… **Հայկյան Արամ և Արրամու Ուրարտացի հարցի առթիվ**: «…գուցե մենք գործ ունենք անունների ոչ հազվադեպ հանդիպող պատահական նմանության հետ…կարելի է ավելի սերտորեն հետևել Մ. Խորենացու շարադրանքին: Արամին, որ Հայկյանների վեցերորդ սերնդի ներկայացուցիչն է, Արրամու Ուրարտացու ժամանակից **բաժանում է շուրջ 25 սերունդ**՝ գրեթե մեկ հազարամյակ: Այնուհետև, ըստ Մովսես Խորենացու, Արամը, Հայկից հետո, հայերի երկրորդ անվանադիրն է, նրանց «արմեն» ցեղանվան աղբյուրը»:

[153] **Ն. Ադոնց**: կարծում էր արաբական զորավարի կամ արքայի անուն է: **Բարզանես** անունով հայ արքա գոյություն չի ունեցել:

[154] **Դիոդորոս Սիկիլիացի, «Պատմական գրադարան»,** II գիրք, 4 - 20 գլուխներ: http://ru.wikipedia.org Ктесий.

[155] **И. В.Пьянков**. **Ктесий как историк**. Ктесий, жил в V—IV вв. до н. э. Ктесии уже в древности сложилось плохое мнение… В сохранившихся фрагментах «Истории Персии» Ктесий однажды прямо ссылается на рассказ Парисатиды…

[156] **Ասորեստանի պատմությունը:**

[157] **Ասորեստանի պատմություն՝** «Շամշի-Ադադի Հարստությունը»:

[158] **Սամվել Նավոյան**: **Մեկնություններ Ծննդոց գրքի վերաբերյալ**: **Նինվեի հիմնադիրը Նեբրոթն էր**:

[159] **Դիոդորոս Սիկիլիացի, «Պատմական գրադարան»,** II գիրք, 4 - 20 գլուխներ:

Ա փոխարինած Նինվեի նոր տիրակալի՝ **Իշմե-Դագան Ա** կին Սամմուրամաթը և Արա Գեղեցիկի ժամանակակից թագուհին էր:

Այն իրողությունը, որի միայն հայ պատմիչների ու հայ ժողովրդի առասպելներում է պահպանվել Շամիրամի անունը, նաև «Արայի նկատմամբ նրա տածած սերը», փաստագրել են անգամ օտար մի շարք աղբյուրներ. «*Շամիրամի առասպելների հետազոտող **Վիլհելմ Այլերսը**, նկատի ունենալով Արա Գեղեցիկ-Շամիրամ ավանդագրույցը, Հայաստանն անվանում է **das Uassisclie Land der Semiramis-Erinnerungen** - «Շամիրամական **հուշերի դասական** երկիր*»[160]: **Լեհման Հաուպտի** մերժել է Սամմուրամաթին բաբելական ծագում վերագրելու վարկածը: Այլերսի ենթադրությունը տանում է նրան ավելի շուտ դեպի հյուսիս, դեպի **Հայկական լեռնաշխարհը**. «*Սամմուրամաթին չէր պատշաճում նրան վերագրվող գործերը, սակայն նրա՝ կնոջ համար եզակի դիրքի բերմամբ արդեն նրա շուրջը կարող էին հյուսվել զանազան պատմություններ, որոնք հետագայում, գունազարդվելով, այն ճոխ առասպելների տեսքը պիտի ստանային, որը առկա է անտիկ և հայ գրականության մեջ*»[161]: Վերջին Շամիրամը իսկապես էլ հերթական[162] Նինոսի՝ **Շամշի-Ադադի V**-ի (մ. թ.ա. 823-811) կինն էր, ապրել էր առաջին Շամիրամից 950 տարի հետո՝ Վանի թագավորության **Մենուա արքայի** օրոք: Դիոդորի ներկայացրած Շամիրամի պատմությունը ընթերցելիս անգամ, ստացվում է այն տպավորությունը, որ Շամիրամը Բ «**ծպտված Շամիրամ**» էր, սակայն որը ընդամենը փորձել է արշավել Հայաստան, սակայն ասորեստանյան բանակները բոլոր ուղղություններով ջախջախիչ պարտություն են կրել **Վանի Արարատյան արքա Մենուայից**:

Այլ իրավիճակ և իրադարձություններ է ներկայացրել Խորենացին վավերագրելով մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 20-18-րդ դարերի **հայ-մեդական** (ավազակային ցեղախմբերի), **հայ-ասուրական**, և **հայ-խեթական** հակամարտության պատմագրությունն և պատերազմների տարեգրությունը: Խորենացին հիմք ունենալով **Նինվեի դիվանների** վավերագրերը, հայերի և ասորաց արքայի, հայերի ու խեթերի արքայի միջև ծավալված անողոք հակամարտության և պատերազմների հաղթող կողմ է վավերագրել Հայքի թագավորությունը և նրա առաջորդՀայկյան Արամին:

Հարց է ծագում, թե ինչպես կարելի է այս ամենը ստուգել և հստակեցնել երեք երկների պատմական աղբյուրներով և վավերագրերով, եթե հայերի դեպում **կա Խորենացու պատմագրությունը**, բայց **չկա հնագիտական տվյալներ**, իսկ ասորաց և խեթական կողմից կա **սեպագիր արձանագրություններ**, բայց **չկա վերջիններիս պատմագրություն**[163]:

Պետք է նախ վերցնել Աշշուրի Շամշի-Ադադի Ա թողած սեպագիրը և այն համեմատել խեթերի արքա Անիտայի թողած արձանագրության հետ: Դժվար չէ նկատել, որ դրանք տարբեր երկրների արքաների և տարբեր լեզուներով ստեղծած, բայց սեպագրերի ոճով, կառուցվածքով և բովանդակությունը միևնույն «**տրաֆարետն է**»՝ փոխված են միայն արքաների անունները և բնակավայրերի անվանումները:

Սակայն էական է, որ երկու երկրների՝ Նինոսի-Շամշի-Ադադ Ա և Պայապսիս Քաղյան-Անիտայի թողած արձանագրությունների «տարեգրությունները», համամատության մեջ դրվեն **երրորդ երկրի՝ Արմենիայի** մասին Խորենացու 2-րդ հազարամյակի 19-18-րդ դդ **Հայկյան Արամի տեղեգրությունների** հետ, և իսկույն ակնհայտ կդառնա ասորաց արքա Նինոս-Շամշի Ադադ Ա և Անիտա- Քաաղյանի պատմաշինության կեղծիքը:

---

[160] **Վիլհելմ Այլերս** (մեջբերումը՝ **Գ. Խ. Սարգսյանի** հոդվածից է):

[161] **Գ. Խ. Սարգսյան:** Մովսես Խորենացու «**Հայոց պատմությունը եվ սեպագրական աղբյուրները**»:

[162] **Թ. Արծրունի**, **Անանուն Նինոս** Նինոսի՝ Քամի սերնդից լինելը, հավաստում է, որ նրա կին **Դիոնեսիան**, որն իր պապի անունով **Սեմիրամ** է անվանվել, գլուխ է բարձրացրել Նինոսի դեմ: **Նինոսը չի հարձակվել Հայաստանի վրա**. այդ քայլը կատարել են Շամիրամն ու Նինվասը:

[163] Ասումնասիրողները միակարծիք են, որ **կորած է Բերոսոս** քաղդեացու «**Բաբելոնապատում**» գիրքը:

Ինչևէ, ունենք այն, ինչ ունենք: Նինվեն և խեթերը իրեն «հաղթական արքաների» նվաճումների պատմագրությունը, այն է՝ արձանագրությունների միջոց «**խոսեցրել են**» (էական չէ՝ **կեղծ**, թե իրական նվաճումներ), երբ **հաղթանակները իրեն կողմն էր**:

Բայց ահա մ.թ.ա. **2-րդ հազարամյակի 18-րդ դարից 1-ին կեսից լռել են ասորական**, իսկ 18-րդ դարի երկրորդ կեսերից՝ **խեթական աղբյուրները**: Ո՞րն է պատճառը: Դժվար չէ ենթադրելը, որ **բացահայտ հաղթանակները տոնել է հայկական կողմը**, հանձինս Հայկյան Արամի: Անզեն աչքով կարելի է տեսնել ակնհայտը, երբ բացակայել են ասորական որևէ տարվա և դարաշրջանի արձանագրություն, ուրեմն հայ-ասուրական հակամարտության մեջ **հաղթանակները տոնել է հայկական կողմը**:

Փաստագրենք նաև, որ 20-րդ դարում Միջագետում հայտնաբերված արձանագրությունները և դրանց ուսումնասիրությունները, քայլ առ քայլ բացահայտում են մ.թ. ա. 2-րդ հազարամյակի 27 - 12-րդ դարերի ամբողջական պատկերը: Ընդսմին, շումերական և աքքադական աղբյուրները փաստագրել են, որ դեռ մ.թ.ա. 27-24-րդ դարերում կազմավորված էր **Այր-Արատ** պետական-քաղաքական միավորումը: Ըստ քաղաքագիտական բառապաշարի, շումերա-աքքադական աղբյուրներում հիշատակվող **Արատտան** հանդիսացել է «**Երկրային դրախտը**», քարտեզագրվել է որպես «**Արամի Միջագետքը**», իսկ քաղաքական կարևորությամբ՝ Միջագետքի և Հին Արևելքի «**աշխարհաքաղաքական խոշոր խաղացողն էր**»՝ աշխարհակալություն ունենալով **Միջագետքի, Արևելքի** և դեպի **Եգիպտոս** տանող ճանապարհների[164] վրա:



Հայաստանը ըստ Աշխարհացույցի

[164] **Հ. Ս. Մարտիրոսյան**: **Հայոց հնագույն պատմության էջեր**: **Ավանդական պատմագրության տվյալները և հիքսոսները**:

ԲԱԺԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆՆԵՐ

Առաջին Հայկյանների կառավարման ժամանակաշրջանը սահմանելիս, անհրաժեշտ է **Հայկյան** և **ոչ հայկյան** առաջնորդների գահակալման ժամանակաշրջանը համադրել հարևան գահակալների ժամանակացանկերի հետ.

3-րդ հազարամյակի 25-րդ դար: Հայկի և Արևելքի տիրակալ Բելի միջև[165] աշխարհաբաժանման պատերազմ: Տեղը՝Հարք գավառ, Հայոց Ձոր:

Հայկը հաղթում է Բելին:

Հայկ նահապետ - մ.թ.ա. 2492-2411: (ըստ **Ղևոնդ Ալիշանի** օրացույցային-ժամանակագրական կարգի):

Բել - Նեբրոֆթ: Արևելքի տիրակալ, սպանվել է մ.թ.ա. 2492 թ:

Հայկյան տոմարի սկիզբը՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2492 թվական: Հին Արևելքի աշխահաբաժանման համար պատերազմ Հայկի և Բելի միջև: Հայկը սպանում է Բելին, Հայկը և հայկյանները հաստատվում են Հայկական լեռնաշխարհում, լեռնաշխարհի հարևան տարածքներում և Հյուսիսային Միջագետքում:

Բելի ժառանգերին մնաց Հարավային Միջագետքը:

Արատտա: Հայկի մահից հետո իշխանության անցան ոչ Հայկազունիներ՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2411- 2109 թթ:

Սարգոն Աքքադացի - մ.թ.ա. 2316-2261[166] և Նարամ-Սուենի - մ.թ.ա. 2237-2200: Սեմիտական ծագում ունեցող ցեղերի հաստատումը միջագետքումը պատերազմները Արատտայի դեմ

Արատտա: Էրիդապիզիր քուրմ - մ.թ.ա. մոտ 2205 - ուղ. 2199: Աշխարհում առաջին անգամ ստեղծվել էր հեծելազոր զորատեսակը: Միջագետքի քաղաքները ապստամբեցին Նարամ-Սուենի դեմ և օգնություն խնդրեցին Արատտայից: Հայկական հեծելազորը անցավ հարձակման և պարտության մատնեց թշնամուն: Միջագետքը ընկավ Արատտայի գերիշխանության տակ: Ստեղծվեց Հայկական **Առաջին համաշխարհային գերիշխանությունը**, որը տևեց 91 տարի 40 օր[167]:

Տիգրան Հայկի տոհմից[168], մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2109-2108, վերականգնում է հայկյանների իշխանությունը[169]:

Արամանյակ - Արմենակ Տիգրանի որդի - մ.թ.ա. 2026-1980: Հաստատվում է Այրա-

---

[165] **Հայկ և Բել**: Հայկ կյանքի հայտնի դրվագներից է նրա պատերազմը բաբելոնյան առաջնորդ Բելի դեմ: Բաբելոնյան աշտարակաշինության խառնաշփոթի ընթացքում Տիտանյան Բելը ինքն իրեն հռչակում է աշխարհակալ և պարտադրում այլոց պաշտել իրեն: Սակայն Հայկը չի ճանաչում Բելի ինքնակոչ իշխանությունը իր հարազատների և ցեղակիցների վրա: Ըստ Մովսես Խորենացու՝ Հայկը երեք հարյուր այլ ցեղակից ընտանիքների հետ միասին վերադառնում է Հայք և բնակություն է հաստատում Տուրուբերանի Հարք գավառում: Բելը, դառնալով Ասորեստանի տիրակալ, մեծ բանակով ներխուժում է Հայք: Վանից հարավ ընկած Հայոց Ձոր կոչվող գետի հովիտում Հայկը և Բելը իրենց բանակներով դուրս են գալիս միմիանց դեմ: Ինքը Բելը խուսափում է մարտից, փոխարենը բարձրանալով մի բլրի վրա, որտեղից հետևում է մարտին: Ճակատամարտի ամենաթեժ պահին, Հայկը նկատում է Բելին բլրի վրա, անցնում է գետը և եռաթև նետով նետահարում է նրան:

[166] **Валерий Гуляев**. Шумер. Вавилон. Ассирия: 5000 лет истории.

[167] **Միներ Հակոբյան**..Հայ ժողովրդի ռազմական տարեգիրք:Գիրք առաջին:

[168] **Միներ Հակոբյան**..Նույն տեղը:

[169] **Միներ Հակոբյան**: Մոռացված մի արքայատոհմ: Հայկ նահապետ:

ռատ աշխարհում[170]:

Արամայիս որդի- մ.թ.ա. 1980-1940: 1980 թ. Հիմնադրում է Արմավիրը[171]:

♣ Արամ Հայկյան՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 19-18-րդ դդ:
(Ըստ Մ. Չամչյանի՝ մ. թ. ա. 2-րդ հազարամյակի 1827 – 1769 թթ.):
Հայ-ասուրական հակամարտություն: Հայկյան Արամը կասեցրեց ամորեա-սեմի-տական ցեղախմբերի տարածվել Հայկական լեռնաշխարհում և Կովկասում[172]: Հայկական 2-րդ աշխահակալության ստեղծումը – մ.թ.ա 1827-1743 թթ:

♣Էլամ[173]: Ճոշի Սիմաշկայի արքայատոհմ:
♣Մարա-մեդիական ցեղային միության առաջնորդ Նյուքար Մեդիացի[174]:
Կառավարման տարիները՝ անհայտ է, մահվան է դատապարտվել մ.թ.ա. 1827 թ:

♣Ասորեստան[175]: Էրիշում 2-րդը (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1818-1813 թթ)[176]:
(Խորենացու մոտ Նինվեի տիրակալ – կառավարիչ Արշամ-Բ/Վ/արշամն է):
Մ.թ.ա. 1819 - 1781 թթ Նինվեի իշխանությունը զավթում է ամորացիներից սերվող Ճամշի – Ադադը Ա (մ. թ. ա. 2-րդ հազարամյակի 1807 - 1774 / 1813-1781)[177]:
Իշմե-Դագանը (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1781-1769):
Սեմմիրամաթ - Ճամիրամ[178]:

Աբրահամ - ծն. մ.թ.ա. 2015 թվ[179]: Աստվածաշնչյան տարեգրության[180] [181] համաձայն Աբրահամի գործունեության թվականներն են՝ մ.թ.ա. 1948 - 2123, ըստ Գիգորյան օրացույցի՝ մ.թ.ա. 1813 –1638 թթ[182] (հաշվարկը արված է համաձայն «երկրորդ Աստվածաշնչյան ժամանակագրության»[183]):
Աբրահամ: Նոյի 10-րդ սերուդն էր, ծնվել է մոտ 1996 թ, մահացել 1821 թվ[184]:

♣Բաբելոն[185]: Ափիլի-Սին- մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1830 -1813:
Սին-մուբալլիտ - մ.թ.ա. 1812- 1793:
Համմուրապի - մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1792-1750:

♣ Եգիպտոս[186]: 12-րդ թագավորության փարավոն Ամենխենտեմ Գ և Մենուսենտա Գ:

---

170 Մ. Խորենացի: ՊՀ: Էջ՝ 91:
171 Հայ ժողովրդի առաջնորդները (ինտ. ֆորում):
172 Ս. Ասմարյան: Հայկյան Արամ: Գիրք երկրորդ:
173 Էլամ: Հոդված:
174 Մ. Էմին: Ենթադրում էր, որ Մադես անունը նշանակում է «մեդացի»:
175 Ասորեստանի պատմությունը, հոդված:
176 Մ. Հակոբյան: Հայկազունիներ. Մոռացված մի արքայատոհմ: Արամ 1 Մեծ: Միքայել Չամչյանի բերած Հայկազունիների արքայացանկը Չամչյանը կազմել է հիմք ընդունելով հիմնականում Մովսես Խորենացու, մասսամբ էլ այլ (հնարավոր է՝ մեզ անհայտ) պատմիչների տվյալները:
177 Տարեթվերի տարբերությունը՝ աղբյուրներին է:
178 Ըստ Ե. Կեսարացու՝ Ճամիրամը Աբրահամի ժամանակիցն էր:
179 ըստ Եվսեբիոսի В "Хронике" Евсевия Кесарийского период от сотворения мира до Рождества Христова насчитывает всего 5199 лет
180 Библейская хронология, http://ru.wikipedia.org/
181 Գրիգորյան օրացույցով՝ http://ru.wikipedia.org/
182 Ըստ գրող, պատմաբան Կ. Մուսայելյանի /ԱՄՆ/ Արամը երկու տարով մեծ էր Աբրահամից: Այսինքն, Արամը ծնվել է մ.թ.ա. 2017 թվականին, ինչն, ըստ Չամչյանի, Տիգրան Ա Հայկազունու կամ նրա որդի Արմենակի կառավարման տարին է:
183 Т. В. М. фон Беркель. Вторая библейская хронология.
184 Иосиф Флавий. Иудейские древности:
185 տես՝ Բաբելոն /ռուսերենով/ Хаммурапи.
186 Տես՝ Եգիպտոս /ռուսերենով/:

♣ Խնթական քաղաք պետությունների Տիտանյան Պայապսիս Քաղյան արքան, ըստ Անիտայի գրվածքների (խնթական արձանագրության)՝ խնթական Անիտա արքան է (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1810-1790)[187]:

♣ Անուշավան Սոսանվեր: Հայ առաջնորդ զորավարներ-հիքոսների և հայ արիների արշավանքների սկիզբը- մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 17-րդ դար[188]:

♣Հիքսոսների արշավանը Եգիպտոս:

Արատտայի ««Ոչ Հայկազունիների[189]» 300-ամյա իշխանության առաջնորդ - նահապետների հեթականությունները հայտնի են շումերա-աքքադական սեպագրերից, իսկ Մ. Խորենացու և Սեբեոսի հայտնած տվյալների հիման վրա, Հայք - Արատտայի Հայկազունիների «օրացույցային-ժամանակագրական կարգը (ժամանակագրությունը, հեղ.) շարադրել են Միքայել Չամչյանը և Ղևոնդ Ալիշանը»[190 191]:

Ըստ Խորենացու, ս. գրքի ազգաբանությունների ճյուղագրությունների մեջ Քամի սերունդից Նինոսի, ինչպես նաև Հաբեթի սերունդների «ազգաբանությունը…ըստ մեր (հայերեն) թարգմանության ոչ մի տեղ չի գտնվում»[192], և մեղադրում է նրա հեղինակներին. «ս. գիրքը յուրայիններին զատելով իբրև իր սեփական ազգ՝ մյուսների լքեց, իբրև արհամարելի և իր կողմից նշմարվելու անարժան»[193]:

Պատմահայրը բողոքում է, որ ս. Գրքում (Մովսես մարգարե, երևի Հնգամատյանի[194] հեղինակը[195]) բաց է թողած նաև Եգիպտոսի ճյուղագրությունը, որը պետք է լիներ Քամի սրունդից Մեստրայիմը: Սրա սերնդակից էր Նեբրոֆթը, «որ Բելն է» (Հայկի ախոյանը):

Հայ պատմագրության մեջ Խորենացին առաջինն էր, որ «*ներմուծել է համաժամանակյա ժամանակագրության գաղափարը*[196]»: Պատմահայրը հավաստի է համարել «երեք ցեղերի շարքի հավասարությանը մինչև Աբրահամը, Նինոսը ու Արամը»:

Հարց է առաջանում, եթե ս. գիրքում ոչ մի տեղ չի գտնվել Հաբեթի «ազգաբանությունը», ապա ինչ հավաստի աղբյուրներից է օգտվել Պատմահայրը վերականգնելով «Հաբեթի սերունդների հավաստի ազգաբանությունը»:

Արդո՞ք այդ աղբյուրը Մար Աբասն էր, որին հայագիտական շրջաններ գրկել են վստահության «քվեից»:

Ո՞չ, «Հաբեթի սերունդների հավաստի ազգաբանությունը» տվյալները «ասում է …շատ բաներում վստահելի Աբյուդենոսը»: Թե ո՞վ էր այս Աբյուդենոսը,- պատասխանը գտնում ենք Հրանտ Ք. Արմենն բացատրության էջերում. «Աբյուդենոսը գրել է Ասորեստանի և Քաղդեայի պատմությունը (թարգմանել է հունարեն) և նվիրել է Ալ. Մակեդոնացուն: «Աբյուդենոսը Ասորեստանի թագավորները կթվարկե Բելեն մինչև Նինոս, որ կգտնվի թե Եվսեբիոսի և թե Խորենացիի մեջ: Սակայն մեր պատմահայրը միևնույն Աբյուդենոսեն

---

[187] Մ. Հակոբյան, նույն տեղը:

[188] Մ. Հակոբյան: Հայկազունիներ. Մոռացված մի արքայատոհմ: Անուշավան Սոսանվեր:

[189] Ոչ Հայկազունիները Հայկ նահապետից առաջ և Հայկ նահապետի մահվանից հետո Արատտայում կառավարող քրմերն էին, որոնք իշխանության եկան հեղաշրջման միջոցով: Իշխանության գլուխ կանգնեց Երկրի գլխավոր քուրմը, հայկազունիները գլխավորեցին երկրի բանակը:

[190] Lion: Հայ ժողովրդի առաջնորդները:

[191] Ս. Ասմարյան: Պ. Հերունի հայկյանների տարեգրությունը շարադրել է ըստ Ղ. Ալիշանի, Մ. Չամչյանը տեղյակ չլինելով ոչ հայկյանների մասին, Հայկյան Տիգրանի կառավարման ժամանակաշրջանը համարել է Հայկ նահապետի կառավարման ժամանակաշրջան, ինչը ճիշտ չէ:

[192] Մ. Խորենացի: ՊՀ: Էջ՝77:

[193] Մ. Խորենացի: ՊՀ: Էջ՝ 75:

[194] Հնգամատյան: Հին կտակարանի առաջին հինգ գրքերը: Վերագրում է Մովսես մարգարեին: Իրականում ավանդությունների հավաքածու է՝ ստեղծված մ. թ. ա. IX—VII դդ. (խմբագրել է, Եզրասը մ. թ. ա. V դար)

[195] Ранний Ашшур. Древнейшая Ассирия и Митанни. Ишшаккум-правител Шамшиадада I (конец XIX — начало XVIII в. до н. э.).

[196] Մովսես Խորենացի, կենսագրական:

կառնե հայերու ալ ցանկը, Հայկեն մինչև Արա գեղեցիկ, որ Եվսեբիոսը չունի: Խորենացին կհավելու թե, «Եվ սա ճշմարիտ է, ոչ ոք չկասկածի, որովհետև այս բաները մեզ պատմում է շատ բաներում վստահելի Աբյուդենոսը»: Եվ հայ (հայ արքաների. հեղ.) ցանկը տալե վերջ կգրե. «Այս բանն ասում է Աբյուդենոսը իր առաջին առանձին մանր ազգաբանության մեջ, որ վերջերս ոմանք դեն ձգեցին»:

Սրանց վկայում է և Կենփաղիոնը, որը իր գրքի գլուխներից մեկում հիշատակել է հետևյալը. «Մեր աշխատության սկզբում սկսեցինք մանրամասն գրել բոլոր ազգաբանությունները արքունական դիվաններից առնելով, բայց թագավորներից հրաման ստացանք՝ հներից բաց թողնել աննշան և վատասիրտ մարդկանց հիշատակությունը, այլ հիշել միայն քաջ, իմաստուն և աշխարհակալ նախնիքներին և մեր ժամանակն իզուր չվատնել»:

Պատմահայրը «Հաբեթի սերունդների հավաստի ազգաբանությունը» վերականգնելու գործում հիշատակել է Ոլիմպիոդորոսին, նրան համարելով «իմաստուն և բազմահմուտ անձ»: Խորենացին մեծ տեղ է տվել Անգիր հին զրույցներին[197], գրելով, թե Արամյան ազգի ծերունիները փանդիռների նվագակցությամբ **ցուցքերի և պարերի երգերում հիշատակում են այս բաները**:

Խորենացին հիշատակել է Բարդածանի (Բար-Դայծանը) անունը, վկայելով, որ նա է գրել «մեհենական պատմությունները», այն էլ հայերեն (Խորենացու ցուցմամբ, որպես «մեհենական պատմությունների» սկզբնագրի լեզու, ըստ երևույթին, «հայերենն էր»[198]):

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍՈՒՄ

Խորենացին հստակ է սահմանել. «Բելի…ժամանակակից էր մեր նախնին՝ Հայկը»:

Պատմահայրը ըստ էության «ազգաբանության շարի» հաջորդ անձեր է համարել եբրայեցիների, ասորաց և հայոց երեք նահապետներին. «Բազմաթիվ գրվածքներից ընտրելով հավաստին, որքան կարողացանք, նշանակեցինք Նոյի երեք որդիների սերունդները մինչև **Աբրահամը**, մինչև Նինոսը, մինչև Արամը, որին կարծում եմ, խելացի մարդկանցից **ոչ ոք չի հակառակի**, եթե միայն մարդ չցանկանա պատմության ճիշտ կարգը խանգարելով, ճշմարիտ պատմություններն առասպելների վերածել»:

Գոյություն ունի Արամ - Արմենոսի[199] մասին ավելի «հին հղում», որի հեղինակը Ստրաբոնն է: Հայտնի չէ, թե ինչու Խորենացին չի հիշատակում Արմենիայի մասին Ստաբոնի ընդարձակ տեղեկությունները: Դժվար չէ կռահել, որ Խորենացին չի վստահել հույն պատմիչ-աշխարհագրագետի հիմքից զուրկ հաղորդումներին, ավելին, նրա Արմենոսի մասին հաղորդում, ամենայն հավանականությամբ, Խորենացին համարել է հայ ազգի նկատ-մամբ մեծ վիրավորանք, և չի տվել նրա անունը:

Փոխարենը Ստրաբոնին վստահում են բոլոր նրանք, ովքեր նպատակ են դրել հայերին համարել եկվորներ, և, հարկի-անհարկի, հիշատակում են, թե ինչ է գրել Հայաս-

---

[197] **Գ. Խ. Սարգսյան**: Մովսէս Խորենացին եվ նրա Հայոց պատմությունը: … **մեծագույն պարգևներից** մեկին, որ արել է Խորենացին իր ժողովրդին, պահպանելով իր երկի էջերում նմուշներ նրա հնագույն հոգևոր մշակույթից, հեթանոսական կրոնից և ժողովրդական բանահյուսությունից: Հայկ, Արամ, Արա Գեղեցիկ, Տորք, Աստղիկ և այլն, այս անունները և նրանց հետ կապված առասպելները Հայերի հեթանոսական կրոնի և հավատալիքների հնագույն շերտից եկող նմուշներ են, որոնք ցույց են տալիս, որ դեռևս Արամազդի, Վահագնի, Անահիտի, Միհրի և **իրանական ասված անուններ** կրող մյուս աստվածներից կազմված հայկական պանթեոնից առաջ հայերն ունեցել են մի նախնական, առավել հին պանթեոն, որը արգասիք է նրանց հնագույն ինքնատիպ մշակույթի, որը աղերսներ է դրսևորում հին արևելյան՝ **ուրարտական**, խեթական, ասուրական և այլ մշակույթների հետ: Չլիներ Խորենացին, ի՞նչ կիմանայինք մենք այդ մշակույթի մասին: … Խորենացին է, որ փրկել է մոռացության գրկից և վերադարձրել ժողովրդին:

[198] **Գ, Սարգսյան**: Նախամենսրոպյան շրջանի պատմագրությունը:

[199] **Արմենոս Թենալացի**, առասպելական արգոնավորդ, Թենալիայի Արմենիոն քաղաքից: Ըստ առասպելի, Արմենոսի ուղեկիցները վերաբնակվել են Ակիլիսենե (Եկեղիք) և Սիսպիրիտես գավառներում՝ մինչև Կալաքենե և Ադիաբենե, որից էլ ծագել է Արմենիա երկրի անվանումը: Ստրաբոնի բերած այս առասպելը հորինվել է մ.թ.ա. IV դ. վերջում, Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի ժամանակ և ըստ որոշ ուսումնասիրողների, զուրկ է պատմական հիմքից: Հունա-մակեդոնական նվաճողները Բալկանյան թերակղզուց գաղթելու առասպելներ են հորինել նաև պարսիկների, մարերի և արևելյան այլ ժողովուրդների մասին (Հայկ. Վիպիպեդիա):

տան=Արմենիայի մասին Ստրաբոնը, չխորանալով գրածի էության մեջ: Ցավոք, Ստրաբոնը դարձել է Արամի գործունեության և «ժամանակաշրջանի» պատմագրության աղավաղման և խեղաթյուրման «հիմնական» աղբյուրը: Եթե Հերոդոտը Արամին չէր համարում պատմական կերպար, Ստրաբոնը, կարծում եմ, ըմբռնել էր հայերի համար Արամ թագավորի **պատմական կերպար լինելու** հանգամանքի կանորությունը: Հակառակ դեպքում ինչո՞ւ պետք է Ստրաբոնը (կամ նրա աղբյուրը), հաստատեր **Արմենիայում Արամի** գոյություն փաստը: Սակայն Ստրաբոնը արել է մեկ «էական բացառություն»՝ ըստ Ստրաբոնի «**Արմենիա**» անունը գալիս էր Էլլադայի Արմենիոն քաղաքի **Արմենոսի** անունից: Արգանավորդ Արմենոսը մասնակցել է Յասոնի առասպելական **ոսկե գեղմը փնտրելու արշավախմբին**, հասել է մինչև Կասպից ծով, անցնելով Իբերիան, Ալբանիան, Մեծ Հայքը և Մեդիայի մեծագույն մասը:

Ըստ Սրաբոնի Յասոնն ու նրա ընկեր Արմենոսը այցելել են նաև Հայաստան, և նրանք Հայաստանը տեսել են ջրի տակ ծածկված[200]: Ըստ Ստրաբոնի, իբրև-թե **այս Արմենոսն է գտել Գայլի Դրունքը**[201], անց ու ճեղք բացել այնտեղ, որտեղից էլ ջրերը հեռացել են Արևելք: Ստրաբոնը այս **Արմենոսի** անունով է մեր երկիրը **Արմենիա** կոչել, ինչը հերքել է Ն. Ադոնցը[202]: Ստրաբոնը չունենալով որևէ պատմական հիմնավորում, Արևելքի բոլոր ժողովուրդներին, այդ թվում հայերին, վերագրում էր հունական ծագում:

«**Պետություն**» աշխատության էջերում, **Պլատոնը** (մ.թ.ա. 428/427 - 348/347 թթ.) «**մի քաջ մարդու, Արայի՝ Արմենիայի զավակի**» մասին մի լեգենդ է հիշում: Պատերազմի ժամանակ նա սպանվում է: Սպանվելուց 12 օր անց նրան մյուս սպանվածների հետ, երբ ցանկանում են այրել՝ նա հանկարծ կենդանանում է և պատմում, թե ինչ է իր հոգին տեսել «այնտեղ», երբ դուրս է եկել իր մարմնից ու մյուս սպանվածների հոգիների հոտ հայտնվել «ինչ-որ Աստվածային տեղում», որտեղ նստած «դատավորները» (աստվածները և հրեշտակները) իրենց մոտ եկած հոգիների դատն էին անում՝ քննում և համապատասխան դատավճիռն էին կայացնում. «Երբ հերթը հասնում է Արային, դատավորները նրան ասում են, **որ նա մարդկանց համար պետք է դառնա պատգամախոսն** այն ամենի, ինչ-որ այստեղ տեսել ու դատավորներից լսել է»: Արայի փաստորեն՝ **տրվել էր ոչ սովորական մարդու հոգու** (փաստորեն՝ **հավերժական կյանքով ապրող հոգու**) առաքելությունը: Ի դեպ, մեր պատմության հրատարակիչ-հեղինակները անտեսել են Պլատոնի այս փաստարկումը, այն իրական պատմագրությունից փոխակերպելով կրոնա-հավատալիքային առասպելի:

Արամի և **Արա Գեղեցիկի** «թեման» զբաղեցրել է նաև անտիկ ժամանակների այլ ուսումնասիրողներին, որոնք, հարկի, թե անհարկի, անունների և իրադարձությունների ձևափոխումներով, հիշատակել են նրանց անունները. անտիկ շրջանի երրորդ գլխավոր աղբյուրը **Հին Կտակարանն** է՝ Հին Արևելքի և Միջագետքի «պատմաշինության գագաթնակետը», որի էջերում են շատ ու շատ ժողովուրդներ, այդ թվում մեր հայրենակիցները, փնտրում են Նոյից սերվող իրենց արմատները:

Անշուշտ, հրեա պատմիչները դատապարտելի որևէ արարք չեն գործել, բայց նրանց կողմից այն դրդապատճառները, որով ժամանակագրությունների ցանկում ներառված չեն այլ ժողովրդների պատմական անձերի անունները, ավելի քան հասկանալի են: Անտիկ ժամանակագիրությունները պարբերաբար արտագրվել կամ թարգմանվել են՝ օրինակ Հին և Նոր Կտակարանը արամեերենից՝ ասորերեն:

---

[200] Ըստ երկրաբանների **Հայաստանի լեռնային շրջանները** «ջրից ազատվել են» 15-րդ, իսկ **կենտրոնական** նահանգները՝ 9-7-րդ հազարամյակում:

[201] **Լեռնանցք** հայկական Նախիջևանում՝ 820 մ բարձր. վրա: Կապում է **Արարատյան և Ծարուրի դաշտերը:**

[202] **Ն.Ադոնց: Հայաստանի պատմություն:** Էջ՝ 316-320: Ադոնցը հերքել է Ստրաբոնի այս «վկայությունը», Արմենոսից «սկիզբ առնող» Արմենիա անվանումը համարելով **զուրկ որևէ պատմական հիմքից**: Անդրադառնալով Ստրաբոնի, ինչպես նաև Քտեսիասի-Դոդորի պատմություններին, դրանք բնորոշել է հեղինակների երևակայության արդյունք, որոնք «հիմնված էր պարսկական պալատում հեղինակի (Քտեսիասի) լսածների վրա՝ դրանք բնորոշելով որպես «հնարա՛ծ դեմքերի» մասին «հորինվածք»:

Այդ ընթացքում թե ինչ խմբագրումներ են կատարված ս. գրքում՝ միայն տեր Աստծուն է հայտնի: Ամեն մի նոր արտագրող, իրենից անկախ, ճգնել է «ճշմարտացիության և ճշգրտության» աստիճան բարձրացնել սեփական, նաև հրեա ժողովրդի պատմագրության նոյաստեղծ ակունքները: Հենց այս հանգամանքով է պայմանավորված այն իրողությունը, որ հրեա պատմիչները Նինոսին, և ոչ թե, ասենք, Եգիպտոսի փարավոններից մեկին է «բարձրացրել» Համաշխարհային ժամանակագրության օլիմպ: Առավել զարմանալի է, որ այդ գայթակղության են տրվել նաև հայ պատմիչները:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անտիկ շրջանի հրեա պատմիչ **Հովսեպոս Փլավիոսը** առանց երկմտելու, **Արամին** համարել են Նոյի սկիզբ առնող **ժողովրդագրության բուրգի հիմնական թևերից մեկը**:

Ո՞վ էր «**Փլավիոս Արամը**»: Թվում է, թե Փլավիոսի մոտ հիշատակած Արամը՝ Արամ Հայկազունին էր, քանի որ սևով սպիտակի վրա գրված է, որ այս Արամն է **Արա- Ուրոսի** հայրը, բացի դա, հրեա պատմիչը Արամի ժառանգներին հատկացվել է Հայկական լեռնաշխարհը, և տարածքներ, որոնք ընդգրկում էին Քանանից մինչ Միջագետք, Միջագետքից՝ Հնդկաստան, Հնդկաստանից՝ Աֆղանստան, Աֆղանստանից մինչև Կովկասի հյուսիսային շրջանները: Ահա հեղինակի «**Հրեական հնախոսություն**»[203] գրքից Արամին նվիրված հատվածը ամբողջությամբ: «Իսկ Նոքոսի (Նոյի) երրորդ որդին՝ Սեմը, ունեցավ հինգ զավակ, որոնք բնակեցրել են Ասիան: **Արամեացիներին** տիրում էր **Արամ(ոսը)** [204], որոնց հելլենացիները սիրիացիներ կոչեցին… Արամ(ոսի) զավակները **չորսն էին**, որոնցից **Ուսեսը** հիմնում է Տրաքոնիտեսը և Դամասկոսը, որ գտնվում է Պաղեստինի և Կիլե-Սիրիայի միջև. **Հայաստանը** (հաստատեց) **Ուրոսը**»: «Միջնադարյան հեղինակ դոն Իցհակ Աբար-բանելը պնդում էր, որ հայերը ծագում են **Հուդից**, որը **Արամի որդին է**, իսկ **Արամը** Շեմի (Սիմ) որդիներից մեկն է[205]: «Աստվածաշնչի հեղինակները տատանվել են, թե ու՞մ համարել հայերի նախահայր՝ **Հուսի՞ն**, թե՞ Եմուդին: Հրեական հին հեղինակները հակված են հայերի երկիրը նույնացնել **Ուզ երկրի** հետ, որը այժմ ավելի հայտնի է որպես հեքիաթների կախարդական **Օզ** երկիր, իսկ միջնադարյան հեղինակները՝ **Ամաղեկի** հետ» [206]:

Հայերեն Աստվածաշնչում՝ **Հուսն** է՝ «**Արամի** որդիներն են Հուսը, Եմուդը, Գաղերն ու Մոսոքը»: Հին Կտակարանում պահպանված Նոյի այս ժառանգների գոյությունը, հրեա տարեգիրները ներկայացրել են որպես **երկրորդ Արամ** կամ **սեմական Արամ**:

Ակնհայտ, որ կա **երկու ծագումնաբանությունը**, երբ արամներից մեկը Հայկազյան է, իսկ երկրորդ Արամի համգամանքների բերումով, մոռացության է տրվել:

Ըստ հայ պատմիչների, հայ ժողովուրդը սերում է **Նոյի Հաբեթ որդուց**[207]: Հիմք ընդունելով Աստվածաշունչը և պատմական այլ աղբյուրներ՝ Մովսես Խորենացին «Հայոց պատմության» մեջ ներկայացնում է Նոյի և նրա որդիների ազգաբանությունը՝ **Հաբեթի ճյուղը հասցնելով մինչև Արա Գեղեցիկ**:

Թերևս Արամ ասելով, Փլավիոսը նկատի է ունեցել **Արմենակ** կամ Արամանյակ նահապետին. «*Հայկը երկար տարիներ Հայքում ապրելուց հետո մեռնում է, իր ամբողջ ազգը հանձնելով **Արամանյակ** որդուն:Արամանյակը իր եղբայրներից երկուսին՝ **Խոռին** և **Մանավազին**, ինչպես և Մանավազի որդուն՝ **Բազին**, թողնում է Հարքում: Մանավազը*

---

[203] **Иосиф Флавий.** Иудейские древности. Книга первая. Глава шестая.

[204] Ռուսերենով (տես՝ 230 հղումը)՝ **Արամ է**, հայերենով՝ թարգմանել են **Արամ(ոսը)**:

[205] **Աստվածաշունչ: Հին Կտակարան:** Ծննդոց. 20- 22-23:

[206] **Վարդան Ջալոյան: Հայերը և ամաղեկները**:

[207] Հաբեթ: «**Հաբեթ կամ Յաբեթ** - ըստ Աստվածաշնչի՝ Նոյի կրտսեր որդին: Հայկական ավանդությունը նրա ավագ որդի Գամերի կրտսեր որդուն՝ **Թորգոմին**, համարում է հայոց անվանադիր նախնի **Հայկի հայրը**: Այդ պատճառով հայ մենկնիչները Հաբեթի անունով հայերին անվանում են «Յաբեթեան տոհմ»: Հեթանոսական աղբյուրներում հայտնի է Հաբետոսթե անունով (Հայ. Վիքիպեդիա):

*ժառանգում է Հարքը, իսկ որդին՝ **Բազը**, ժառանգում է աղի լճի հյուսիս - արևմտյան ափը, և գավառն ու լիճը կոչում է իր անունով՝ Բզնունիք և **Բզնունյաց ծով**»*[208]:

Բաբելոնյան պատմիչ **Բերոսոսը**[209] հայտնի է հունարենով գրված «**Բաբելոնի պատմությամբ**», ներկայացնելով Միջագետքի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև իր օրերը: Խորենացու կենսագիրները գրում են, թե Մովսես Խորենացին Եվսեբիոս Կեսարացու միջոցով ծանոթ էր Բերոսոսի երկին, բայց դժվար է հաստատել այս պնդումը, նաև չպետք է հերքել, որ Խորենացին օգտվել է **Բերոսի** բնագրից, և նրանից է վերցրել Հայաստանին և հայ-ասուրական հարաբերություններին վերաբերվող մասերը: Ինչևէ, չընկնենք ենթադրությունների հետևից, փաստագրելով պաշտոնապես հաստատված տեսակետը, ըստ որի, հայտնի չէ, թե իր պատմությունը գրելիս Խորենացին որքանով է օգտվել **Բերոսոսից**, և իր պատմության ո՞ր բաժինների համար է Բերոսոսը հանդիսացել որպես աղբյուր:

Հաջորդ կարևոր աղբյուր է հանդիսացել և հանդիսանում, **Հրեական պաշտոնական օրացույցը,** քանի որ միայն այս տոմարով կարելի է որոշել Խորենացու երեք համաժամանակյա պատմական անձերի՝ **Աբրահամի, Նինոսի և Արամի**[210] կառավարման տարիները: Այժմ միասին դիտարկենք, թե ըստ «**Աստվածաշնչյան ժամանակագրության**», երբ է ծնվել Աբրահամ նահապետը.

♣Աբրահամը ծնվել է «աշխարհի արարում»-ից (մ.թ.ա. 3760 թ.) հետո **1948 թ**:

Օրացույցով հաստատված դարաշրջանը և ժամանակաշրջանը լիովին համապատասխան են **Գրիգորյան օրացույցի մ.թ.ա. 1812** թվականին:

Եվ. Կեսարացու կողմից վերականգնված ժամանակագրության համաձայն **Նինոսը** և **Շամիրամը Աբրահամի ժամանակակիցն էին**, այսինքն, ծնվել էր մ.թ.ա. XIX դարի վերջում կամ XVIII դարի սկզբներում[211]:

Իսկ Արա՞մը: Առաջ ընկնելով փաստագրենք, որ Մ. Չամչյանի տարեգրության ցանկում, Չամչյանը ստույգ է սահմանել.

♣ **Հայկյան Արամ** կառավարման ժամանակագրությունը՝ **մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 19-18-րդ դարեր**, Արա Գեղեցիկի կառավարման ժամանակները՝ **մ.թ.ա. 18-րդ դար**:

Դժվար չէ նկատել, որ Խորենացու **Հայքի**՝ Հայկան Արամը և Արա Գեղեցիկը, և Հին Արևելքի պատմագրության գործող անձեր **ասորաց** արքան **Նինոս Ա**, նաև **ս. գրքի Աբրահամը**՝ **համաժամանակյա կառավարողներ էին**, և սխալ չէր Խորենացին, որ չունենալով հնագիտական տվյալներ, դեռ հինգերրորդ դարում **Աբրահամին, Նինոսին և Արամին** համարել է համաժամանակյա **գործիչներ**:

Քաղաքական-պետական գործիչների անունները և նրանց ժամանակագրությունները քառսի է վերածվել, երբ հույն հավակնոտ պատմիչները որոշեցին շարադրել Հին Արևելքի պատմությունը՝ բոլոր ժողովուրդների նախասկիզբը համարելով Հելլադան: Նրանցից ոչինչով հետ չեն մնացել հրեաները ու քրիստոնեա պատմիչները, որոնք Արևելքի բոլոր ոչ հրեա ժողովուրդներին որակում էին սեմիտներ:

-Թե ինչու են Հին Կտակարանի հեղինակները Հայկյան Արամին վերագրել սեմական ծագում,- նպատակն ավելի քան հստակ էր. պետք էր **Աբրահամ** նահապետին կապե՛լ Հայոց **Արամ նահապետի** պատմական ժամանակաշրջանի դեպքերի և իրադարձությունների հետ, որպեսզի փաստարկեին Աբրահամի որպես պատմական անձի լինելու հանգամանքը, և Հին Կտակարանի Ծննդոց բաժնով առաջին հրեա Աբրահամը, «վավերագրվել է»

---

[208] **Ս. Հարությունյան**: **Հայ հին վիպաշխարհ**:

[209] **Բերոսոս**, շուրջ 350/340 - 280/270 թթ. մ.թ.ա. հին հուն.՝ Βηροσσος, լատ.՝ Berossos, ակկադերեն «Բելուցուր» կամ «Բելրիուշու» անվան հելլենականացված ձև: Բաբելոնում Բել աստծո տաճարի քուրմ, Սելևկյան արքա Անտիոքոս Ա Սոտերի (մ.թ.ա. 281-261թթ.) ժամանակակից(Հայ. Վիքիպեդիա):

[210] Հեթականությունը սահմանել է Խորենացին:

[211] **Հրեական տոմար: Մասսորենոյան օրացույց:**

որպես պատմական անձ: Հրեա պատմիչներին Ծննդոց գրքով Աբրահամը առաջ են մղել Արամից՝ Արամը դառնել է «Աբրամի[212] եղբորորդին»:

Թեպետ որոշ ուսումնասիրողներ կարծիք են հայտնել, թե Խորենացին չգիտեր Հովսեպոս Փլավիոսի «Հրեական հնախոսություն» գոյության մասին, նաև Փլավիոսի մոտ ամրագրված Աբրահամի եղբորից «ծնված» Արամի և նրա որդիների գոյության «փաստագրումը»: Կարծում եմ, որ Հին Կտակարանը հայերեն թարգմանած Խորենացին, չէր կարող «բաց թողնել» նման «փաստագրումը»: Ամենայն հավանականությամբ Խորենացին «հորինվածք և զառանցանք է» համարել «Արամի և նրա որդիների՝ Աբրահամի եղբորից «ծնված»՝ Ծննդոց. 20- 22-23-ի «փաստագրումը», բայց որպես քրիստոնեա պատմիչ գերադասել է լռել, ինչպես լռել և ոչին չի գրել մոռելանդ ջարդարար-քրիստոնեաների կողմից հայոց 3,5 հազարամյա հեթանոսական մշակույթը ոչնչացման առթիվ:

Մյուս կողմից, թե հին տարեգիրները, թե ներկա ժամանակագիրները, հրեաաստվածաշնչյան ժամանակագրությունները[213] համարում են ապակողմորոշող փաստարկումները, որի հիմնական աղբյուրը Եվ. Կեսարացի էր: Նա հարկ չի համարել նշել, թե ինչ պատճառով է անտեսել Փլավիոսի՝ Նոյից ուղիղ գծով «հարազատ սերունդ»[214] հանդիսացող Արամին, և ինչու են Արամին՝ Աբրահամից հետ մղել յոթը սերունդ[215] [216], «փաստագրելով», թե Արամը Աբրահամի եղբորորդին էր: Ռուսական, նաև ոչ հրյա ծագումով հետազոտողները գտնում են, թե Ծննդոց բաժնի «հատուկ անունների»[217] ճնշող մեծամասնությունը, այդ թվում Աբրահամը, միֆական կերպարներ են, ստեղծված հրեաների բաբելոնական գերության ժամանակաշրջանում, և որ Կեսարացին սխալ է հաշվել.

♣Աշխարհի արարման, Ադամի, Նոյի ժամանակաշրջանը և Աբրահամի ծնունդը:

♣ Ալեքսանդրյան 1-ին տարեգրություններում **բացակայում է Աբրահամի անունը**[218], բայց Աբրահամի անունը կա նոր հրատարակություններում, ինչը զարմանալի է, այսինքն, Աբրահամի պատմությունը խցկվել է Կեսարացու տպագիր հրատարկությունների էջերում, այն էլ 17-րդ դ վերահրատարակության մեջ,

♣Աբրահամի «պատմականության հարցում» հրեաները հղում են անում **հայկական աղբյուրներին**, իբրև-թե Աբրահամը առկա է հայոց հին պատմության էջերում, և իբրև հայերի Պատմահայրը «Աբրահամով ուղղորդվելով է» կազմել հայոց արքաների ցանկը:

---

[212] Աբրահամ նախահայր: Անունը՝ **Աբրամ**: Հոդված:

[213] **Э. Бикерман**. Հին Աշխարհի ժամանակագրություն: Հրեաների տարեգրությունը սկիզբ է ընդունել մ.թ.ա. 11-րդ դարը՝ 1020 թվականը

[214] **Գ. Խ. Սարգսյան**: Նույն տեղը: Թորգոմի, որպես հայերի նախահոր, գաղափարը, ավելի վաղ է վկայված, քան իրականացվել Է Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը: Այն առկա է արդեն IV դարի հեղինակ Եվ. Կեսարացու «Քրոնիկոնում», որտեղ կարդում ենք. Bopfajx:´. 'r\ m 'AppsviOl -«Թ»որդոմա, որից (ծագում են) հայերը»: Հայ.՝ «Թորգոմ, և ի նմանէ Հայք»:

Այսինքն, Թորգոմի հայոց նախահայր լինելու գաղափարը V դարի հայ մատենագրության մեջ ծագած մի գաղափար չէ՝ հղացած սոսկ Աստվածաշնչի թարգմանության ներքո, այլ այն գոյություն է ունեցել արդեն ավելի վաղ, նախագրական շրջանում Թորգոմայի հետնորդներն ապրում են Հայաստանում: Խեթական փաստաթղթերում Թեգարամայի տարածքը Ք.ծ.ա. 14-րդ դարում կողոպտվում է Եփրատից այն կողմ բնակվող թշնամիների կողմից: Սարգոն 2-րդի և Սենեքերիմի արձանագրություններում հիշատակվում է Թիլ-գարի-մանու մայրաքաղաքը, որը գտնվել է ժամանակակից Մալաթիայի հարևանությամբ:Հովսեփոս Փլավիոսն երկիրն անվանում է Թրուգրամա:

[215] **Հովհաննես Ահմարանյան**: …կարելի է համարել ընդունելի, որ Աբրահամի տեղաշարժը Քանաան պետք է տեղ գտներ մ.թ.ա. XVIII-XVII դդ. ընդգրկող ժամանակաշրջանում: Աստվածաշնչի եւ սեպագրական աղբյուրները՝ մ.թ.ա. II հազ. 1-ին կեսին

[216] որոշ հայ ուսումնասիրողներ «որոշել են ուղղել» Կեսարացու սխալը՝ Արամին առաջ են գցել Աբրահամ նահապետի հանդես գալու ժամանակից մի քանի տարով

[217] **Սամվել Նավոյան**: Մեկնություններ Ծննդոց գրքի վերաբերյալ: **Հովսեփոս Փլավիոս**՝ Թորգոմայի հետնորդներն ապրում են Հայաստանում:Խեթական փաստաթղթերում Թեգարամայի տարածքը Ք.ծ.ա. 14-րդ դարում կողոպտվում է Եփրատից այն կողմ բնակվող թշնամիների կողմից: Սարգոն 2-րդի և Սենեքերիմի արձանագրություններում հիշատակվում է Թիլ-գարի-մանու մայրաքաղաքը, որը գտնվել է ժամանակակից Մալաթիայի հարևանությամբ:Հովսեփոս Փլավիոսն երկիրն անվանում է Թրուգրամա:

[218] Հին Կտակարանը «բաց է թողել» հինգ տասյակից ավելի արքաների անուններ, որոնք հաստատուն տեղ ունեն Բիկերմանի ժամանակագրության ցանկում, բայց որտեղ Հայաստանի արքաների ցանկերը սկսվում է 13-րդ դարում հանդես եկած Միտանու ժամանակներից:

Այդ ամենը թողնենք Հին Կտակարանն ուսումնասիրող մասնագետներին, իսկ մենք վերադառնանք մեր հետազոտման առարկային, փաստագրելով, որ դժվար չէ ըմբռնելը այն դրդապատճառները, որ ունեցել են Աստվածաշնչի հեղինակները՝ հրեական ժամանակագրությունների ցանկում ընդգրկել և իրար կողքի համաժամանակյա գործիչներ ներկայացնել՝ Աբրահամին, Նինոսին, Արամին և Արամի որդիների անունները:

Հրեաները ունեցել են ապացուցողական վավերագիր ստեղծելու նպատակադրում, այլ կերպ ասաց, ճգնել են հիմնավորել, որ Աբրահամն ու նրա եղբայրը պատմական անձեր էին՝ Նինոսի, Արամի, Շամիրամի և Արա Գեղեցիկի ժամանակակիցներ:

Ինչևէ, մեծի առումով, ավելի քան 1800 տարի **այն ունեցել**, և դեռ ունի քաղաքական և «հոգևոր» նպատակներ հետապնդող հետևանքներ: Թեպետ մեր շատ ու շատ ուսումնասիրողներ Աստվածաշնչի Հին Կտակարանում տեսել են Հաբեթ, Թորգոմ, և Հայկ նահապետները և Հայկյան Արամի արքայական սերունդները, սակայն, ինչպես արդեն փաստագրել ենք, ճշտելով ս. գրքի «**ճյուղագրությունը**», Խորենացին բողոքում է, որ ս. գրքում «**մեր Հաբեթի սերունդները բոլորովին չկան**, և Հաբեթի[219] սերունդների բացակայող «հերթականությունը» Խորենացին ճշգրտել է իրեն՝ «**շատ բաներում մեզ վստահելի**» Աբյուդենոսի գրած Ասորեստանի և Քաղդեայի պատմությունից:

Այնուհանդերձ, մեզ դնելով միամիտի տեղ, եկեք միասին հետևենք **Աստվածաշնչյան միֆական կերպարներին**, տեսնենք, թե անտիկ գրականություն՝ հրեական «**փաստագրումների**» էջերում այսօր ինչ կարելի է գտնել Արամի և նրա սերունդների մասին.

♣. Ծննդոց 20- 22-23-ով է «ապացուցված», որ **Արամը** ուներ **սեմական ծագում**,

♣ Արամը կամ նրա ժառանգները, որ տիրել են Արմենիան՝ **հրեա էին**,

♣ Արամն էր ստեղծել արամեերեն գրերը՝ **արամեերեն գրերը՝ հրեաների գրեր են**:

Եվ. Կեսարացու երկը ժամանակագրության վերածող Ժ. Բլերի **ժամանակագրության** առաջին էջում, անակնկալ կերպով հանդիպում ենք (երևի՝ սպրդնել է) մեր Արամ Արիի անունը[220], որը «հանդես է եկել 1897- 1927 թթ[221]», բայց Արի անունով: Ժ. Բլերը սահմանել է՝ «Նինոս, Ասորեստանի թագավոր՝ 1965 – 1927»: Շամիրամը այստեղ չկա, կա Ասորեստանի թագավոր «Արին /?/ 1927-1897 թթ.», որը կառավարել է Էլամի թագավոր Հ/Խ/եղորլամիրի օրոք: Խորենացու մոտ կա **Քաղդեացիների Արիոս** անունը[222], որը մեր **Արայան Արայի** ժամանակակից էր, բայց Ասորեստանի պատմության արքայացանկում նման արքա գոյություն չունի: Աստվածաշնչյան տերեգրության նույն էջի 2-րդ սյունակում կա «Ասորեստանի թագավոր Արալի /?/ 1897-1857 թթ»[223]: Մ.թ.ա. 1827 թվականից սկսած, երեսուն տարի Ասորեստանը առաջնորդած թագավորին Բլերը տվել է Արին անունը:

Չպետք է բացառել, որ գրելով «Արի՝ Ասորեստանի արքա», Բլերը ունեցել է այլ վավերագրեր, որոնցով նշված ժամանակաշրջանը համընկնում էր Ասորեստանի վրա Արամ թագավորի հաստատված տիրապետությանը ժամանակաշրջանի հետ:

Մեր ու օտար պատմաբանները անհարկի են Խորենացուն մեղադրանք ներկայացրելը, թե ինչու է նա գրել, թե «*Այս Արամը Նինոսին ասորեստանցիներին և Նինվեին տիրելուց քիչ տարիներ առաջ*», կամ թե ինչու է Խորենացին գրել Արամը գրավվեց դաշտային Ասորեստանը բառակապակցությունը, երբ Խորենացին ոչինչով չի հաստատել Արամի կողմից Նինվեի գրավելու փաստը: Խստաբարո ուսումնասիրողները իրողությունների հերքումից առաջ պետք է նեղություն կրեն համեմատելու Եվ. Կեսարացու, նրա Նինվեն Հայկյան Արամի կողմից նվաճման մասին Խորենացուն փաստագրումը, մի կողմից, և մյուս կողմից Եվ. Կեսարացու պատմագրության հիման վրա է Ժ. Բլերի կազմած հայտնի

---

[219] **Մ. Խորենացի**: ՀՊ: Էջ՝ 79:

[220] **Ж.Блера** Хронологические таблицы. **1808:** Ասորեստանը Արի անունով արքա երբեք չի ունեցել:

[221] Մեջբերման թվականները՝ ըստ աղբյուրը:

[222] **Մ. Խորենացի**: ՀՊ: Էջ՝ 104: Դժվար չէ նկատել, որ անունը չտալով, օտարները օգտվել են Խորենացու կող - մից կազմած «**տոհմաբանական ցանկերից**»:

[223] **Ս.Ասմարյան**: Նինոս Ա - Շամշի-Ադադի Ա մահից հետո մինչ մ.թ.ա. 1700 թվականը Աշշուրում իրար են հաջորդել 10-11 գահակալներ, տես՝ Ասորեստանի պատմություն, գահացանկը:

աղյուսակը, որտեղ Արիի մ.թ.ա. 1827 թվականին Ասորեստանի արքան էր, ճիշտ այն թվականը, երբ Արամը հռչակվեց Հայքի թագավոր[224]: Ի պատիվ Խորենացու, Պատմահայրը Հայկյան Արամին չի համարել Ասորեստանի թագավոր, ինչպես հաստատագրված է Բլերի ցանկում, որի աղբյուրը Եվ. Կենսարացին էր:

Արին արքայի անունը առկա է նաև Ասվածաշնչյան բոլոր տարեգրություններում: Հնարավոր է հրեա ժամանակագիրների ունեցել են վավերագիր, որով մ.թ. ա. 19-18-րդ դարերը համընկնում է Հին Արևելքի վրա Արամ թագավորի աշխարհակալությանը (բայց այդ մասին համեստորեն լռել են): Հավելենք նաև, որ այս ամենն իրականացվել է այն ժամանակաշրջանում, երբ Արամի՝ Նինոսի դեմ մղված Միջագետքի ազատագրական պատերազմի հետևանքով, եբրայեցիները «դուրս եկան **ասորաց գերությունից**», և Ուրից տեղափոխվեցին Խառան, որը որպես բնակության վայր, եբրայեցիներին հատկացրել էր Հին Արևելքի աշխահակալ տիրակալ Հայկյան Արամը:

Եթե բացակայում են հայ - ասուրական հակամարտության և Նինոսի ջախջախիչ պարտության մասին ասուրական աղբյուրները, եթե բացակայում են հայ-խեթական հակամարտության և Քաաղյանի-Անիտային հայերին արյունակից հեթիթների երկրից վոնդելու սեպագրիրը, հենց այդ լռությունը ի ցույց դնում, որ 2-րդ հազարամյակի **19-18-րդ** դարերում Միջագետքի վրա հաստատվել էր Հայկական գերիշխանությունը:

Վկայությո՞ւն: Փստարկո՞ւմ: Հայ ժողովրդի հիշողության մեջ է պահպանվել ասորաց գոռոզ ու մեծամիտ արքայի, խեթերի՝ իրեն Արևելքի տեր հռչակած Քաաղյան-Անիտայի նկատմամբ Հայկյան Արամի տարած փայլուն հաղթանակի հիշողություններ, ինչը Խորենացու վերածվել է հանճարեղ պատմագրության:

Հավաստի չէ՞: Կա՞ մի իր ժողովուրդ որի նախնյաց պատմագրությունը չի ներկայացած ժողովրդական բանահյուսությամբ, ասքերի և լեգենդների հիման վրա: Ո՛չ, չկա՛ այդպիսի ժողովուրդ, անգամ հին հույները ու իտալացիները, որ ստեղծել են Հելլադայի[225] և Հռոմի[226] մասին «փայլուն» անցյալ պատմություն, կամ հրեաները իրենց «եզակի ու անկրկնելի» Հին Կտակարանով և Աստվածաշնչով, Ծննդոց գրքի Ադամից միչև մ.թ.ա/ 13-րդ դարը՝ ամբողջապես հիմնված է ժողովրդական բանահյուսության վրա[227]:

Հաջորդ խնդիրը և, Խորենացու Հայկի, Արամ թագավորի և Արա Գեղեցիկի պատմականության ժամանակաշրջանի վիճահարույց հարցը՝ ավելու շուտ հիմնական խաղաքարտը, Բաբելոնի հիմնադրման իրարամերժ ժամանակագրություններն են: Ովքեր չեն ալարել մեղադրել են Խորենացուն, թե նա սխալվում էր Հայկի՝ Բաբելոնի կառուցմանը մասնակցություն ունենալու հարցում: Այստեղ գաղտնիք չկա, որ այս հարցում ևս Խորենացին անտեսել է անտիկ պատմիչների պնդումները, թե Բաբելոնի հիմնադրումը կապված էր, մի դեպքում հույն պատմիչների մոտ ամրագրված Շամիրամի, մյուս դեպում Համմուրապի հետ: Պատմահայրը չի վստահել թե մեկին, թե մյուսին: Ճիշտ է, Խորենացին իր ձեռքի տակ չի ունեցել հնագիտական նյութեր և չգիտեր շումերների կողմից Բաբելոնի հիմնադրման փաստարկման վավերագիր, բայց ներկայիս հնագիտությունը ապացուցված է համարում, որ Բաբելոն քաղաքը հիմնադրել են շումերները, և Շամիրամը կամ Համմուրապին Բաբելոնի հիմնադրման հետ որևէ առնչություն չեն ունեցել:

Այսինք, միանգամայն ճիշտ էր Խորենացին, վավերագրելով Բաբելոնի աշտարակաշինությանը Հայկ նահապետի մասնակցությունը[228] [229]:

---

[224] Մ. Չամչյանը, ամենայն հավանականությամբ, Բլերից է վերցրել միայն Արիի դիմաց եղած մ.թ.ա. 1827 թվականը, ինչը լիովին համապատասխան է Արամ Արի թագավորի թագադրման համաշխարհային տարեգրություն հետ, Արամի թագավորության սկիզբ համարելով մ.թ.ա. 1827 տարեթիվ:

[225] Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, 1989-ին:

[226] Հռոմն իր անվանումը ստացել է քաղաքի առասպելական հիմնադիրներից մեկի՝ Հռոմուլոսի անունից:

[227] Տես՝ Իսրայել: Առաջին անգամ «Իսրայել» բառը հիշատակվել է Մերնեփթաղի կոթողներում, հին Եգիպտոսի տարածքում (մ.թ.ա. XIII դարի վերջ), և վերաբերում էր ժողովրդին, այլ ոչ երկրին:

[228] Պ. Հերունի: Հայոց Կենսար Հայկը: Նույն տեղը:

[229] Բաբելոնը հետազոտող գերմանացի հնագետները հիմնավորում են՝ Բաբելոնը գոյություն է ունեցել Համմուրապիից 2,5 հազարամյակ առաջ: Բաբելոն: Բաբելոնը հիմնադրել է «քաջ որսորդ» Նեբրոթը:

ԱՌԱՋԻՆ ՀԱՅԿՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկ մ.թ.ա. **2492-2411:**
Հայկյան տարեգրության սկիզբը՝ 3- րդ հազարամյակ, մ.թ.ա. **2492:**

Մ.թ.ա. **25-22** դարեր: **Աքքադա-շումերական աղբյուրներ**[230]: Հայք-Արատտայում հաստատվում է **ոչ Հայկազունիների Քրմապետության:** Հայկազունիները կորցնում են իշխանությունը, բայց պահպանում են բանակի հրամանատարության ղեկը:

Երկրի ղեկը անցնում է Արատտայի գլխավոր Քրմին:

Ոչ **Հայկազունիների** տիրապետության դարաշրջան՝ մ.թ.ա. **2411 - մ.թ.ա. 2109**[231]**:**

Արատտա-Այրարադի **Քրմապետություն** ժամանակաշրջանը՝ մոտ 300 տարի: Քաղաքական կենտրոնը՝ **Մենծամորը** և **Արծկեն**:

Մար Աբաս:

Հայոց «**ազգաբանության շարը**»՝ **Հաբեթից** մինչև **Արա Գեղեցիկ**, սահմանելու պատիվը պատկանում է Մար Աբասին, թեպետ, ըստ Սեբեոսի, այն սահմանել և վիմաքարի վրա դաջել էր **Ագաթանգեղոսը**:

Խորենացի և Սեբեոս:

Հայկ նահապետ: Բաբելոնի և Նինվեի հիմնադրման ժամանակակից գործիչ:

Ըստ Խորենացու և Սեբեոսի՝ Հայ ժողովրդի անվանադիր նախնին **Հայկն** էր: Հայկի անունով է մեր ժողովուրդը կոչվել է հայեր, լեզուն՝ Հայկի լեզու- հայոց լեզուն էր, իսկ **Հայկի երկիրը**՝ Հայք - Հայաստան:

Ըստ մի շարք ուսումնասիրողների՝ **Հայկը Հին Կտակարանում հիշատակվող՝ Արարատ պետության հիմնադիր նահապետն էր**: Խորենացին բողոքում է, որ ս. գրքում «**մեր Հաբեթի սերունդները բոլորովին չկան**, և Հաբեթի[232] սերունդների բացակայող «հերթականությունը» Խորենացին ճշգրտել է այլ աղբյուրներով:

Երկու պատմիչների մոտ բացակայում են ժամանակագրությունը:

Ըստ Խորենացու **Արամը Հայաստանի երկրորդ անվանադիր նախնին էր**[233]:

Սեբեոսը հղում է արել Ագաթանգեղոսին, փաստագելով, որ Մծբին-Մծուրնիում, քրիստոնեաների կողմից կործանած հեթանոսական տաճարի ավերակներից գտնվել է **հայոց և պարսից արքաների անուններով վիմաքար**: Սեբեոսի մոտ հիմնական գործող անձը Հայկ Նահապետն և Արա Գեղեցիկ - Շամիրամն զույգն են[234]:

Եթե Խորենացին պանծացրել է Հայկին և Արամին, ապա Սեբեոսի մոտ[235] Արամը «շարքային արքա է»: Պատմիչը ոչ մի խոսք չի գրել Արամ աշխարհակալության մասին, բայց, որպես իր կողմից ներկայացված պատմություն, ամբողջապես ներկայացնում է Շամիրամ - Արա Գեղեցիկ պատմությունը: Արա Գեղեցիկ պատմությունը ներկայացրել է որպես ավանդագրույց, ապա Սեբեոսի մոտ այն դարձել է հայոց արքաների պատմության անբաժան մասը[236]:

---

[230] **Հայ ժողովրդի առաջնորդները**: Դար Ակումբ:
[231] **Հայ ժողովրդի առաջնորդները:** Նույն տեղը:
[232] **Մ. Խորենացի**: ՀՊ: Էջ՝ 79:
[233] **Հայկազունիներ: Հայկյան Արամ թե Արրամու Որարտացի:**
Հարցի պատասխանը տալիս է Գ.Մարգսյանը:
[234] **Գ. Մարգսյան:** Նույն տեղը:
[235] **Ա. Տեր-Ղևոնդյան**: **Թվականությամբ ժամանակագրությունը հայ պատմագրության մեջ**: Սեբեոսը չի օգտագործում հայկական թվականը…ըստ երևույթին այն պատճառով, որ դեռ անշարժ տոմար պետք էր մշակել: Սեբեոսը դեպքերի նկարագրությունը տալիս է սոսկ տիրակալների տարիներով:
[236] **Սեբեոս**: : «Պատմություն»: Տարբերությունները դուրս են մեր ուսումնասիրության շրջանակներից, այդ իսկ պատճառով, դանք մենք բաց ենք թողել;

Այսպիսով:

♣ Մ.թ.ա. 3-րդ հազարայակի 25-դար:

Հայկի և Բելի հակամարտությունը; Հայկական լեռնաշխարհը և Միջագետքի իրար միջև բաժանման համաշխահային պատերազմ:

☼ Մ.թ.ա **2492** թ.[237] Հայկը հաղթում է Բելին, տիրելով Հայկական լեռնաշխարհը:

Մ.թ.ա. **2411- 2109** թթ հայկազունիները կորցնում են իշխանությունը՝ ոչ հայկազունիների **300-ամյա Արատտա-Այրարադի** Քրմապետության դարաշրջան[238]:

♣ Մ.թ.ա. **22- րդ** դար, սպարապետ **Հայկյան Տիգրան** նահապետը՝ վերականգնել է Հայկազունիների տիրապետությունը:

☼ Արամանյակ - **Արմենակ նահապետ: Մ.թ.ա. 21-20-րդ դդ**[239]: Բնակություն է հաստատում Հայկական լեռնաշխահի հյուսիսում՝ Երասխաձորում և հիմնադրում է **Հայկազունիների Արարատյան թագավորությունը**: **Արամայիս** նահապետ: **Մ.թ.ա. 1980 թ, 20-**րդ դար: Հիմնադրել է **Արմավիր** քաղաքական կենտրոնը:

☼ **Ամասիա** նահապետ: Նրա անունը կապված էր սեմիտական ծագում ունեցող ամազոնուհիների (խառվության)[240] դարաշրջանի հետ: **Գեղամ նահապետ**: Հիմնադրեց Տաճար և իր թոռան Գառնիկի անունով, այն կոչեց **Գառնին**: **Հարմա** նահապետ՝ Արմավիր տիրակալ - նահապետ՝ **Հայկյան Արամի** հայրը:

2-րդ հազարամյակի Մ.թ.ա. **19-17-**րդ դարեր:

☼ **Արամ Հայկյան** Աշխարհակալ: **Հայկազունի առաջին թագավորը** (մ.թ.ա. 1827-1769): Երկիրը մաքրել է նվաճողներից, և Հայքի մեջ միավորելով երկրից անջատված նահանգները: Մ.թ.ա. **1827-1743** թթ. **Հայկական աշխարհակալության հիմնադիր արքա**:

☼ **Արա Հայկյան=Արա Գեղեցիկ** արքա (մ.թ.ա. 1769-1743): Մ.թ.ա. 1743 թվականին պատերազմի դաշտում Հայկյան երիտասարդ արքայի մահով ավատվում է Արամ Հայկյանի հաստատած հայկական աշխահակալության **առաջին փուլը**: Հայոց հզոր տերության երիտասարդ արքայի մահը մեծ արձագանք էր գտել հին աշխարհի պատմագրության, այդ թվում ասորա-բաբելոնական գրավոր աղբյուրներում, Պլատոնի[241], հունական ավանդագրույցներում, Խորենացու և Սեբեոսը երկերում:

♣ **Արա Բ Կողմոս**, պահպանել է Հայքի անկախությունը: Ըստ մի շարք ուսումնասիրողների պատերազմ է սկսել Բաբելոնի դեմ[242]: Սակայն բաբելոնական բանակը, դաշնակցած Շամիրամի հետ, արշավել է Հայքի հարավային շրջանների վրա: Արա Բ ևս արժանացել է արքա հոր՝ Արա Գեղեցիկի ճակատագրին՝ **զոհվել է** զենքը ձեռքին:

☼ **Անուշավան արքա:** Հայկական - **Արի**-ական պետության հիմնադիր արքա: Օգտվելով Միջագետքում ստեղծված իրավիճակից **Հին Արևելքի և Միջագետի վրա է վերահաստատել Հայկական գերիշխանությունը**:

Հիմնել է արհեստական Սոսյաց անտառ՝ պուրակը, թեպետ որոշ ուսումնասիրողներ անտառի հիմնադրումը կապում են Արմենակ նահապետի հետ:

♣ Անուշավան արքայի օրոք՝ մ.թ.ա **1710 հայերը նվաճեցին Եգիպտոսը**[243],

☼1700 թվականին իրակացրեցին «**Արիական արշավանքը դեպի արևելք**[244]:

Ավարտվում է Արամ Հայկյանի կողմից Հին Արևելքի, Միջագետքի, նաև Եգիպտոսի վրա հաստատված **հայկական երկրորդ գերիշխանության**՝ մ.թ.ա. **1827-1662 դարաշրջանը**:

---

[237] **Ըստ Ղ. Ալիշանի**:

[238] **Մ. Հակոբյան**, Մոռացված մի արքայատոհմ: նաև՝ **Հայ ժողովրդի առաջնորդները:** Նույն տեղը

[239] **Հայ ժողովրդի առաջնորդները:** Նույն տեղը

[240] **Վարդան Արևելցի** «Համընդհանուր պատմություն», ռուս.:

[241] **Պլատոնը,** օրինակ, «Հանրապետություն» աշխատությունում պատմում է Արմենիոսի որդի Էրի մասին, որը վերակենդանացել է եւ վերածնվել իբրեւ հաղես:

[242] **Մ. Հակոբյան**, Մոռացված մի արքայատոհմ:

[243] **Դարեհ Ա** եռալեզու արձանագրության մեջ Եգիտոսին անվան են Արմենիա:

[244] **Մ. Հակոբյան**, նույն տեղը՝ **Անուշավան Սոսանվեր:**

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՀԱՅԿՅԱՆ ԱՐԱՄԻ ԴԻՎԱՆԸ

Հայկազունիների պետական արխիվների հավաքագրման և համակարգման, նաև Հայկազունիների օրոք տեղի ունեցած դեպքերի և իրադարձությունների արձանագրման և դիվանի պահպանման և տոմարի վարմանը կարևոր ներդրում է ունեցել **Հայկազունի առաջին արքա Արամ Հայկյանը**: Հիմնավորման փաստագրումը ակնհայտ է՝ Հին Արևելքի անխտիր բոլոր դիվան - արխիվներում, այս կամ այն չափով ու ձևերով, առկայծում է հայ-Խալդինի, Արամ, արմենները, Ար, Արա, Արմենակ, Արատտա, haj, Ayrarad, Aramlin, և այլ հայկական նախասկիզբ ունեցող անձերի ու տեղանունների հիշատակումներ: Արամը իր հերթին ստեղծել էր իրեն՝ սեփական դիվանը, մայրաքաղաքում կենտրոնացնելով երկրում եղած ցաք ու ցրիվ արխիվները: Պատմիչները մեկը մյուսին լրացնելով գրում են, որ Միջագետքի, Ասորիքի, Ալեքսանդրիայի և այլ հարևան երկրների «գրադարաններում» «հայերի մասին կային դիվաններ»:

Հայքի, այդ թվում Արմավիրի արխիվների ոչնչացման և այլ երկրներ տեղափոխելու միգրացիան սկիզբ է առել հենց Արամ-Նինոսի օրոք՝ վերջիններիս միջև առկա Արևելքի գերիշխանության հասնելու հակամարտության հետևանքով: Թե ինչպիսի ճակատագրի է արժանացել Արամ թագավորի ստեղծած արխիվներն ու գրադարանները՝ անուղղակի կերպով նկարագրել է Մ. Խորենացին. **իր ապուպապ Բելի վրեժն Արամի ժառանգներից առնելու քինախնդրությամբ, Նինոսը հրամայել էր ոչնչացնել Արամի քաջագործությունների մասին փաստագրող վավերագրերը**: Կարևոր չէ, թե ով էր այդ հանցավոր արարքի հեղինակը՝ Նինոսը, որին է Խորենացին վերագրել Արամի անունը ջնջելու և իր անունը գրելու աննախադեպ արարքը, թե Նինոսին փոխարինած Դագանը[245], կամ թե Շամիրամը, որը, ըստ Խորենացու և Սեբեոսի, ասուրական զորքերի գլուխ անցած հասել էր Այրարատ աշխարհ: Հայկազունիների Հայքի թագավորության անկախության կորստի համընթաց, Հայք-Արատտայի առաջին հայց թագավորների մասին հուշակոթողներն և մատյանները հայտնվել են Նինվեում, իսկ օրենքներ՝ Բաբելոնում: Համաշխարհային պատմագրության մեջ եզակի դեպք էր, երբ Արամ թագավորի հայկական աշխարհակալության փլգման ավարտին, Հայոց վաղնջական **ժամանակների արխիվները դարձել են պատերազմական ավարի օբեկտ**: Տեղում ոչնչացնելով Նինոսին վարկաբեկող և նվաստացնող վավերագրեր, Հայքի կենտրոնական նահանգները ասպատակող ասորա-բաբելոնական զորքը, թալանել են ոչ միայն Արամի հարուստ գանձերը, այլ որպես ավար, իրենց հետ, Նինվե և Բաբելոն են տարել Հայք-Արատտայի արխիվների ու գրադարանների հարուստ պարունակությունը՝ մեհենական մատյանները, կավե սալիկները և մագաղաթները[246]:

---

[245] **Ս. Ամարյան**: Դատելով Շամշի-Ադադ Ա փոխարինած որդու՝ Իշմե-Դագանը Հայքի նկատմամբ դրսևորած **չոգոքություն պահպանումից**՝ ագրեսիվ տրամադրության փոփոխման վարքագծից (ինչը հաստատում է Ասորեստանի պատմության 18-րդ դարի 80-50-ական թթ իրադարձությունների զարգացումները, մանավանդ նրա կողմից Հայքի դեմ որևէ պատերազմական գործողություններից **ձեռնապահ մնալուց**), դժվար չէ ենթադրելը, որ այս **նոր Նինոսը** (Խորենացին հայր և որդուն համարել է մեկ մարդ, ինչը եկել է հունական աղբյուրների սխալից) **եղել է Արամի մեծ երկրպագուն**, սակայն լսելով իր կնոջ՝ Սեմմիրամաթի և Արամին փոխարինած հայոց արքա Արայի նկատմամբ սիրահետման և **հայ-ասուրական միացյալ պետություն ստեղծելու առաջարկ-մտադրության գաղտնի առաջարկները** և իր դեմ նյութվող հեղաշրջման բոթը, **Իշմե - Դագանը թշնամացավ Արայի հետ, և հնարավոր է, որ նա է Արայից իր վրեժը լուծել է՝ ոչնչացնելով Միջագետքում Արամի կողմից կանգնեցված վիմաքարերն ու սեպագրերը**:

[246] **Բաբելոնի գրադարանից** Նինվեի պալատական գրադարան է տեղափոխվել և Նինվեում է պահվել շումերա-աքքադական գրականության, ինչպես նաև Հին Արևելքի, այդ թվում Արատտա-Հայքին վերաբերվող բազմաթիվ նմուշներ:

Ահավասիկ, Նինվեյի գրադարանում է «*մի ուշիմ Մար աբաս Կատանա անուն-նոյ*»[247] ասորին «գտել» , և Նինվեի գրադարանի[248] քաղդեա-հունական մատյաններից էր քաղել Հայաստանի և հայ-ասուրական հակամարտության մասին իրեն Պատմության անհրաժեշտ վաղնջական ժամանակների իրադարձությունների վավերագրերը:

Հայք-Արատտայի դիվան-ախիվների Նինվեում հայտնվելը **հայոց արխիվների առաջին միգրացիան էր**: Պատմիչների վկայություններից պարզ է դառնում, որ Բաբելոնի կործանումից հետո ասորական և հայկական արխիվները տեղափոխվեցին Նինվե, Նինվեից՝ կրկին Բաբելոն, Բաբելոնից՝ Պերսեպոլիս[249], այստեղից, Ես(կ)բատան, Մակեդոնացու նվաճումներից հետո՝ Անտիոք-Եդեսիա, այսեղից էլ Ալեքսանդրիայի գրադարան, որտեղ էլ դրանք, Գրադարանի հրդեհման երեք դեպքերի օրերին, դարձել են հրո ճարակ, իսկ արձանները փշրվել են թշնամու ձեռքով:

Պատմիչների վկայությունների համաձայն, հետագա դարերում հայոց արքաներից ամեն մեկը պահում էր իր դիվանը: Վերջին անգամ նման փաստագրում արել է Ագաթանգեղոսը գրելով Տրդատ արքայի դիվանի մասին: Իմ համոզմամբ դիվանը Արարատյան աշխարհի մայրաքաղաքներից **Մծբին** տեղափոխելը հայոց դիվան-արխիվների **երկրորդ միգրացիան էր**, որից հետո այն վերջին անգամ **Մծբինից Աբգար թագավորը տեղափոխել է Եդեսիան**[250] (**երրորդ միգրացիա**) և այնտեղից հայոց արքաների դիվան-արխիվների հետքերը կորչում է, թեպետ մի շարք ազնիվ վանական քրիստոնեաներ հայտնում են, թե ականատես էին այն կործանարարությանը, որ

♣ արքայական և մեհենական դիվանները համարելով **հեթանոս հայերի մատյաններ**, Հայաստանի քրիստոնեա նոր տերը՝ **լցրել էին Եփրատի ջրերը**:

Այլ էր Վանի Արարատյան (Ուրարտու) թագավորության սեպագրերի հարցը: Հնագետների կողմից ուրարտական հորջորջվող, իրականում Վանի թագավորության սեպագրերի բախտը բերեց: Դրանք չարժանան այն ճակատագրին, ինչին արժանացան նախաուրարտական սեպագրերը, մադաղաթները և մատյանները:

Գաղտնիքը մեկն է. Հայկազունիների դարաշրջանի՝ 3-2 հազարամյակի ստեղծած գրավոր և քարակերպ հուշարձաններն ու վիմաքարերը ստեղծված և արձանագրված **էին հայերեն գրանիշերով**, համարվում էի **հայկական պատմության և պատմագրության վավերագրեր**, ինչը հրեա, հայ, հույն և ասորի մոռելանդ քրիստոնեաների կողմից ենթակա էր ամբողջական ոչնչացմանը:

Իսկ Վանի թագավորության սեպագրերը համարում էին կամ **ասսուրական** կամ, ինչը իմ համազմամբ, ոչ ոք չէր կարողանում կարդալ և դրանց իմաստը չէր կարող բացատրել: Եվ քանի որ դրանք քրիստոնեաների համար որևէ վտանգ չէր ներկայացնում, դրանք մնացին անվնաս, ամբողջապես հասնելով մինչև մեր օրերը:

---

[247] **Մ. Խորենացի** , ՀՊ էջ՝83:

[248] **Библиотека Ашшурбанипала** — крупнейшая сохранившаяся библиотека древнего мира и древнейшая из всех известных библиотек. Составлялась в течение 25 лет в ассирийской столицеНиневии по приказу царя Ашшурбанипала (VII в. до н. э.) Служила также государственным архивом. После смерти царя фонды были фонды были рассеяны по различным дворцам. Обнаруженная археологами часть библиотеки состоит из 25 000 глиняных табличек с клинописными текстами. Открытие библиотеки в середине XIX века имело огромное значение для понимания культур Месопотамии и для дешифровки клинописи.

[249] **Ս. Ասմարյան:** Պերսեպոլիսը արժանացավ նույն ճակատագրին, ինչին որ ժամանակին արժանացել էր Նինվեն, երբ պարսական զորքերը գրավելով Նինվեն, կործանեցին Ասորեստանի երբեմնի մայրաքաղաքը: Պերսեպոլիսը հիմնահատակ ավերեցին հույները, այն գրավող Ալ. Մակեդոնացու հրամանով:

[250] **Ուռհա**՝ (հայկական աղբյուրներում հիշատակվում է նաև որպես Ուրհա, Օրֆա, Ռուհա Ուրֆա), պատմական քաղաք Հյուսիսային Միջագետքում, հայտնի է նաև **Եդեսիա** : Հելլենիստական շրջանում եղել է **Օսրոյենների ասորական թագավորության մայրաքաղաքը**, այնուհետև՝ **Հայոց Միջագետքիմայրաքաղաքը**: Որոշ աղբյուրների համաձայն՝ Ուռհան հիմնովին վերաշինել է **Հայոց կիսաավանդական թագավոր Աբգարը**՝ Մծբինից այստեղ տեղափոխելով իր արքունիքը: Աբգարի հաջորդ **Երվանդ թագավորը**, ըստ նույն ավանդությունների, Ուռհան թողել է Հռոմին, իսկ ինքը հաստատվել նախ՝ **Արմավիրում**, ապա՝ իր հիմնադրած Երվանդաշատում: Տիգրան Բ-ի օրոք (95-56 թ մթա) այդ թագավորությունը միացվեց հայկական պետությանը, և դարձավ հայկական մշակույթի կենտրոններից մեկը՝ 60-ական թթ (մթա) այն անցնում է Հռոմին:

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆԻ ԱՄՓՈՓԱԳԻՐԸ

Մովսես Խորենացու դեռևս հինգերորդ դարում ստեղծվել է հայ ժողովրդի վաղնջական ժամանակներից մինչև հինգերորդ դարը (այդ թվում՝ 3-2-րդ հազարամյակների առաջին հայկյանների), արքայտոհմերի պատմագրությունը:

Խորենացին շարադրել է 3-րդ հազարամյակում Հին Արևելքի ժողուրդների միջև, այդ թվում հաբեթոսյան Հայկի և աշխահակալության ձգտող Բելի միջև Հայոց լեռնաշխարհը՝ Հայկի, իսկ Միջագետքը՝ Բելի մեջ բաժանելու պատերազմի տարեգրությունը:

Խորենացին մեզ է հասցրել 2-րդ հազարամյակի մ. թ.ա. 19-18-րդ դարերի համաշխարհային բախտորոշ մրցավազքում Հայկի ժառանգներից Հայկյան Արամ փառավոր հաղթանակների պարեգրությունը.

Հայկյան Արամին և հայկական բանակներին հաջողվեց կանխել ռազմատենչ երկրների ու ցեղախմբերի կողմից հայկական տարածքների բռնազավթումները, քաղաքների և բնակավայրերի ավերն ու բնակչության գերեվարումները: Արամը ցաք ու ցրիվ հայկական աշխարհները միավորել էր մեկ միասնական պետության՝ Արմենիայի կազմում:

Ուղղակի, թե անուղղակի, կամաակամա, Խորենացին վավերագրել է Հայկական միասնական պետության առաջնորդ Հայկյան Արամ թագավորի բացառիկ դերը հայոց պատմագրության մեջ. Արամին և նրան հաջորդած հայկյան արքաներին կամ նահապետներին, հաջողվեց կասեցնել սեմիտական, հյուսիսային և իրանական ցեղախմբերի ներթափանցումը Հայկական լեռնաշխարհ, և մ.թ.ա 19- 17-րդ դարերում (մ.թ.ա. 1827-1612) Հին Արևելքում և Միջագետքում պահպանվել կայուն խաղաղություն, իսկ Հայքի թագավորության համար կայուն զարգացում:

Խորենացու Հայկյան Արամի կեպարի, որպես հայոց ամենանշանավորի արքայի, գործունեության առանձնահատկությունն այն էր, որ Հայք - Արատտան Արամը փրկեց կործանման տանելու և այլ ժողովուրդների ցեղային ու ռազմական միությունների մեջ ընդգրկելու հիմարությունից, դրանով իսկ հայ ժողովրդին փրկելով միաձուլման ու հարևան ցեղերի մեջ ուծվելու սպառնալիքից: Որքան էլ Միջագետքի ագրեսիվ տիրակալները և Հայկազունիների ոխերիմ թշնամի քրմերը ջանացին արմատախիլ անել իրենց ոխերիմ թշնամի «Արամ թագավորի «պատմական դարաշրջանի» դեպքերի ու իրադարձությունների» մասին հիշողությունները, Հայկ և Արամ նահապետներ ծնած հայկյան ժողովուրդը իր անմահ ու անհաղթ նահապետների մասին հյուսել էր երգեր, ասքեր, առասպելներ՝ հավերժ անմահ պահելով հայկյան պատմագրության կերտող նահապետների անունները և գործերը, Խորենացու անմահ երկով այն հասցնելով մինչև մեր օրերը:

Մեծն Խորենացին Հայկյան Արամի անվան հետ էին կապում Հայկական լեռնաշխարհում Հայկական առաջին պետականության ստեղծման, արմրապնդման, հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման, ինչպես նաև հայկական քաղաքակրթության սկզբունքների հիմնադրման և տարածման պատիվը:

Փա՛ռք ու պատի՛վ, և մեր անսահման երախտագիտությունը, Հայկազունի արքայատոհմի պատմագրությունը մեզ հասցրած Մովսես Խորենացուն:

(Առաջին գրքի վերջը: Հաջորդը՝ «Աշխարհակալ ԱՐԱՄ թագավորը: Պետական - ռազմական քաղաքական գործչի կենսագրում կամ Հայկյան Արամ թագավորի դիմանկարը»

Արմավիր մարզ, Արմավիր
06 12 2013 -18 10 2014